ԼԵՆԻՆԸ

891.99-1Յ | 17388
Լ-35 | Լեռնինք հայ
Տուհկրդի ձեզ.

25/VI.55 | 11ւ

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

ՀՍԽՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

891.99-13
Լ-35

A 6218

ԼԵՆԻՆԸ ՀԱՅ ՖՈԼԿԼՈՐԻ ՄԵՋ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ

Աշխատակցությամբ
Գ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻ ՅԵՎ Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1936

Գլխ. խմբ. Պրոֆ. Հ. Գյուլիքեվխյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ Վ. Մանուկյան

▲

Պետհրատ՝ տպարան.
Գլավլիտ 314. Պատվեր 1285.
Հրատ. 1523. Տիրաժ 5000.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Լենինը հայ ֆոլկլորի մեջ» ժողովածուն մի փոքրիկ մասն է «Հայաստանի խորհրդային ֆոլկլորի» այն հարուստ նյութերի, վոր վերջին շրջանում հավաքել եր և գրի առել նախկին Կուլտուրայի Պատմության Ինստիտուտը: Ֆոլկլորային արխիվը ներկայումս պահվում է և ուսումնասիրվում ՀՍՍՀ Պատմության յեվ Գրականության Ինստիտուտի Ֆոլկլորի սեկտորում:

«Հայաստանի խորհրդային ֆոլկլորը» հավաքել և գրի յե առել Ինստիտուտի աշխատակից բանահավաք, ազգագրական ստեղծագործությունների հմուտ մասնագետ Գեղամ Թորվերդյանը:

Ժողովածուի մեջ տեղ են գտել վոչ բոլոր գրի առած նյութերը: Վորոշ ընտրություն ենք կատարել, աշխատելով լույս ընծայել միայն բնորոշն ու տիպականը: Յերգերի տարբերակները թողել ենք ապագային:

Ժողովածուի մեջ տեղ գտած նյութերը բարբառագիտության տեսակետից թերի յեն: Բանահավաքը հաճախ անտեսել է բարբառային հնչյունական առանձնահատկությունները, տառադարձել է գրական արտասանությամբ կամ բոլոր բարբառների վրա դրել է իր հայրենի պարսկահայ բարբառի կնիքը:

Ժողովածուի նյութերի ընտրությանը, խմբագրմանը, դասավորմանը, ինչպես և ծանոթագրություններին ու բառարանի կազմելուն աշխատակցել են բանահավաքն ու Ինստիտուտի գիտ. աշխատակից-ֆոլկլորիստ Արամ Ղանալանյանը:

«Ներածության» մեջ յեղած ֆոլկլորային հատվածները ռուսերենից հարազատ թարգմանել և կամ բովանդակությունը համառոտ շարադրել «Ներածության» հեղինակը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԼԵՆԻՆԸ ՖՈԼԿԼՈՐԻ ՄԵՋ

I

Ֆոլկլորը, որպես մասսաների բանավոր ստեղծագործություն, կենդանի էր, անմիջական ու հարաճուն։ Մարդկային հասարակության կյանքը՝ աշխատանքն ու պայքարը, քաղաքական ու հասարակական բախումներն ու կենսական բարիքների համար բնության դեմ մղվող կռիվը իրենց անմիջական և գունագեղ արտահայտությունն են գտել ֆոլկլորի մեջ։

Յուրաքանչյուր մարդկային խմբակցություն, համայնք, տոհմ կամ ցեղ, դասակարգային հասարակության մեջ յուրաքանչյուր դաս կամ դասակարգ ունի իր ֆոլկլորը, յուրահատուկ բանավոր մի ստեղծագործություն, որի մեջ ցայտուն կերպով արտահայտված, դրսևորված է հասարակական խմբակցության նիստն ու կացը, պայքարն ու աշխատանքը, խինդն ու վիշտը, դարերի ընթացքում կուտակված իմաստությունն ու հույզերի աշխարհը։ Եթե անցյալ հասարակական ֆորմացիաներում ֆոլկլորը գերիշխում էր հասարակության մտավոր կյանքում (անգիր շրջան) կամ նրա իդեոլոգիական աշխարհի համապատասխան հիմնական աղբյուրներից մեկն է եղել (գիր ու գրականության շրջան), իսկ շահագործվող դասակարգերի միջավայրում դարձյալ գերիշխել է, ապա մեր դարում, երբ հասարակության ամբողջ ստեղծագործ մտավոր կյանքն արտացոլված է գերազանցապես գիր ու գրականության մեջ, միայն փոքր մասն է բաժին հասել ֆոլկլորին։

Ֆոլկլորը յերկու հիմնական մասերի յե բաժանվում՝ ա. անցյալի բանավոր ստեղծագործություն, վոր բերանից բերան ավանդվելով՝ այսօր դեռ ապրում ե մասսաների մեջ, վորպես անցյալ հասարակական կյանքի գերապրուկներ, և բ. արդի բանավոր ստեղծագործություն, վոր որ ավուր ստեղծվում ե մեր աչքերի առաջ, մեր ապրած կյանքի այլ և այլ բնագավառներին նվիրված։ Մասսաները, մանավորապես աշխատավորական լայն զանգվածները, գեղարվեստական չափածո և արձակ ստեղծագործություններով միշտ ել կենդանի և անբռնազբոսիկ արձագանքել են իրենց դարի կյանքին ու պայքարին, վորը դիտել են դասակարգային տեսանկյունով։

Արդի ֆոլկլորի մեջ, բնականաբար, մեր հեղափոխական արդիականությունը մեծ տեղ պիտի գրավեր, գերիշխող պիտի հանդիսանար։ Այլ կերպ չեր կարող լինել։ Հոկտեմբերը, պրոլետարական մեծ հեղափոխությունը, հարատև դասակարգային պայքարը, կոլտնտշարժումը, կուլտուրական հոյակապ հեղափոխությունը, հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը, Ստալինը հարկավ չեյին կարող չվոգեվորել դասակարգային գիտակցությամբ առլցված, կոլտնտեսական դաշտերը հերկող սերմնացաններին, արդյունաբերական գիգանտներ կառուցող և նրանց մեջ աշխատող հարվածայիններին, դասակարգային պայքարի ռազմաճակատներում կյանքի և մահու կռիվ մղող կարմիր պարտիզաններին և կարմիր բանակայիններին. չեյին կարող ստեղծագործական նոր թափ չհաղորդել հեղափոխական մասսաներին՝ յերգելու և գովերգելու նոր դարաշրջանը, մեծ հեղափոխությունը։

Յեվ ընդհակառակը՝ դասակարգային սուր պայքարի պայմաններում, յերբ հին աշխարհը դղրդալից կործանվում ե, դասակարգային թշնամին, հակահեղափոխությունը գործադրելով պայքարի բոլոր միջոցները՝ ոգտագործում ե նաև ֆոլկլորը։

Դասակարգային թշնամին ամենուրեք մերկապարանոց չի դուրս գալիս պայքարի։ Նա ունի փորձված միջոցներ և ուղիներ ներազդելու աշխատավորական մասսաների վրա, դիմադրելու սոցիալիստական շինարարության թափին։ Դրանք գաղտնի ուղիներ են, ծպտյալ, դիմակավոր միջոցառումներ։ Ծպտյալ, դիմակավոր

հակահեղափոխության դիպուկ և սպառիչ բնութագիրն է տալիս ընկ. Ստալինը Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումում գյուղի աշխատանքի մասին արտասանած իր ճառում.

«Դասակարգային թշնամուն փնտրում են կոլտնտեսություններից դուրս, փնտրում են նրան գազանային դեմք, ահագին ատամներ, հաստ վիզ և ձեռքին կարճ հրացան ունեցող մարդկանց կերպարանքով: Փնտրում են այն կուլակին, վորին մենք գիտենք պլակատներից: Բայց այդպիսի կուլակներ վաղուց արդեն չկան գետնի յերեսին: Հիմիկվա կուլակները և կիսակուլակները, հիմիկվա հակասովետական տարրերը գյուղում,—դրանք մեծ մասամբ «հանդարտ», «քաղցրիկ», գրեթե «սուրբ» մարդիկ են: Նրանց չպետք է փնտրել կոլտնտեսություններից հեռու, նրանք նստած են հենց կոլտնտեսության մեջ և այնտեղ զբաղվում են պահեստապետների, հաշվետարների, քարտուղարների և այլ պաշտոններ...

«Նրանք յերբեք չեն ասի՝ «կորչեն կոլտնտեսությունները»: Նրանք «կողմնակից» են կոլտնտեսություններին... Այդպիսի ճարպիկ թշնամուն լավ տեսնելու և դեմագոգիայի չենթարկվելու համար պետք է ունենալ հեղափոխական աչալրջություն, պետք է ընդունակ լինել թշնամու դիմակը պատռելու և ցույց տալու կոլտնտեսականներին նրա իսկական հակահեղափոխական դեմքը»:

Ահա այդ «ճարպիկ թշնամին» է, վոր մեծ յեռանդով, հաճախ վորպես կատակ, «անմեղ» կատակ, ֆոլկլորի միջոցով սերմանում իր հակահեղափոխական գաղափարները:

Հեղափոխական ֆոլկլորի գոյությունն արդեն մի անհերքելի փաստ է: Ընդամենը մի 10—15 տարում ստեղծվել է բավական հարուստ հետհոկտեմբերյան ֆոլկլոր: Համեմատաբար նոր են սկսել հավաքել և գրի առնել: Այդ նոր ֆոլկլորից շատ բան արդեն անդառնալի կորստյան է մատնված, շատ բան էլ՝ սիրողների վոչ հմուտ և գիտակ ձեռքով է գրի առնված, բայց և այնպես ցարդ հավաքած ու գրանցածն էլ բավական են նոր ֆոլկլորի մասին գաղափար տալու համար:

«Արդեն իսկ կարելի յե հրատարակել Լենինի մասին մի պատկառելի հատոր ժողովրդական յերգերի, լեգենդների և զրույցների, վորոնք հայտնի յեն Խորհրդային Արևելքի ժողովուրդների աշխա-

տավորության լայն մասսաներին։ Այդ երգերն ու զրույցները երգվում են Լենինի և Հոկտեմբերյան հեղափոխության մասին և՛ հեռավոր հյուսիսում (օստյակներ և յակուտներ), և՛ Միջին Ասիայում (ուզբեկներ, տաջիկներ, թուրքմեններ, ույղուրներ և այլն), և՛ Կովկասի լեռներում (օսեր, կումիկներ, ավարներ և այլն), և՛ Ղազախստանում։ Ժողովրդական երգիչները՝ աշուղները, բախշիներն ու հաֆիզները տարածում են այդ երգերն աուլից աուլ, ղշլաղից ղշլաղ, գյուղից գյուղ։ Այսպես էին գրում 1930 թվին Լ. Վ. Սոլովյովն ու Ա. Մ. Արշարունին[1] ձեռքի տակ ունենալով խորհրդային ֆոլկլորի հավաքման և գրանցման մասին նախնական տվյալներ։

Վերջին տարիներս խորհրդային ֆոլկլորի հավաքումն ու գրանցումն այլևս դիպվածային բնույթ չի կրում։ Կյանքի յեն կոչված ֆոլկլորիստիկ հատուկ ընկերություններ, գլխավորապես գավառագիտական ընկերությունների և խմբակների գծով։ Մշակված են ընդարձակ ծրագրեր, կազմակերպվել են և դեռ շարունակվում են կազմակերպվել գիտարշավներ նոր ֆոլկլորը գրանցելու և այլն։ Այլևս խորհրդային ֆոլկլորի հավաքումն ու գրանցումը դադարում է անհատ ֆոլկլորիստների կամ գավառագետ-սիրողների մենավոր հետաքրքրության բնագավառ լինելուց և հատուկ ուշադրության է արժանանում պետական հիմնարկությունների և հասարակական կազմակերպությունների կողմից։ ՍՍՀՄ Գիտությունների Ակադեմիան և հատկապես նրան կից Մարդաբանության և Ազգագրության Ինստիտուտի Ֆոլկլորի սեկցիան[2] գլխավորում է և ղեկավարում նոր, խորհրդային ֆոլկլորի հավաքման և գրանցման գործը։ Ներկայումս մեր լայնատարած Միության ամեն մի հանրապետություն, ինքնավար մարզի ամենահեռավոր անկյուննե-

---

[1] Л. В. Соловьев, „Ленин в творчестве народов востока" (песни и сказания), со вступ. статьей А. М. Аршаруни, Москва 1930, էջ 7։

[2] Фольклорная секция Института Антропологии и Этнографии Академии Наук Союза ССР.

րում անգամ նոր ֆոլկլորը հատուկ ուշադրության է արժանացել։ Ֆոլկլորը ապադասակարգային և ապաքաղաքական բանավոր ստեղծագործություն չէ, որ ավանդվում է, արտացոլում է ինչ-որ հին-հին դարերի հիշատակներ, ինչպես ջանում են ապացուցել բուրժուական ֆոլկլորիստները, այլ շեշտակի ընդգծված դասակարգային և քաղաքական ստեղծագործություն։ Ֆոլկլորն անպայման դասակարգային է, ապա ուրեմն ընդգծված քաղաքական մի հզոր գործոն, որը մեծապես օգտագործվում է հակառակ դասակարգերի կողմից ստեղծված քաղաքական, սոց.-տնտեսական պայքարի, հին ու նոր կենցաղի բախման ընթացքում։

Ֆոլկլորի այդ կարևոր նշանակությունը հասկանում են կուլակային-հակահեղափոխական տարրերը նույնպես և օգտագործում են այն հեղափոխության դեմ։ Թշնամին «հանդարտ», «քաղցրիկ», գրեթե «սուրբ» մարդկանց կերպարանքով որպես բանվոր և կոլտնտեսական սողոսկելով գործարան, կոլտնտեսություն, խորհտնտեսություն, այստեղ էլ շինարարական ասպարեզում կարողանում է իր «ստեղծագործություններով», իր յուրատեսակ ֆոլկլորով ներարկել աշխատավոր մասսայի հետամնաց տարրերին հակահեղափոխական գաղափարներ, ազդեցություն ունենալ քաղաքականապես դեռ վերջնականապես ամրապնդված տարրերի վրա։ Մորթ տարրերի իդեոլոգիայի սողոսկած ազդեցությունները ուսումնասիրելու, մերկացնելու, ջախջախելու և մասսաների հեղափոխական զգոնությունն ամրապնդելու նպատակով էլ ֆոլկլորի հավաքումն և ուսումնասիրությունն ստանում է կարևոր ու խիստ արդիական քաղաքական-իդեոլոգիական նշանակություն է ստանում։

Մասսաների բանավոր ստեղծագործությունը՝ չնայած նրա խիստ դասակարգային բնույթին և քաղաքական-իդեոլոգիական նշանակության՝ նվազ ուշադրության է արժանացել գրականագիտության և գեղարվեստական գրականության կողմից։ Ֆոլկլորի նկատմամբ այդ անտարբեր և սառնամ վերաբերմունքին պետք է վերջ տալ։ Բանավոր ստեղծագործության անձեռնմխելիության սկզբունքը, որ յեռանդագին պաշտպանվում է բուրժուական ֆոլկլորիստիկայի կողմից, պետք է բացարձակապես մերժել և ակտիվ ներգործել ֆոլկլորային ստեղծագործության վրա, սրել պայքարը

ընդդեմ հակաշխատավորական բանահյուսական տարրերի և աջակցել պրոլետարական բանավոր ստեղծագործության փարթամ աճմանը։ Որպես ակտիվ ներգործության միջոցներ Համամիութենական առաջին ֆոլկլորիստիկ կոնֆերենցիան[1] առաջարկում է հետևյալները՝ ա. խիստ ընտրությամբ մասսայական յերգարանների հրատարակություն, բ. ռադիո-հաղորդում իդեոլոգիապես և գեղարվեստականորեն հարազատ և ընտիր ֆոլկլորային յերգերի, գ. ցուցադրական համերգներ և առմունքի ցերեկույթ-յերեկույթներ նվիրված ֆոլկլորին, դ. ծավալում ֆոլկլորի քննադատության մեր պարբերական թերթերի միջոցով և ե. տեղական ֆոլկլորիստների համար ֆոլկլորի հավաքման ծրագրի և հրահանգների հրատարակում։

Արդի ֆոլկլորը, մանավորապես վիպական յերգն ու «վեպը», որպես մասսաների բանավոր ստեղծագործություն, ուշադրավ է նաև գիտական թեորիայի կողմից։ Ժողովրդական վեպի ծագման մասին գոյություն ունեն բազմազան թեորիաներ, յենթադրություններ և կռահումներ։ Մեր օրերում առաջ յեկած խորհրդային ֆոլկլորը, հատկապես լենինյան ցիկլը, լենինյան «վեպը» հնարավորություն է տալիս մեզ քայլ առ քայլ հետևելու այդ «վեպի» ծագման՝ գոյացման և աստիճանական զարգացման ետապներին, ծանոթանալ նրա կրած ազդեցություններին, փոփոխություններին և ներկա դրությանը։ Լենինյան վեպի գոյացման կոնկրետ օրինակի վրա հնարավոր է լուսաբանել նաև ընդհանրապես վեպի ծագումն ու աստիճանական զարգացման հարցերը։

Խորհրդային ֆոլկլորը հետաքրքրական է նաև իր ձևի և գեղարվեստական պատկերավորման յեղանակների (պրիոմների) տեսակետից։ Այստեղ քննության արժանի յեն նաև հին ու նոր ֆոլկլորի միաձուլման պրոցեսը, հին ձևի ու նոր բովանդակության համատեղման յերևույթը, հնի տրանսֆորմացիան նոր իդեոլոգիայով համակված միջավայրում։

Թվարկածս գիտաթեորետիկական պրոբլեմների, ինչպես և նշված քաղաքական-հասարակական խնդիրների առաջնակարգ

[1] „Советская Этнография", 1934, №№ 1—2, յերես 205։

նշանակությամբ և, հարկավ, բացատրվում այն բուռն հետաքրքրությունը, որ նկատվում է վերջերս մեր գիտահետազոտական հիմնարկություններում և առհասարակ լայն հասարակության մեջ դեպի նոր ֆոլկլորը։ Դրանով են բացատրվում նույնպես այն լայն միջոցառումները, որ ծրագրվել են և կենսագործվում են նոր ֆոլկլորի հավաքման և գրանցման բնագավառում։

Եվ իրոք համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, ընդամենը մի քանի տարվա ընթացքում հավաքել ու գրանցել են ֆոլկլորային մի պատկառելի հարստություն։ Նորերս լույս տեսած խորհրդային ֆոլկլորին նվիրված „Советский фольклор" հանդեսը կազմել է միայն ռուսերեն լույս տեսած խորհրդային ֆոլկլորի վոչ լրիվ բիբլիոգրաֆիան (154 անուն), վորի մեջ լրագրական հոդվածներից և պարբերականներում լույս տեսած ֆոլկլորային նյութերից զատ՝ կան առանձին գրքերով հրատարակված ընդարձակ ժողովածուներ՝ բնագրեր և ուսումնասիրություններ[1]։

Հավաքված և գրի առնված նյութերն ըստ հիմնական թեմաների բաժանվում են՝ ա. երգեր, զրույցներ և հեքիաթներ հեղափոխական ղեկավարների մասին, բ. երգեր և զրույցներ կոմունիստական կուսակցության մասին, գ. երգեր կոմյերիտմիության մասին, դ. հակակրոնական ֆոլկլոր, ե. պարտիզանական ֆոլկլոր, զ. կարմիր բանակային երգեր և քառյակներ, է. կոլտնտեսական երգեր և քառյակներ և ը. բանվորական քառյակներ. իսկ ըստ ժանրերի՝ 1. քնարերգություն, 2. եպիքական երգեր, 3. զրույցներ և ավանդություններ, 4. հեքիաթներ։

Այդ բիբլիոգրաֆիան վերաբերում է միայն ռուսերեն կամ ռուս մամուլում հրատարակված խորհրդային ֆոլկլորին, սակայն քանի-քանի տասնյակ հատոր կը կազմեն Միության բազմալեզու ժողովուրդների գրականության մեջ լույս տեսած կամ ֆոլկլորիստիկ արխիվներում պահված խորհրդային ֆոլկլորի ժողովածուները։

[1] „Советский фольклор", статьи и материалы, выпуск . Труды Фольклорной секции Института Антропологии и Этнографии АН СССР, Ленинград 1934, եջեր 195—201։

2

Ինչպես տեսնում ենք, գրի առնված խորհրդային ֆոլկլորը քանակապես մեծ է, սակայն նույնը չի կարելի ասել նրա վորակի մասին։ Բանահավաքները սայթաք ուղի յեն ընտրել ֆոլկլորիստիկայի բնագավառում։ Նրանցից ոմանք պարզ պատկերացում չունեն ֆոլկլորի սպեցիֆիկումի մասին, անխտիր գրի յեն առնում այն ամենը, ինչ վոր լսել են գյուղացու կամ բանվորի բերանից, անգամ յեթե ասացողներն ու պատմողները գրագետ են. մյուսները հավաքում են նույնիսկ պարտիզանական հուշերը, մեմուարները, վոր հեռավոր առնչություն ել չունեն ֆոլկլորի հետ, և համարում են այդ բոլորը ֆոլկլոր։ Մեմուարային գրականությունը վորքան ել գեղարվեստորեն պատմված լինի, յերբեք չի կարող ֆոլկլոր համարվել։ Բացասելով նման նյութերի ֆոլկլոր լինելը, մենք չենք ուզում ժխտած լինել նրանց արժեքն ընդհանրապես և ֆոլկլորի ծագման ու զարգացման, ինչպես և ուսումնասիրության համար մասնավորապես։ Խորհրդային ֆոլկլորի նոր թեմատիկան այնքան է վոգևորել բանահավաքներից և բանասերներից մի քանիսին, վոր նրանք պատրաստ են անգամ ուսանողական ստեղծագործությունները ֆոլկլոր համարելու։ Վորպես թյուրիմացության կլասիկ մի նմուշ բնորոշ են Ա. Արշարունու և Ս. Վելտմանի հետևյալ խոսքերը՝ «Ժողովրդական մինչհեղափոխական հայկական եպոսը, վոր արտահայտվել է Սայաթ-Նովայի պոեզիայի մեջ, կյանքի յե կոչել բազմաթիվ հետևորդներ և նմանողներ»[1]։ Այդ վոր հայկական եպոսի մասին են խոսում հեղինակները, վոր արտահայտվել է Անդրկովկասի մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Սայաթ-Նովայի պոեզիայի մեջ։ Մեր հանճարեղ աշուղը գերազանցապես քնարերգակ է, մի բանաստեղծ, վոր գեղարվեստորեն նրբին ու խոր դրսևորելով մարդու հոգեկան աշխարհը, իր յերգերի ձևը, տաղաչափությունը հասցրել է աննախընթաց կատարելության։

---

[1] А. М. Аршаруни и С. Л. Вельтман, „Эпос Советского Востока“ (дореволюционные и послеоктябрьские мотивы), изд. Academia, Ленинград 1930, *յերես 16*։

Ա. Արշարունու և Ս. Վելտմանի ֆոլկլորիստիկ նման մարզանքները կարող են թյուրիմացության մեջ գցել անփորձ ֆոլկլորիստներին: Անհրաժեշտ է հստակ տեսակետներ մշակել, խնդիրները պարզ ու վորոշ դնել, վորպեսզի թյուրիմացության և սայթաքման առիթներ չստեղծվեն այն հարյուրավոր բանահավաքների համար, վորոնք նվիրված յեռանդով հավաքում և ուսումնասիրում են խորհրդային ու նախախորհրդային ֆոլկլորը:

Խորհրդային ֆոլկլորի հավաքման ու գրանցման բնագավառում մեծ բաց պիտի համարել նաև այն, վոր գրանցողներից վոմանք հմուտ չլինելով գրանցման տեխնիկային կամ չհասկանալով ֆոլկլորի իսկական արժեքը, չզգալով նրա անարվեստ գեղեցկությունները, փոխանակ բառացի և ամենայն մանրամանությամբ, նրբություններով արձանագրելու ֆոլկլորի նյութը՝ բավականացել են յերգերի և զրույցների բովանդակության շարահյուսությամբ. մյուսները ֆոլկլորային նյութը գիտել են վորպես մի հում նյութ իրենց գեղարվեստական յերկերի և ժուռնալային հոդվածների համար: Ուսումնասիրողներից վոմանք այս ևս գիտել են վորպես ֆոլկլոր: Այդ տիպի բանահավաքների աշխատանքները պետք է խոտելի համարվեն ֆոլկլորիստիկայի մեջ: Սակայն այս նյութերն էլ ապարժեք չեն ֆոլկլորիստիկայի համար: Դրանք կարող են արժեքավորվել սոսկ իբրև ուղենիշներ, շոշափուկներ, վորոնք հմուտ ֆոլկլորիստին հնարավորություն կը տան ֆոլկլորային բուն աղբյուրին հասնելու և այնտեղից, այդ նոր միջավայրից և ֆոլկլոր կրողներից քաղել և գիտականորեն գրանցել իսկական ֆոլկլորային արժեքներ:

3

Մեր նպատակը չէ մանրամասն վերլուծության յենթարկել Միության մեջ հավաքված և գրի առնված խորհրդային ֆոլկլորը: Մի այդպիսի վերլուծություն սազական էլ չէր լինի մեր ժողովածուի նման մի հրատարակության ներածության համար: Այստեղ կը ցանկանայինք միայն հայկական նյութերի վերլուծության կապակցությամբ՝ հայ ընթերցողին թռուցիկ ծանոթություն տալ այն ֆոլկլորային նյութերի մասին, վոր վերջին տասնամյակում

Н 6218

հավաքվել, որի առնվել և հրատարակվել են ռուս մամուլում։ Դրանց մեջ էլ գլխավորապես ծանրանալ Խորհրդային Արևելքի և Հյուսիսի ժողովուրդների ավելի տիպական ֆոլկլորային նմուշների վրա։ Խորհրդային ֆոլկլորի այս հատվածը բնորոշ է իր քաղաքական-հասարակական և գեղարվեստական արժեքներով։ Մասնավորապես աչքի յեն ընկնում Լենին ու Հոկտեմբեր թեմաները։

Արդ՝ ինչ և ինչպես են յերգում և պատմում «ասացողները»— ժողովրդական յերգիչներն և ինքը մասսան Լենինի և Հոկտեմբերի մասին։

Խորհրդային ֆոլկլորը բնորոշ է իր ստեղծագործական-գեղարվեստական յեղանակների (ոճի) էկլեկտիզմով։ Այստեղ միահյուսված են հին ու նոր հեղափոխական հասկացողությունները, կենցաղային-սովորութական գերապրուկները հեղափոխական դարաշրջանի նոր կենցաղի և նոր ձգտումների հետ. հին ձևերի, պատկերավորումների մեջ դրված են նոր բովանդակություն, յուրովի նոր գաղափարախոսություն։

Գույն է փոխում մարդու գիտակցությունը։

Դասակարգային հակամարտությունը, էկոնոմիկայի մեջ առաջացած խոշորագույն բեկումը, առանձնապես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կոլտնտեսաշարժման արագ ու հաղթական ծավալումը, հիմնական բեկում է առաջացրել աշխատավորության մտավոր աշխարհում, խորտակել է ու խորտակում է հին մտապատկերները, բայց և այնպես խորհրդային ֆոլկլոր ստեղծող աշխատավոր հոծ մասսան դեռևս լրիվ կերպով չի ազատագրվել հին կեցության, ապա ուրեմն հնավանդ կենցաղի, սովորությունների ու բարոյական-գաղափարական ազդեցություններից։ Դեռ արմատախիլ չի արել հնի մնացորդները։ Այս որվա անաղարտ պատկերն այդ էր Լենինը և մեծ բեկում։ Այդ բեկումը համարում ենք ավելի հատկապես նշանակալից և հեղափոխական։

Խորհրդային ֆոլկլորը ցայտուն կերպով առաջացել, զարգացել է այն միջավայրում, որտեղ հին ֆոլկլորը խոր արմատներ է ձգել,

վորտեղ դարերի ընթացքում մշակվել ու կերտվել եյին ֆոլկլորային պատկերներ, պատկերավորման յեղանակներ, գեղարվեստական ձևակերպման ավանդներ, վորտեղ բանահյուսությունը շարունակ-ում ե մասսաների հոգևոր կուլտուրայի ամենակենդանի ստեղծագործական բնագավառը հանդիսանալ: Այդպես և Ռուսաստանի հյուսիսային մարզերում, հեռավոր Սիբիրում, այնպես և նաև Բելոռուսիայում, Ուկրաինայում և հատկապես Խորհրդային Արևելքում: Հոկտեմբերյան հեղափոխությունը, վոր այնպիսի հզոր տեղաշարժեր, այնպիսի աննախընթաց սոցիալական և տնտեսական բեկում և առաջացրել ամբողջ Միության մեջ, մասնավորապես Խորհրդային Արևելքի սոցիալ-տնտեսական և կենցաղային հարաբերությունների մեջ, պարզ ե, վոր ձևով հին, ավանդական, բովանդակությամբ թարմ խորհրդային՝ նորանոր սոցիալական և իդեոլոգիական ստեղծագործություններ պիտի առաջ բերեր մասսաների մեջ: Նոր ֆոլկլորի մեջ հաճախ տեղ ե գտել նախախորհրդային բանահյուսության տերմինաբանությունը. պատմական-հերոսական և կրոնական անունները համատեղված են հեղափոխության առաջնորդների հերոսների անունների հետ. հին, բոլորի կողմից գիտակցված և հավանություն գտած մոտապատկերներն, անգամ առասպելական-կրոնական դեկորները, մետաֆորները, մի խոսքով՝ ֆոլկլորային, վիպական բոլոր ատրիբուտներն օգտագործված են նոր բովանդակություն տալու, նոր հասարակական հարաբերությունները պատկերելու համար:

Այսպիսի միահյուսումը մեծապես ոժանդակել ե նոր ֆոլկլորի գեղարվեստական ձևավորմանը: Այստեղ կոնտամինացիոն կարգով համախմբված են խորհրդային թեմատիկայի շուրջը հին, տեղական-ավանդական հերոսական վեպի բոլոր գեղեցկությունները, ստեղծագործական յեղանակներն ու յերանգները, և այսպիսով ստեղծվել ե խորհրդային հեղափոխական հերոսական «վեպը», վոր մի քանի ժողովուրդների աշխատավորական մասսաների ստեղծագործության մեջ հասել ե վորոշ գեղարվեստական կատարելության: Այդ տեսակետից մասնավորապես արժեքավոր ե Խորհրդային

Արևելքի ժողովուրդների ֆոլկլորը Լենինի և Հոկտեմբերի մասին, որը և կը վերլուծենք փոքր ինչ ընդարձակ և կոնկրետ։

4

«Ամենախոր և վառ, գեղարվեստորեն կատարյալ հերոսների տիպերն ստեղծված են ֆոլկլորի՝ աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ»,—այսպես բնութագրեց ֆոլկլորը Ա. Մ. Գորկին գրողների Համամիութենական առաջին համագումարում։

Եվ իրոք, ֆոլկլորին հատուկ է հերոսական տիպերի հակիրճ և կենդանի բնութագրություններ։ Հերոսական տիպերն այստեղ գծագրվում են ոչ թե երկարաշունչ դատողություններով, այլ զարմանալի պարզությամբ հենց գործողության մեջ։ Այդպես է մեր «Սասնա ծռեր» ժող. վեպի մեջ կենտրոնական հերոս Դավթի նկարագիրը, այդպես է Խորհրդային Արևելքի նոր ֆոլկլորի, մասնավորապես վիպերգի մեջ. Լենինը, Հոկտեմբերյան հեղափոխության հանճարեղ առաջնորդը։ Այդ երգերում գովերգված Լենինը դյուցազն, լեգենդար հերոս է։

Խորհրդային Արևելքի ֆոլկլորի մեջ Լենինը հանդես է գալիս որպես մի քաջարի հերոս, որն իր հարվածներն է ուղղում ամեն գույնի ու տեսքի շահագործողների՝ ցարի, ֆեոդալ-կալվածատերերի, բեգեր-աղալարների, հարուստների և ընդհանրապես ամեն կարգի «չար ուժերի» դեմ։ Յուրաքանչյուր առանձին դեպքում՝ նայած որ շրջանում, որ ցեղերի և ժողովուրդների կողմից են հորինվել, պատմվել ու երգվել այդ լեգենդներն ու երգերը՝ Լենինի կռիվը «չար ուժերի» դեմ տեղայնացվել է, ընդունել այս կամ այն կոնկրետ ձևը, լրիվ պահպանել տեղային կոլորիտը, մի խոսքով՝ արտահայտվել է բնիկների հարազատ մտապատկերներով և գեղարվեստական ստեղծագործական եղանակներով։

Լենինը զանազան դերերում է հանդես գալիս։ Մերթ նա որսորդ է, «Նետ ու աղեղը» ձեռքին, մերթ ձիավոր ուլակը նետելիս, մերթ խաշնարած ոչխարների և տավարի հոտերն ու նախիրը հանդում ու լեռնադաշտերում արածեցնելիս, մերթ որպես ընչազուրկ, հողազուրկ դեհկան ու մաճկալ, որ հերկում է խոպան

դաշտերը, մերթ վորպես խիզախ կոզակ և այլն, և այլն: Ինչ կերպարանք էլ նա ընդունած լինի, վոր դերում էլ հանդես յեկած, մեկ է, նա ամենուրեք պաշտպանում է չքավորներին, շահագործվող ժողովրդական զանգվածներին: Նրա հարվածներից «չար ուժերը» սարսափում, փախչում են կամ կործանվում, վոչնչանում: Ամենուրեք նա պայքարում է շահագործված «դժբախտ ժողովրդի» բախտավոր ապագայի համար:

Լենինի մասին հյուսված այդ լեգենդներին և յերգերին հատուկ է մի ընդհանուր եպիքական գիծ: Նա մի հսկա յե կամ մի դյուցազն, մի հերոս՝ օժտված ֆիզիկական վիթխարի ուժով, միաժամանակ նա իմաստուն է յեվ հնարագետ, բարեսիրտ յեվ արդարադատ: Լենինը շուռ է տալիս վիթխարի ժայռեր, խիզախաբար նետվում է կրակի ամենավտանգավոր ճակատամասերը, հերոսաբար մարտնչում է տարերքի դեմ, մարդկային կյանքը փրկելու համար նետվում է փոթորկալից և ալեկոծ ծովերը, հաղթահարում է ամեն տեսակի սարսափելի խոչընդոտներ ու արգելքներ և այլն: Այս բոլորով հանդերձ՝ նա յերբեք հոգեպես չի ընկճվում, չի վհատվում. միշտ ուրախ է, զվարթ, միշտ վստահ է իր ուժերին և լավատես: Ժողովրդական հերոսի բնավորության ամենաբնորոշ գծերն են վերոհիշյալները: Աշխատավորական մասսաները ամենամեծ ճգնաժամերի ժամանակ էլ հոռետես չեն դառնում: Լավատեսությունը մասսաների աշխարհայացքի հիմնական տարրն է: Լավատեսությունն է, վոր մասսաներին տոկունություն է սովորեցնում, պայքարի դուրս բերում ամեն տեսակի թշնամիների դեմ, հաղթություն, վողևորություն ներշնչում նրանց: Ֆոլկլորի յուրահատուկ այդ գծի վրա յե հրավիրում Ա. Մ. Գորկին խորհրդային գրողների ուշադրությունը, յերբ ասում է.

„Очень важно отметить, что фольклор совершенно чужд пессимизма, невзирая на тот факт, что творцы фольклора жили тяжело и мучительно, рабский труд не был обессилен эксплоататорами, а личная жизнь бесправна и беззащитна. Но при всем этом коллективу как-бы свойственно сознание его бессмертия и уверенность в его победе над всеми враждебными ему силами".

Անմահության այդ գիտակցությունը, միշտ հաղթելու վստահությունն ու լավատեսությունն է, որ կարմիր թելի պես անցնում է նաև խորհրդային ֆոլկլորի, մասնավորապես լենինյան ցիկլի միջով։ Լենինն ու նրա գործը յերբեք չեն պարտվել. նրանք անմահ են և հաղթանակող։

Այս տեսակետից վերին աստիճանի բնորոշ է ոստյակների (սամոյեդ) զրույցը Լենինի ու նրա գործի մասին։

Ծեր ոստյակը խրատում է, կյանքի ու պայքարի դաս է տալիս իր որդուն։ Նա պատմում է Լենինի մասին։ Ծերունի ոստյակի տեսադաշտում յերիտասարդ Լենինն էլ իրենց նման ապրել է թունդրաներում, „оленей пас, бил зверей, совсем легко, шутя бросал аркан на 40 саженей“ [յեղջերուներ էր արածացնում, գազաններ որսում, բոլորովին թեթև, կատակով ողապարանը նետում 40 սաժեն]։

Հյուսիսային դաժան գոյամարտում դժվար է միշտ հաղթանակել։ Այստեղ բացի սովորական թշնամիներից, հենց ինքը՝ բնությունն ու տարերքը մարդու մեծագույն թշնամիներն են։ Այդ պայքարում պետք է համառ լինել և չվհատվել։ Այդպես է յեղել յերիտասարդ Լենինը։ Նա խիզախ է յեղել, վստահ իր գործին և այդ պատճառով էլ միշտ հաղթանակել է։

Ծերունին պատմում է.

„Однажды Ленин вышел в море [1]
Тюленей бить (достать их жир);
Вдруг шторм сильный—горе, горе!—
Унес человека в морскую ширь.
Затихло море, вновь серчало,
И лед кругом сковал челнок.
А Ленин ел моржовье сало,
Ночей не спал и весь продрог.

---

[1] Այս յերգը հենց առաջին հայացքից անաղարտ ֆոլկլորի տպավորություն չի թողնում։ Ինչպես հավաստիացնում է ընկ. Արշարունին այս յերգը գրական վերամշակության է յենթարկել Ա. Մաքսուլին։

Так плыл он долго, долго очень,
А сколько плыл—не знал никто.
Лед тоньше стал и менее прочен,—
Заплыл туда он, где тепло.
Собрав с трудом остаток сил,
Взмахнул веслом на солнце прямо—
Сын Яамас-хе-хе был упрямый—
И вот до берега доплыл.
Ему навстречу звери и люди:
—Приди к нам в чум и отдохни,
Потом с тобой тягаться будем—
Покажешь силы нам свои.
А Ленин им:—Я хоть устал,
Но бить вас хватит сил моих.—
Стрелою взор, скривил уста,
Аркан накинул на троих,
Связал и бросил в моря пасть;
Топор метнул—двоих рассек,
И не успел один упасть,
Копьем пронзил его в висок...“[1]

[Լենինը նավակով ծով է դուրս գալիս։ Նա վարում է ծովացուլեր և ծովաշներ։ Սաստիկ փոթորիկ է բարձրանում։ Անքուն գիշերներ են անցնում. ցրտահար Լենինն անդադրում թիավարում է դեպի ափ։ Վերջապես հասնում է նա այնտեղ, ուր սառույց չկա և տաք է, և վերջին ուժը հավաքելով՝ դուրս է գալիս ափ։ Նրան ընդառաջ են գալիս գազաններ և մարդիկ.

— Արի մեր վրանն ու հանգստացիր,
Հետո մենք քեզ հետ կը չափվենք,
Ցույց կը տաս դու ուժերդ մեզ։
Լենինն էլ ասում է.— Յես, ճիշտ է, հոգնել եմ,
Բայց ուժս կը հերքի ձեզ հարվածելու

---

[1] Аршаруни, *ն. ա., յերես 11—12։*

Հայացքը նետ, բերանը ծխեց,
Ողապարանը գցեց յերեքի վրա,
Կապոտեց ու գցեց յերախը ծովի
Կացին նստեց, յերկուսին կիսեց,
Յեվ մեկը դեռ գետին չեր գլորվել,
Նիզակով ծակեց քունքը նրա]։

Լենինը հաղթում է ամեն գույնի ու տեսքի թշնամիներին. սպանում է մասսաներին կողոպտող ագահ վաճառականներին, կողոպուտը հետ է խլում և բաժանում չքավորներին, ապա տեսնելով, վոր բոլոր հարստահարողները վերացել են, իսկ «չարքերը» չքացել, հանգիստ մեռնում և Յերկնքում ցոլում է մի նոր վառ աստղ—Լենինի աստղը։ Ծերուկ ոստյակը պատմելով այս բոլորը, վերջացնում է իր խոսքը հետևյալ բարեմաղթությունով.

„И целью всех своих стремлений
Я вижу то, Хасава-ню (мой сын),
Что станешь ты таким, как Ленин,
И в небе дашь свою звезду“. 1

[Յեվ նպատակը քո բոլոր ձգտումների
Տեսնում եմ յես այն, Խասավա-նյու (իմ վորդի),
Վոր դու Լենինի պես մի մարդ կը դառնաս
Յեվ յերկնքում քո աստղը կ'ունենաս]։

Այսպիսով Լենինն ընդամենը մի տասնամյակի ընթացքում դարձել է հյուսիսային այդ փոքրիկ ժողովրդի կյանքում, նրա հոգևոր աշխարհում այն գերագույն հերոսը, վորին պետք է նմանվել, վորի շավղով պետք է գնա յուրաքանչյուր ոստյակ, յեթե նա ուզում է անմահության հասնել, իր «վառ աստղն ունենալ յերկնքում»։ Լենինն ոստյակների լեգենդն է և Նա բռնում է նախկին հերոսների, կիսաստվածների տեղը։

Ահա մի յերգ ևս «Դեհկան և Լենին» այդ յերգի վերնագիրն է։ Գրի յե առնված 1925 թ. հունիսին, Կարա-Թուրպա ղըշլաղում։

---

1 Аршаруни, հ. ա., յերես 12։

Այստեղ Լենինը ոչ միայն չքավոր դեհկանների, ընչազուրկ աշխատավորության պաշտպանն և ընդդեմ շահագործողների, այլ նրա պատրաստակամ օգնական ու արագահաս և հմուտ բժիշկը։

„Если Ленин видел, что на дехкана напал грабитель,
То Ленин брался за меч
И защищал дехкана, не жалея собственной жизни.
Если Ленин видел, что у дехкана заболело дитя,
То он сам брался за лекарство
И спасал отцу ребенка.
Если Ленин видел, что у дехкана тяжелая работа,
С которой трудно справиться одному,
То он брался за кетмень и помогал дехкану в работе
Таких, как он, никогда не было нигде,
Таких великих и простых,
Занимающих самое высокое положение
И не гнушающихся сесть за один стол с бедняками.
Поэому дехкане полюбили Ленина
И реки слез пролили после его смерти“.[1]

[Յեթե Լենինը տեսնում եր, որ դեհկանի վրա հարձակվել ե
թալանչին,
Նա իսկույն իր ձեռքն եր առնում թուրը
Յեվ պաշտպանում եր դեհկանին, չխնայելով իր կյանքը։
Յեթե Լենինը տեսնում եր, որ դեհկանի յերեխան հիվանդ ե,
Նա ինքն եր վերցնում դեղը
Յեվ փրկում եր յերեխային հոր համար։
Յեթե Լենինը տեսնում եր, որ դեհկանի աշխատանքը ծանր ե,
Որ մեն-մենակ նա չի կարող գլուխ բերել,
Նա իսկույն վերցնում եր բրիչն և օգնում դեհկանին։
Նրա նմանը չի յեղել ոչ մի տեղ և յերբեք,
Այդքան մեծ և այդքան պարզ ու հասարակ,
Որոն այդքան բարձր դիրք ունեն

[1] Л. Соловьев, հիշ. աշխ., յերես 18, 85—86։

Ցավ չէր զգվում չքավորի հետ սեղան նստել։
Դրա համար դեհկանները սիրեցին Լենինին
Ցավ արցունքի գետեր հոսեցին նրա մահից հետո]։

Դեհկանի սայլը կոտրվել է. սայլապանը ընկնում է ու յեր-գում.

„Мне никто не поможет.
Но если бы со мной ехал Ленин,
Он помог бы мне и сделал бы арбу лучше новой,
Потому что он все умел делать“. [1]

[Ինձ վոչոք չի օգնի.
Բայց յեթե հետս Լենինը լիներ,
Նա կ'օգներ ինձ և ինձ համար նորից էլ լավ սայլ կը շիներ,
Վորովհետև նա կարողանում եր ամեն ինչ անել]։

Լենինն ամենակարող է և ամենագետ նա և' խելական խաշ-նարած է, և' դաշտերն հերկող դեհկան, և' անվախ վորսորդ ու ձկնորս, մի խոսքով Խորհրդային Արևելքի ժողովուրդների պատ-կերացման մեջ ամեն ինչ, առանց վորի չի կարելի յերևակայել աշխատավորության բարորությունը.

„Ленин, Ленин... Мы без тебя,
Как рой пчел без матки!“. [2]
[Լենին, Լենին... Առանց քեզ մենք,
Առանց պարամայրի մեղուներ ենք]։

Գլխավորելով աշխատավոր գյուղացության ազատագրական պայքարը՝ նա անհարկու. ձայնով անհաշտ կռվի յե կոչում ընչա-զուրկ մասսաներին, վորպես «մարգարե», կյանքի, պայքարի, խա-ղաղ աշխատանքի ու բախտավորության պատգամներ է տալիս շահագործման դաժան լծի տակ տառապող մարդկությանը.

---

[1] Л. Соловьев, հիշ. աշխ., յերես 94։
[2] Л. Соловьев, հիշ. աշխ., յերես 93։

„Люди, разогните спины!
Люди, откройте уши!
Слушайте мое слово!
И страшно было слово пророка для богачей,
Но радостно было оно для бедных:
—Смерть хозяевам вашим!
Вам их халаты!
Вам их кибитки!
Вам их хлеб!
Не будет это против закона,
Ибо вашими руками заработано это!“ [1]

[Մարդի՛կ, ուղղեցե՛ք ձեր թիկունքը,
Մարդի՛կ, բացե՛ք ձեր ականջները.
Լսեցե՛ք իմ խոսքը։
Եվ սարսափելի յեր մարգարեի խոսքը հարուստների համար,
Բայց ուրախալի յեր այն չքավորների համար։
—Մա՜հ ձեր տերերին.
Նրանց խալաթները ձե՛զ.
Նրանց վաչերը ձե՛զ.
Նրանց հացը ձե՛զ.
Եվ դա օրենքին հակառակ չի՛ լինի,
Վորովհետև այդ ամենը ձեր ձեռքերով է աշխատած]։

Պայքարի ու փրկության ուղին պատգամող այդ Նոր «մարգարեն»—Լենինը՝ միայն քարոզիչ չէ, միայն խոսքի հերոս չէ, այլ գերազանցապես գործի մարդ, վորովհետև նա ինքն է իր պատգամները կենսագործում։ Նա մարտի յե յելնում չտեսնված հերոսությամբ, գերմարդկային խիզախությամբ։

„Огнем и мечом прошел пророк по полмиру,
И оставил за собою разоренные пепелища богачей;
И вел бедняков вперед и вперед,

1 Անդ. յերես 76։

Огненной рукой показывая на восток...
И они дошли до конца и нашли
Царство без царя, где была свобода
И где царем были—законы Ленина". [1]

[Հրով ու սրով անցավ մարգարեն աշխարհի կեսը,
Յեվ իր յետևը թողեց հարուստների ավերված ոջախները.
Յեվ նա առաջնորդում էր չքավորներին դեպի առաջ,
Հուր ձեռքով ցույց տալով դեպի արևելք...
Յեվ նրանք գնացին մինչև վերջը և գտան
Անթագավոր մի թագավորություն, ուր ազատ էր,
Յեվ վորտեղ Լենինի որենքներն էին թագավորում]։

Իր իմաստուն կյանքով ու հաղթական գործով անհաշտ դասակարգային պայքարի փայլուն որինակը ցույց տալուց հետո՝ նա անհայտանում է կամ մեռնում։ Յերկրորդ դեպքում՝ նա կտակում է չվոչնչացնել իր մարմինը, այլ անաղարտ պահել, աչքի ընկնող մի բարձրության վրա դնել, միշտ այցի գալ, վորովհետև՝

„В теле,—сказал он,—частица моего духа...
И если кто сробеет в великой борьбе,
Пусть подойдет ближе к моему телу;
И опять гневом запылает сердце его,
И преисполнится он смелости,
И сильным будет дух его,
И опять он пойдет на борьбу,
Храня в памяти мои огненные заветы.
И уши его в бою будут слышать
Мои призывные слова". [2]

[Մարմնիս մեջ,—ասաց նա,—իմ ոգու մասնիկը կա.
Յեթե մեկը վհատվի մեծ կռվում,
Թող մոտենա իմ մարմնին.

1 Անդ, յերես 77։
2 Անդ, յերես 78։

Յեվ նորից նրա սիրտը կը վառվի զայրույթով,
Յեվ կը լցվի նա խիզախությամբ,
Յեվ հզոր կը դառնա նրա վոգին,
Յեվ նորից նա կը դնա կռվի,
Պահպանելով իր հիշողության մեջ իմ պատգամները
բոցեղեն.

Յեվ կռվի մեջ նրա ականջները կը լսեն
Իմ խոսքերը մարտակոչ]։

Ֆերգանի գյուղացին չի հավատում, վոր Լենինը վախճանվել ե. Նա չի հաշտվում այն մտքի հետ, վոր Լենինի նման մի հերոս կարող ե ընդմիշտ հեռանալ աշխատավորությունից, կարող ե մեռնել։ Վոչ. նրա անհետանալը ժամանակավոր բնույթ ե կրում։ Լենինի «մահը», նրա կարծիքով, սոսկ մի դատարկ բառ ե։ Լենինը մահ չունի, Լենինը հավիտենական ե։ Ավարտելով իր «սուրբ գործը», նա ժամանակավորապես անջատվել ե իր սիրելի աշխատավորությունից և հանգստանում ե «լռության աշխարհում»։

„—Но зорко смотрит на землю и в мысли врагов—
Не начинается ли снова горе и рабство.
И если враги снова возьмут верх,—
Опять придет он, пламенный и сильный,
На этот раз еще более гневный и беспощадный,
И снова пойдут за ним миллионы,
Сотрут с лица земли все
И снова все построят.
И будет мир светел и счастлив". [1]

կամ

„И если кто обидет бедного дехкана,
То он встанет и железной рукой схватит обидчика,
И будет с ним жесток, как тигр"...

Ինչո՞ւ. Վորովհետև՝

---

1 *Անդ, յերես 64։*

„Ленин любит правду,
Ленин любит бедняков,
Ленин дал им власть и свободу,
Ленин утер слезы женщин,
Ленин, как солнце, обогрел землю". [1]

[Բայց սուր աչքով դիտում է նա յերկիրն ու
թշնամիների մտքերը,
Չի՞ սկսվում արդյոք նորից վիշտն ու ստրկությունը։
Յեվ յեթե թշնամիները հաղթեն նորից,—
Կրկին կը գա նա, բոցավառ և հզոր,
Այս անգամ ավելի ցասկոտ և ավելի անողոք։
Յեվ նրա յետևից կը գնան նորից միլիոնները,
Կը սրբեն յերկրի յերեսից ամեն ինչ.
Յեվ նորից կը շինեն ամեն ինչ.
Յեվ աշխարհը կը դառնա լուսավոր ու բախտավոր]։

կամ՝

[Յեվ յեթե մեկը նեղացնի խեղճ գեղջկանին,
Նա վոտքի կ'ելնի և յերկաթի բազկով նեղչին կը բռնի,
Յեվ նրա հետ վաղքի ոխը դաժան կը լինի]։

Ինչպես Վորովնևան՝

[Լենինը սիրում է ճշմարտություն.
Լենինը սիրում է չքավորներին.
Լենինը տվեց նրանց իշխանություն և ազատություն.
Լենինը սրբեց արցունքները կանանց.
Լենինը, վորպես արև, տաքացրեց յերկիրը]։

Լռության այդ աշխարհում, գեղջկանի պատկերացրած «դրախտում» Լենինը չի մոռանում յերկրի ու յերկրագործի կյանքը։ Նա այստեղ էլ չի կարողանում անտարբեր ականատեսի դերում մնալ, այլ շարունակում է յերկրում սկսած գործը, իր սկսած պայքարն ընդդեմ շահագործողների։ Նա մաքրում է «դրախտը» շահագործողների, հարուստների հոգիներից։

---

1 Անդ, յերես 88։

Ահա մի շարք պատկերներ Լենինի գործողություններից։

Լսվում է վորոտի ձայնը, ղըրղըզը համարում է այն Լենինի ահեղ ձայնի արձագանք. փայլատակում է կայծակը,—

„Это молния из глаз Ленина,
Выгоняющего из рая души богачей.
Сейчас в раю большой шум—
Ленин бьет всех палкой"! [1]

[Այդ կայծակը Լենինի աչքերից է,
Վոր դուրս է քշում դրախտից հարուստների հոգիները։
Դրախտում հիմա մեծ աղմուկ է,—
Այդ Լենինն է գավազանով ծեծում բոլորին]։

Լենինը դեռ վերադառնալու է, յերբ պատեհ ժամը հասնի, յերբ մասսաները—շահագործվող ժողովուրդը նրա ներկայության անհրաժեշտությունը զգա, յերբ նորից բարձրացնի ընդդեմ շահագործողների պատերազմի դրոշակը։ Այս միևնույն հավատքը գոյություն ունի շատ ժողովուրդների առասպելների և վեպերի մեջ լուսավոր հերոսների մասին։ Այս հավատքն է, վոր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը վոգևորել և սրտապնդել է կազակներին, Ուրալի ու Վոլգայի աշխատավորներին, յերբ նրանք օր ավուր սպասում եյին Յեմելյան Պուգաչևին և Ստենկա Ռազինին, վորոնք դուրս պիտի գային իրենց քարայրից և փրկություն բերեյին աշխատավորությանը[2]։ Յեվ պատահական չեն այն յերգերը, վորոնց մեջ Լենինը կերպարանափոխված Պուգաչևը կամ Ռազինն է, վոր յեկել է շարունակելու և ավարտելու նրանց սկսած գործը։

Ինչպես տեսնում ենք՝ «Լենինյան ֆոլկլորը», մանավորապես նրա վիպական և վիպերգային հատվածը, գերազանցապես գյուղացիական ստեղծագործություն է։

---

1 Անդ, յերես 94։

2 Համեմ. մեր ժող. վեպի Փոքրիկ Մհերի հետ։

5

Լենինյան ֆոլկլորային ցիկլի հիմնական և բնորոշ գծերից մեկն էլ նրա կրոնական յերանգավորումն ե։

Նախահեղափոխական Ռուսաստանի նահապետական և կիսանահապետական ժողովուրդների և ցեղերի կյանքում կրոնը հիմնական գործոններից մեկն եր։ Կրոնով եր տոգորված դրանց նիստն ու կացը, կրոնով եր սրբագործվում ամբողջ տնտեսական կյանքն ու պայքարը։ Յուրաքանչյուր տնտեսական-սոցիալական յերևույթ սկսվում եր, ղեկավարվում և ավարտվում կրոնական ծիսակատարությամբ՝ աղոթքով ու աղաբողությամբ։ Կրոնը, կրոնական նախապաշարումներն իրենց ուժեղ կնիքն եյին դրել այդ ժողովուրդների ամբողջ մտավոր կյանքի վրա, յերանգավորել եյին նրանց վերնաշենքային կարգի բոլոր յերևույթները։

«Կրոնը գաղափարների, տրամադրությունների և գործողությունների շատ թե քիչ կառուցիկ մի սիստեմ ե։ Գաղափարները կազմում են միֆոլոգիա (աստվածաբանություն), տրամադրությունները՝ կրոնական զգացմունք, գործողությունները՝ պաշտամունքը»,—ասում ե Գ. Վ. Պլեխանովը։

Տիրող դասակարգերը շատ լավ են ըմբռնել այդ։ Նրանք հաճախ կրոնական զգացմունքներից զուրկ լինելով հանդերձ՝ ոգտագործել են կրոնն էլ ավելի շահագործելու, էլ ավելի ամրացնելու աշխատավորության կապանքները։

Պրոլետարիատը կրոն չունի։ Նա կտրականապես մերժում ե, բացասում այդ ռեակցիոն գաղափարախոսությունը։ Նա կարիք չունի «աստված» գաղափարի, վորը նրան պիտի ոգնի, մխիթարի և սփոփի։ Նա ինքը տեր կը դառնա արտադրության բոլոր պրո-

ցեմներին, կը նվաճի բնությունն և իր անմիջական ղեկավարությանը կ'ենթարկի բոլոր հասարակական ուժերն ու կը ստեղծի երկրիս վրա մարդուն վայել, կրոնական, «աստվածային խավարից» ազատ մի նոր կյանք, երազական «երկնային դրախտի» փոխարեն՝ երկրային, նյութական իրական դրախտ։ Աստվածպաշտության փոխարեն՝ ճշգրիտ գիտություն, կրոնական զգացմունքների և տրամադրության փոխարեն՝ դասակարգային վառ գիտակցություն, պաշտամունքի փոխարեն՝ հեղափոխական գործելակերպ,—ահա սրանք են կազմում պրոլետարիատի գաղափարախոսության հիմնական սյուները։

Սակայն ինչ ենք տեսնում Հոկտեմբերյան հեղափոխության և նրա առաջնորդ Լենինին նվիրված ֆոլկլորի մեջ։

Այստեղ հեղափոխական նոր գաղափարները միատեղվել են հին, նախահեղափոխական հասկացողությունների հետ, նոր պայքարն արտահայտվել է հին, կրոնական մտապատկերներով, առասպելաբանության մեջ հնուց ի վեր ստեղծված մտապատկերներով։

Խորհրդային Արևելքի ժողովուրդների ֆոլկլորի մեջ Լենինը «խալիֆա» է պատկերված, «ալլահի մեծ մարգարե, ընտրյալը». Հոկտեմբերյան հեղափոխությունը—«բոլոր բայրամ», լենինյան-բոլշևիկյան հին գվարդիան՝ «մյուրիդներ» և այլն։

Լենինը տաջիկների և ուզբեկների նոր առասպելների և զրույցների կենտրոնական հերոսը հանդիսանալով՝ հակադրվում է նրանց վիպաշխարհի հին ներկայացուցիչներին, դարերի ընթացքում կիսաստվածների շարքը դասված հերոսներին՝ Ալուն (ուզբեկների ահարկու փահլևան), ահեղ Թամուրլենին ու Չինգիզ խանին, հեքիաթային դարձած Իսքանդարին (Ալեքսանդր Մակեդոնացի) ռուս Նիկոլային (Նիկոլայ II արյունարբու ցարին) և ուրիշներին։ Լենինն իր գաղափարներով, իր գործով, իր պայքարով նախկին հերոսների ամենացայտուն հակապատկերն է։

Ահա թե ինչ են երգում Լենինի մասին Ֆերգանի դեհկանները.

„Он снова посеял свет там, где Николай сделал мрак.
Он смел пепел с пустынь, обеспложенных Тамерланом.
Он построил города, разрушенные Чингиз-ханом...
Воины: Тамерлан, Чингиз-хан, Искандер и Николай,
Если видели свет,—делали мрак;
Если видели сад,—делали пустыню;
Если видели жизнь,—делали смерть...
Ленин, если видел мрак,—делал свет;
Из пустыня делал сад, из смерти—жизнь,
И был он могучее всех этих воинов, соединенных в одно,
Потому что один, в восемь лет, построил,
Что они разрушали тысячу лет"... [1]

[Նա նորից լույս սփռեց այնտեղ, վորտեղ Նիկոլայը խավար էր դարձրել.
Նա ավլեց Լենգթամուրի կողմից անբերրի դարձրած անապատների մոխիրը։
Նա շինեց Չինգիզ խանի կողմից ավերված քաղաքները։
Ռազմիկներ՝ Լենգթամուրը, Չինգիզ-խանը, Իսքանդարն ու Նիկոլայը՝
Յեթե լույս էին տեսնում,—խավար էին դարձնում.
Յեթե կյանք էին տեսնում,—մահ էին դարձնում...
Լենինը յեթե խավար էր տեսնում,—լույս էր սփռում.
Անապատը դարձնում էր այգեստան, մահը՝ կյանք։
Յեվ նա ավելի հզոր էր այդ բոլոր ռազմիկներից միասին վերցրած,
Վորովհետև նա մենակ կառուցեց ութ տարում այն ամենը,
Ինչ վոր նրանք ավերում էին հազար տարի շարունակ]։

Վերջապես Լենինը ալլահի ընտրյալ Մահամադից սերած Թուղայ-Բոլայի ժառանգորդ այն հերոսն է, վոր անհաշտ կռիվ մղելով շեյթանի և նրա ծնունդ նենգ ու խարդախ Բուշուկ-Ադամի դեմ, սպանում է մարդկություն—ռամիկ ժողովրդի այդ դուժ թշնամիներին, ազատում է նրանցից տասապիլական «ոկ-տաշը» (սալ-

[1] Անդ, յերես 74

տակ քար)՝ Կըզըլ տաշը (կարմիր քար) և Մահմադլին նվի-րած ալլահի մատանին, և այդ կախարդական իրերի միջոցով փրկում ընկած ժողովրդին։ Այս առասպելական կռվի մեջ Լենինը մենակ չէ. նրան օգնության է հասնում և՛ բնությունը, և՛ սարե-րը, և՛ կենդանական աշխարհը։

Այս գեղեցիկ առասպելից բերենք մի հատված։

„Гремел гром. Горы кидали камнями направо и налево, надеясь хоть случайно задеть Кучук-Адама. Молнии сыпались дождем, но Кучук-Адам спрятался за спину Ленина и был неуязвим.

Изнемогал уже Ленин в тяжелой, неравной борьбе, и пот крупными каплями капал с его лба.

И одна капля случайно упала на руку Кучук-Адама и прожгла его руку насквозь. Взмахнул от боли рукой Кучук-Адам, кольцо слетело с его руки, и стал он видимым.

Обратили на него ярость свою горы и тучи, били его камнями, жгли молниями, и пал Кучук-Адам погребенный под скалами.

Снял с Кучук-Адама Ленин пояс богатыря Али, достал кизыл-таш и ок-таш и пошел по горам освобождать землю.

Горы давали тень ему от зноя, и солнце умерило пыл свой и не накаляло камней, чтобы не жгли они ноги Ленина. Когда он хотел пить—небо проливало дождь; когда он хотел есть—барсуки приносили ему пищу и джейраны давали ему молоко.

Так шел он пять дней и остановился поспать в одном ущелье.

Когда он заснул, очнулся Кучук-Адам, лежавший у ручья, и, собрав стаю демонов, обманул бдительность гор и пошел убивать Ленина.

Горы не заметили его. Он пронесся над горами. Небо спало и не заметило его. Но заметил его маленький воробей.

Он напряг всю силу своих слабых крыльев и полетел к Ленину быстрее ветра предупредить его об опасности.

Он прилетел раньше Кучук-Адама, предупредил Ленина— и упал мертвым.

Ленин разбудил горы, натер меч свой поясом Али, и стал меч тяжелым и огненным, а когда налетела на него черная стая, то горы сдвинулись и образовали крышу, и некуда было бежать демонам, а огненный меч разил их и жег.

Пали все демоны в этом ущелье, а Кучук-Адам, превратившись в червяка, прополз в щель между гор и убежал от гнева Ленина.

Когда утром взошло солнце и растопило мрак в ущелье, нашел Ленин среди трупов демонов труп маленького воробья, зарыл его в землю и, поцеловав могилу, сказал горам:

— Воздвигните над телом его гробницу великую и великолепную, ибо мало было тело его, но велик дух, и жизнь свою он отдал за общее счастье.

Сдвинулись горы над могилой воробья, и ушла гробница, равной которой не было ни у кого, вершиной за облака и рассказала тучам о смерти воробья.

Тучи, собравшись около вершины, слушали и плакали, что умер в маленьком теле великий и сильный дух...[1]

[Ամպը գոռում էր։ Լեռները քարեր էին նետում աջ ու ձախ, որ մի կերպ զարկեն Քուչուք-Ադամին։ Կայծակներն անձրևի պես թափվում էին, բայց Քուչուք-Ադամը պահ էր մտել Լենինի թիկունքում և անխոցելի էր։

Լենինն արդեն թուլանում էր ծանր և անհավասար կռվում. նրա ճակատից քրտինքը խոշոր կաթիլներով թափվում էր ցած։ Պատահաբար մի կաթիլ ընկավ Քուչուք-Ադամի ձեռքի վրա և այրեց նրա ձեռքը։ Թափ տվեց ցավից Քուչուք-Ադամն իր ձեռքը և մատանին վայր ընկավ նրա ձեռքից, և նա դարձավ տեսանելի։

---

[1] Անդ, էջեր 43—45։

Լեռներն ու ամպերը թափեցին նրա վրա իրենց զայրույթը, քարահար արին նրան, այրեցին կայծակներով, և ընկավ Քուչուք-Ադամը, և թաղվեց ժայռերի տակ։

Արձակեց Լենինը Քուչուք-Ադամից փահլեվան Ալու գոտին, հանեց կըզըլ-տաշն ու ոկ-տաշը, և անցավ, գնաց լեռներով ազատագրելու յերկիրը։

Լեռները ստվերով պաշտպանում էին նրան տապից. արևը մեղմել էր իր ուժը և չէր շիկացնում քարերը, որպեսզի չայրվեն Լենինի ոտները։

Յերբ նա ծարավ էր զգում, յերկինքն անձրև էր թափում, յերբ նա քաղց էր զգում, գորշուկները կերակուր էին բերում և ջեյրանները կաթ էին տալիս։

Յեվ այսպես նա գնում էր հինգ օր ու գիշեր, և կանգ առավ նա մի ձորում, որ քնի։

Յերբ նա քուն մտավ, զարթնեց Քուչուք-Ադամը, որ պառկած էր տափի ափին, և հավաքեց դևերի վոհմակը, խաբեց լեռների զգոնությունը և գնաց Լենինին սպանելու։

Լեռները չնկատեցին նրան. նա թռավ, անցավ լեռներով։ Յերկինքը քնած էր և չնկատեց նրան։ Բայց նկատեց նրան փոքրիկ ծիտը։ Նա լարեց իր թույլ թևերի ամբողջ ուժը և քամուց արագ թռավ Լենինի մոտ՝ նախազգուշացնելու նրան վտանգի մասին։

Ծիտը Քուչուք-Ադամից շուտ թռավ, հասավ, նախազգուշացրեց Լենինին և անշնչացած ընկավ։

Լենինն արթնացրեց լեռներին, քաշեց, քանդեց իր թուրը Ալու գոտուց, և թուրը դարձավ ծանր ու կրակ. իսկ յերբ նրա վրա հարձակվեց դևերի սև վոհմակը, ապա լեռներն իրար մոտեցան և կտուր կազմեցին. և դևերը չկարողացան դուրս պրծնել, իսկ հուր-թուրը հարվածում էր նրանց և այրում։

Ընկան բոլոր դևերն այս ձորում, իսկ Քուչուք-Ադամը ճիճու դարձավ, սողաց լեռների մեջ գոյացած ճեղքը և փախավ, ազատվեց Լենինի բարկությունից։

Յերբ առավոտյան արևը ծագեց և վանեց խավարը ձորում, Լենինը դևերի գլուխների մեջ գտավ փոքրիկ ծտի դիակը, թաղեց հողի մեջ, համբուրեց գերեզմանն ու ասաց լեռներին.

—Կառուցեցին նրա մարմնի վրա մեծ և հոյակապ մի դամբարան, որովհետև փոքր էր մարմինը նրա, բայց մեծ էր ոգին և նա իր կյանքը զոհեց ընդհանուրի բախտավորության համար։

Մոտեցան, միացան լեռները ծով գերեզմանի վրա, և դամբարանը, որի նմանն ու հավասարը ոչոք չունենը, իր գագաթով ամպերից էլ բարձրացավ և պատմեց ամպերին ծով մահվան մասին։ Ամպերը հավաքվեցին նրա գագաթի շուրջը. Նրանք լսում էին և լալիս, որ փոքր մարմնի մեջ մեռավ մեծ ու հզոր ոգին...]

Լենինն արդարադատ է, բարեխիղճ և գթառատ. Նա ոչ միայն մարդկանց է օգնում և հոգում նրանց յերջանկության մասին, այլ խնամոտ վերաբերմունք է հանդես բերում կենդանական ամբողջ աշխարհի հանդեպ։ Նրա հոգատար հայացքից չեն վրիպում անգամ ուրիշներին զարշանք պատճառող սողուններն ու գեռունները։ Նրանք էլ իրենց հերթին զգում են, տեսնում են Լենինի գթառատ վերաբերմունքը և ամեն կերպ աշխատում են նրան օգնած լինել։

„Вышел из гор Ленин в степи, и мягки были степи под ногами его.

Ядовитые змеи, ящерицы и лягушки уползали с дороги, дабы видом своим не осквернять глаза Ленина, а сами тайком из травы смотрели на него и плакали, что никого не оставил без ласки Ленин, кроме них.

Ленин услыхал этот плач и позвал к себе змей, ящериц и лягушек и всех прочих гадов и всех обласкал он, не оставив никого незамеченным.

В счастье расползлись по норам гады земли и говорили:

—Вот первый человек, который, видя нас, не хватает камень, а гладит нас и говорит нам ласковые слова".[1]

[Դուրս յեկավ Լենինը լեռներից և գնաց տափաստանները. և փափուկ էին տափաստանները նրա ոտքերի տակ։

Թունավոր օձերը, մողեսներն ու գորտերը նրա ճանապարհից դուրս էին սողում, որ իրենց տեսքով չպղծեն Լենինի աչքերը,

1 Անդ, յերես 46—47։

բայց իրենք խոտերի միջից ծածուկ նայում էին նրան և լալիս, քանի որ նա բացի իրենցից փոքրի չթողեց սանց փաղաքշանքի:

Լսեց Լենինն այդ լացը և կանչեց իր մոտ օձերին, մողեսներին ու գորտերին և բոլոր մյուս սողուններին և բոլորին փաղաքշեց և փոքրի չթողեց աննկատ:

Ուրախ. ու բախտավոր սողացին բոլոր սողուններն իրենց բները: Նրանք ասում էին.

— Ահա առաջին մարդը, որը մեզ տեսնելով իր ձեռքը չի մեկնում քարին, այլ շոյում է մեզ և ասում մեզ փաղաքշական խոսքեր]:

Շատ էր Լենինի կռիվը ընդդեմ Քուչուք-Ադամի, որովհետև այս վերջինը հաճախ կերպարանափոխվում էր և ամեն անգամ մի նոր կերպարանք ընդունելով վերստին հարձակվում միամիտ և բացճակատ կռվող Լենինի վրա: Վերջին անգամ այդ զզվելի հրեշը—Քուչուք-Ադամը կնոջ[1] *կերպարանք է ընդունում և փորձում է Լենինին սպանել: Սա ազատվում է այս վերջին վտանգից էլ, սպանում է հրեշին և ազատում մարդկությունը՝ կերտելով նրա համար նոր յերջանիկ կյանք:*

„Однажды пошел Ленин к освобожденным говорить им слова правды; и когда выходил он с собрения, прямо в сердце пустил ему две стрелы, напитанные ядом, Кучук-Адам, превратившийся в женщину.

Но не умер Ленин. Приполз к нему ак-чуальчак (*սպիտակ որդը*), раз в сто лет выползающий из земли, и пустил своей слюны в раны Ленина.

Ленин выздоровел, а женщину-Кучук-Адама совет освобожденных приговорил к смерти.

Но не испугался Кучук-Адам. Он знал, что ничто не может убить его, кроме яда ок-илена. И думал он: „Притворюсь я мертвым, а после незаметно убью Ленина."

1 *Խոսքն, անշուշտ, էսէռական հակահեղափոխության գործիք Կապլանի մասին է:*

Но приполз в совет ок-илен и своим ядом напитал стрелы. Поразили те стрелы прямо в сердце Кучук-Адама, и от его тела распространился смрадный дым.[1]

Լենինն ավարտում է իր մեծ գործը: Այժմ նա առանձնանում է և սկսում գրել բազմաթիվ գրքեր բոլոր ժողովուրդների մասին: Գրում է նաև մի մեծ գիրք, որն սկսվում է հետևյալ ոսկի խոսքերով.

„Не жалейте жизни своей для счастья народа, как не жалел ее я!"

[Մի խնայեք ձեր կյանքը ժողովրդի բախտավորության համար, ինչպես յես չեմ խնայել այն]:

Այս վերջին պարտքն էլ կատարելուց հետո՝ Լենինը հանգիստ խղճով մեռնում է: Նրա մահը ողբում է ոչ միայն մարդկությունը, այլև ամբողջ տիեզերքը.

...„И мы оплакивали его, и горы... лили слезы о нем, и вздыхало небо о нем громами.

...И плакали змеи, ящерицы и лягушки плачем великим и скорбным о человеке, который один из всех приласкал их и написал о них в своей книге:

„Не трогайте гадов земных, и они не тронут вас. И они живут и хотят счастья".[2]

[Յեվ մենք ողբացինք նրան, և՝ լեռներն արցունք էին թափում, և՝ հառաչում էր յերկինքը որոտներով:

Յեվ օձերը, մողեսները, գորտերը մեծապես և հառաչալի ողբում էին այն միակ մարդուն, որ նրանց փաղաքշել է և նրանց մասին իր գրքում գրել.

«Ձեռ մի՛ք տա յերկրի սողուններին, և նրանք ձեռ չեն տալ ձեզ: Նրանք՝ էլ են ապրում և բախտավորություն են ուզում»]:

---

[1] *Անդ, յերես 52:*

[2] *Անդ, յերես 53:*

* * *

Ահա այսպես է ընկալվել Հոկտեմբերյան հեղափոխությունը, պրոլետարական հեղափոխությունը և նրա հանճարեղ առաջնորդի՝ Լենինի կյանքն ու գործը Խորհրդային Արևելքի և Հյուսիսի ժողովուրդների անգիր ստեղծագործության—ֆոլկլորի մեջ։ Ահա այսպես են «վերապրում իրենց անցած պատմություններն յերևակայության մեջ» (Կ. Մարքս) այդ ժողովուրդները։

Այլ կերպ էլ չէր կարող լինել։

Մեծ Հոկտեմբերից անմիջապես հետո, ընդամենը մի տասնամյակի ընթացքում որ ավուր ծավալվող դասակարգային սուր կռիվը դեռ ասիական տնտեսության ձևերը վոչ վերջնականապես հաղթահարած Խորհրդային Արևելքի և Հյուսիսի զանազան մարզերում, վորտեղ հազարավոր կիլոմետրների վրա «Թիմուր յուլի» (յերկաթուղու) մասին հեռավոր գաղափար, պատկերացում անգամ չունեյին, վորտեղ դեռ չէր լսվել հսկա գործարանների ծխանների ձայնը, վորտեղ սոցիալիստական հասարակակարգ կերտող և գլխավորող արդյունաբերական պրոլետարիատը դեռ անըմբռնելի և աներևակայելի սոցիալական մի կատեգորիա յեր, իսկ գիր ու գրականությունը կամ գոյություն չուներ, կամ չնչին փոքրամասնության սեփականությունն եր համարվում,—ահա այստեղ դասակարգային կռիվը և նրա պատկերավորումն ու նկարագրությունը պետք է անհրաժեշտաբար հիմք ընդուներ տեղական միթոլոգիան, այսինքն՝ «բնությունն ու հասարակական ձևերը, վորոնք անգիտակցական յեղանակով մշակված են արդեն ժողովրդի յերևակայության միջոցով»։[1]

---

[1] Կարլ Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, գերմ. թարգմ.՝ Թ. Ավդալբեգյան, խմբ. Ս. Կասյան, Յերևան 1932, եր. 57։

Ներածության ծավալը թույլ չի տալիս մեզ ավելի մանրամասնելու Հոկտեմբերյան հեղափոխության և Լենինի անձնական բարեմասնությունների առանձնահատկությունների վերլուծությունը՝ ըստ խորհրդային ֆոլկլորի։ Այստեղ նշեցինք միայն Լենինի անձի ու գործի հետ կապված մի քանի հիմնական գծեր։ Լենինի հմայքն ու թողած անջնջելի տպավորությունը նրա մասին յերգող ու պատմող ժողովրդական զանգվածների յերևակայության մեջ շատ ավելի բազմակողմանի յե և վառ։ Բավականանանք այսքանով և ամփոփենք Լենինի բարեմասնությունների նկարագիրն ըստ Խորհրդային Արևելքի ֆոլկլորի։

1. Լենինը իմաստուն է։ Նա խորն ու հմտորեն ուսումնասիրել է անխտիր բոլոր գիտությունները ու արհեստները, անգամ բնության լեզուն, նպատակ ունենալով օգնելու միայն ու միայն տանջված մարդկությանը։ Նա մասսաների բարի ուսուցիչն է։

2. Լենինը հրաշագործ ուժի տեր է։ Նա բաց ճակատով է պայքարում թշնամիների դեմ, սակայն, յերբ նա տեսնում է, որ նենգ թշնամիները ժողովրդին ճնշելու և շահագործելու համար դիմում են խարդախության, ինքն էլ նրանց խարդախությանը հակադրում է իր իմաստությունը, «խորամանկությունը» և կարողանում է տապալել նրանց։

3. Լենինը բարեսիրտ է, զգայուն և մասսաների մասին հոգատար։ Չքավորների դժբախտությունը մեծ ցավ է պատճառում նրան, նրա սիրտը ճմլվում է կարեկցանքից և լցվում վրեժի ու «արդար դատաստանի» զգացմունքով։ Նա չքավորների պաշտպանն է, որովհետև

„Ленин сам-бедняк, но родился он
От месяца и звезды и от них получил силу".
[Լենինն ինքը չքավոր է, բայց ծնվել է նա
Լուսնից և աստղից և նրանցից է ստացել իր ուժը]։

Նրա անունից սարսափում են հարուստները։

4. Լենինը բնավորությամբ և ապրելակերպով վերին աստիճանի համեստ է յեղել։ Նստել ու վեր է կացել ամենաչքավորների

հետ և միշտ խուսափել է մատուցած պատվից ու հարգանքից։ Նա ձգտել է մեծ հանդեսներից հեռու մնալ, միշտ գաղտնի յե յերևացել մասսաների մեջ, բայց հենց որ ճանաչել են նրան ու ցանկացել մեծարել, ծածուկ անհայտացել է։

5. Լենինը յերեխաների մեծագույն պաշտպանն է։ Նա սիրում էր նրանց հոր պես։ Ամբողջ իր կյանքը նվիրել է մանուկներին և մահամերձ կտակել.

„Берегите бедняков и детей“.

[Պահպանեցեք չքավորներին և յերեխաներին]։

6. Լենինն արդարադատ է։ Նա խիստ է և պահանջկոտ թե իր և թե ուրիշների նկատմամբ։ Կողմնապահություն նա չգիտե։ Նա պատրաստ է գործի հաջողության համար անգամ ամենախիստ պատժի յենթարկել իր ամենամոտերին, հարազատ բարեկամին և ընկերոջը։

„Поцеловал тут Ленин друга-то (*իմա կոմիսարին*), попрощался с ним, отвернулся и велел расстрелять его. Вот он, Ленин-то, какой... Справедливость любил“... *կամ* „И слова его (Ленина) были справедливы. И от справедливости посохшее дерево дало плоды“,—*յերգում է ուզբեկը*[1]

[Համբուրեց Լենինն իր ընկերոջը (իմա կոմիսարին), հրաժեշտ տվեց նրան, շուռ յեկավ և հրամայեց գնդակահարել նրան։ Ահա թե էդ Լենինն ինչպիսի մարդ էր։ Սիրում էր արդարությունը»... կամ «Յեվ նրա խոսքերն արդար էյին։ Յեվ արդարությունից չորացած ծառը պտուղ տվեց»,—յերգում է ուզբեկը]։

7. Լենինը մասսաների ազատագրության եմբլեմն է, մասսաների բախտավորության սիմբոլը։ Նրա աշխարհ գալով աշխարհում հաստատվեցին խաղաղությունն ու բախտավորությունը։ Նա պայքարը մղում էր միայն աշխատավոր ժողովրդի բախտավորության համար։

---

1 А. В. Пясковский, Ленин в русской народной сказке и восточной легенде, „Молодая гвардия“, 1930, *յերես* 15։

„Когда трясется земля, вы говорите: — землетрясение Нет. Это Ленин раскидывает каменые глыбы, ищет счастье и правду; и когда он найдет их, настанет четвертый миг счастья"[1].

[Յերբ յերկիրը շարժվում է, դուք ասում եք՝ յերկրաշարժ է։ Վոչ։ Այդ Լենինն է դես ու դեն շպրտում քարակոշտերը. նա բախտավորություն և արդարություն է փնտրում։ Յեվ յերբ գտնի, այն ժամանակ կը հասնի բախտավորության չորրորդ վայրկյանը (Ուզբեկական զրույց)]։

Լենինը քանդում, հիմնահատակ է անում հին, դժբախտ աշխարհը և հնի փոխարեն կառուցում է նորը՝

„И сделал страну счастливой,
И дал заветы сделать всех счастливыми
В освобожденных им землях".[2]

[Յեվ յերկիրը դարձրեց բախտավոր,
Յեվ պատգամներ տվեց բախտավոր դարձնելու բոլորին
Իր ազատագրած յերկրներում]։

Լենինը հավասարության և ժողովուրդների համերաշխության հզոր մարգարեն է։ Լենինի անունը կ՛ապրի, քանի ապրում է «բախտավորություն» բառը։ Մեկը մյուսի հոմանիշը, մեկը մյուսի նախադրյալն է։

8. Լենինը մարդկային բարեմասնությունների մարմնացումն է։ Նրա մեջ կենտրոնացած են մարդկային լավագույն զգացմունքներն ու մտքերը, իղձերն ու երազանքները։ Դրա համար ժողովրդական լայն զանգվածները սիրում են նրան, համարում են արյունակից, հարազատ ու «անգին»։

„У всех в крови есть капля крови Ленина,
И мы отстоим свою свободу".

[Բոլորի արյան մեջ կա մի կաթիլ Լենինի արյունից.
Յեվ մենք կը պաշտպանենք մեր ազատությունը]։

---

1 А. В. Пясковский, հիշ. աշխ., յերես 9։

2 Л. Соловьев, հիշ. աշխ., յերես 70։

9. Լենինի հիվանդությունն ու մահը մեծ կսկիծ է պատճառում աշխատավոր մասսաներին։

„Как замечательно прямое на север
Течение реки Селенги,
Так печальна болезнь
Учителя СССР Ульянова".[1]
[Որքան զարմանալի յե Սելենգա գետի հոսանքը դեպի հյուսիս,
Այնքան էլ ցավալի յե ՍՍՀՄ-ի ուսուցիչ Ուլյանովի հիվանդությունը]։

Նրա մահվան լուրը ծանր է աշխատավորի համար։ Նա դառնագին վողբում է Լենինի մահը.

В плоскую, великую Сибирь
Прилетают ведь птицы жарких стран,
Любимый учитель Ленин наш
Ответ свой сказал и скончался.[2]
[Հարթ ու մեծ Սիբիրը
Տաք յերկրներից գալիս են թռչուններ.
Մեր սիրելի ուսուցիչ Լենինը
Պատասխանն իր տվեց ու մեռավ]։

Սիբիրի աշխատավոր գյուղացին այսպես է վողբում հարազատ և սիրելի Լենինի մահը.

„Ой, да вас всигда вспоминать будим,
Ой, никогда—то да мы не забудим вас...
Ой, вашу смерточку да чижалешеньку,
Ой, споминать станим вас на конец жизни...„

---

1 „Советский фольклор", вып. I, Н. Н. Поппе, „К характеристике бурято-монгольской песни послеоктябрьского периода," *յերես 85։*

2 А. В. Пясковский, *հիշ. աշխ., յերես 11։*

[Ա՛խ, մենք ձեզ միշտ կը հիշենք.
Ա՛խ, յերբեք մենք ձեզ չենք մոռանալ...
Ա՛խ, ձեր ծանր մահը,
Ա՛խ, կը հիշենք ձեզ մինչև (մեր) կյանքի վերջը]։

Մեծ հեղափոխականի և ուսուցչի մահվան նվիրված յերգերի քառյակների և դրվագների մեջ այն հաստատ համոզումն է լսվում, վոր Լենինի միայն մարմինն է մեռել, իսկ նրա գործը հավիտենական է, անմահ է։ Անգամ այդ յերգերում կասկածի տակ է առնվում նրա մահվան լուրը։ Ինչու՞։ Վորովհետև մասսան համոզված է.

„Пророки не умирают!
Не может умереть сын месяца и звезды,
У которого в жилах не кровь, а огонь.“ [1]
[Մարգարեները չեն մեռնում.
Չի կարող մեռնել լուսնի և աստղի վորդին,
Վորի յերակներում արյուն չէ (հոսում), այլ կրակ]։

Լենինի մարմինն անապարտ է մնացել, չի նեխվում, մինչդեռ ուրիշինը վաղուց վոչնչացած, հող դարձած կը լիներ։

Լենինը հանգիստ քնած է։ Մերթ ընդ մերթ աչքերը բաց է անում և նրանք ուրախությամբ լցվում են, վորովհետև նրա գործը շարունակվում է։

Յեվ վոչ միայն Լենինի գործն է անմահ, այլ նա ինքն էլ է անմահ և նա դեռ գալու յե, նա քնից զարթնելու յե...[1]

„Теперь он зарыт за четыре тысячи верст,
Но глазом нижет землю...
И если кто обидит бедного дехкана,
То он встанет и железной рукой схватит обидчика,
И будет с ним жесток, как тигр“..[2]

[1] Л. Соловьев, հիշ. աշխ., յերես 99։
[2] Անդ, յերես 88։

[Հիմա նա թաղված է (մեզնից) չորս հազար վերստ հեռու,—
Բայց սուր աչքերով դիտում է յերկիրը…
Յեվ յեթե մեկը վիրավորի խեղճ գեղջկանին,
Ապա նա վեր կը կենա և՝ յերկաթե ձեռքերով կը բռնի
վիրավորողին
Յեվ վագրի նման դաժան կը վարվի նրա հետ]։

Ահա այսպես է հանդես յեկել Վ. Ի. Լենինը Խորհրդային Արևելքի ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ։

Նա մի բացառիկ հերոս է, վորին չի կարելի համեմատել վոչոքի և վոչ մի բանի հետ

„С кем я могу сравнить светильник земли?
Ни с кем! Таких не было!
Таких нет!
Таких не будет!
Не повторяет земля два раза таких людей!“ [1]

[Ո՞ւմ հետ կարող եմ համեմատել յերկրիս լուսատուն (իմա Լենինին)
Վոչոքի հետ։
Նմանը չի յեղել։
Նմանը չկա։
Նմանը չի լինելու։
Աշխարհս չի ունենում յերկու անգամ նման մարդիկ]։

7

Հոկտեմբերի ու Վ. Ի. Լենինի մասին խորհրդային ֆոլկլորի մասնավորապես Խորհրդային Արևելքի ֆոլկլորի մեջ հյուսած յերգված ու պատմած ստեղծագործությունների հարևանցի վերլուծությունը տալուց հետո մի քանի նկատողություն և դիտողություն էլ անենք հայկական նյութերի վերաբերյալ։

1 Մագզանների—Թափառաշրջիկ քարոզիչ-ասացողների վողբը Լենինի մահվան մասին, տես Л. Соловьев, հիշ. աշխ., յերես 115։

Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա ծնունդ Նոյեմբերյան հեղափոխությունը խոր արմատներ են ձգել հայ աշխատավորի հոգեոր անդաստանում. հասարակական և տնտեսական սուր շրջադարձ են առաջացրել նաև այդ հիմնական փոփոխությունները, հեղափոխությունը կրոնների և գլխավորողների վերնաշենքային աշխարհում: Նախկին «կուռքերը» տապալվել են. դարերի ընթացքում փորձված և սիրված զրույցն ու ավանդությունը, վեպն ու վիպերգը. խաղն ու յերգը, առակն ու առածը հետզհետե տեղի յեն տալիս նորին, նոր գաղափարախոսությամբ համեմված ֆոլկլորին:

Այսօր արդեն մեր աշխատավորության կենտրոններում՝ գործարանում, հանքերում, համայնական դաշտերում և սոցիալիստական շինարարության մեջ հնչում են նոր յերգեր և խաղեր:

Հայ աշխատավորության հասարակական մտքի զարգացման պատմության ուսումնասիրողը՝ հիմնարկություն, թե անհատ, չի կարող անտարբեր անցնել, անտես թողնել հասարակական-քաղաքական մտքի այս բեկումը:

Համապատասխան գիտահետազոտական հիմնարկությունները վերջին 2—3 տարիների ընթացքում հատուկ ուշադրության են առել խորհրդային նոր ֆոլկլորը. կազմակերպել են անհատական գրանցումներ ու գիտարշավներ և գրի յեն առել մեծ քանակության ֆոլկլորային նյութեր՝ նվիրված Հոկտեմբերյան-Նոյեմբերյան հեղափոխությանը, խորհրդային իրավակարգին և սոցիալիստական շինարարությանը:

Ցարդ հավաքած և գրի առնված հայկական խորհրդային ֆոլկլորն ըստ ժանրերի և թեմատիկայի չի տարբերվում Միության այլ ժողովուրդների ֆոլկլորային նյութերից: Անշուշտ տարբերությունները բխում են գեոգրաֆիական տեղային պայմաններից, տվյալ յերկրի, ներկա դեպքում Հայաստանի, քաղաքական և սոցիալական հարաբերություններից:

Հայկական նյութերի մեծագույն մասը յերգեր ու խաղեր են. ավելի նվազ ներկայացված է արձակային ժանրը: Այս վերջին յերևույթը բնական է և բխում է արձակային ստեղծագործության,

այսպես կոչված «ժողովրդական վեպի» և հեքիաթի սյուժեներից։ Նյութը կազմվում է վոչ անմիջականորեն և վոչ պատմական իրադարձության համընթաց և համազարկ։ Անհրաժեշտ են ժամանակի փոքր ինչ հեռավոր դիստանցիա և տպավորությունների և զգացմունքների կուտակում, խտացում և անմիջական զգացողության վորոշ չափի բթացում։ Եպիքական ժանրը մասսաների մեջ յերկար ժամանակի ընթացքում է կազմվում և ձևավորվում։

Ընդհանրապես բոլոր ժողովուրդների եպիքական ստեղծագործության պրոցեսն սկսում է լիրիզմով համեմված յերգերից, վորի ձյական տարրերն են կազմում այս կամ այն անհատի, արտակարգ հասարակական յերևույթի կամ միջադեպի հանդեպ յերգչի ունեցած խոր ապրումը, ապա միջադեպի կամ իրադարձության նկարագրությունը։ Հետագայում այդ յերգը փոփոխության է յենթարկվում արտահայտված զգացմունքների և ապրումների աստիճանական թուլացման գծով, «վերախմբագրվում» է և վեր է ածվում անցյալի, արդեն ավանդական դարձած միջադեպի կամ դեպքի նվազ զգացումնալից նկարագրության։ Այս ետապում նախնական յերգը դառնում է «պատմական յերգ», պատմական իրադարձության, այսպես ասած, չափածո նկարագրություն։ Պատմական յերգերը հետագայում անալոգիկ պատմական յեղելությունների ազդեցությունը կրելով կարող են կոնտամինացիոն և ասիմիլացիայի կարգով նորանոր հավելումների և հապավումների յենթարկվել, հին ու նոր պատմական, հաճախ նաև առասպելական մոտիվներ և գրույցներ ընդունել, վերամշակվել և վերածվել եպիքական մեծ յերկասիրության—«ժողովրդական վեպի»։ Այս է եպիքական ստեղծագործության որինաչափ զարգացումը, նրա գոյացման պրոցեսը։

Խորհրդային ֆոլկլորը եպիքական յերկի գոյացման այդ պրոցեսը դեռ չի ապրել։ Խորհրդային եպիքական ժանրը, վորքան մեզ հայտնի յե, մասնավորապես հայկականը, լավագույն դեպքում դեռ մնում է իբրև «պատմական յերգ»։ Դեռ ավելին. խորհրդային եպոս ստեղծվելու համար բացակայում են ներկայումս նրա գոյության հիմնական պայմանները, նախադրյալները, առասպելաբանությունը։ Վերջինս բոլորովին բացակայում է հայկական նյութերի մեջ։ Սո-

ցիալիզմ կառուցող աշխատավորությունը, որը ժխտում է ամեն մի առասպելաբանական վերաբերմունք դեպի բնությունը, ինչպես և բնության ամեն մի առասպելաբանումն, չի կարող վիպերգական բանաստեղծություն ստեղծել: Ցեթն Աքիլլեսը չի կարող գոյություն ունենալ վառոդի ու կապարի ժամանակ, ընդհանրապես Իլիականը՝ տպագրական մամուլի և տպագրական մեքենայի հետ միասին, ապա մեր դարաշրջանում, սոցիալիզմ կառուցող պրոլետարիատի դարաշրջանում, երբ լայնածավալ Միության ամենախուլ ընկած անկյուններն անգամ հագեցված են մեր լուսավոր դարի գիտության, արվեստի և տեխնիկայի հայտնագործումներով և նվաճումներով, երբ համատարած վերացված է անգրագիտությունը, չի կարող խոսք անգամ լինել վիպերգության, ժողովրդական վեպի նորանման կամ վերակենդանացման մասին:

Մեր դարաշրջանում նոր դյուցազներգություն—ժողովրդական վեպ չի կարող ստեղծվել: Մենք այդ կտրականապես ժխտում ենք: Սակայն նույնը չենք կարող ասել ֆոլկլորային մյուս ժանրերի, մանավորապես լիրիկական ստեղծագործությունների մասին:

Լիրիկական ժանրերը դեռ յերկար կ՚ապրեն: Այդ համոզմունքը բխում է հենց լիրիկական ժանրերի էությունից: Նրանք համընթաց են հասարակական իրադարձություններին, համազարկ են կյանքի ու աշխատանքի յելևէջներին ու կրում են անմիջական տպավորության կնիքը: Հասարակության ու անհատի կյանքի յուրաքանչյուր երևույթը, դեպքն ու իրադարձությունը, լինեն այդպիսիները քաղաքական բնույթի, թե ընտանեկան-կենցաղային, ընդունակ են հասարակության անդամին հուզելու, իսկ նրանցից ընդունակներին անգամ ստեղծագործական թափ ներշնչելու,—ասելու, երգելու և կերտելու այդ երևույթների կապակցությամբ և անթիվ բազմաթիվ երգեր, խաղեր ու զրույցներ:

Հասարակության ու ընտանիքի, կոլեկտիվի և անհատի կյանքը բազմազան պայմաններում է անցնում: Նա ընթանում է մերթ խաղաղ շինարարության պայմաններում, տնտեսական բարիքներ կուտակելու գծով, մերթ փոթորկվում է ռազմի դաշտերում կամ

բնությունը նվաճելու բնագավառում, մերթ սահմանափակվում է ընտանիքի և անհատի շահերի շրջանակում և այլն։

Հասարակության ամեն մի անդամ, հատկապես զգայուններն ու տպավորվողները, հասարակության յուրաքանչյուր արտակարգ, անգամ սովորական յերևույթից կարող է հուզվել, վոգևորվել և իր ապրումներն բառերով (բանավոր—անգիր շրջանում կամ գրավոր—գիր ու գրականության շրջանում) կամ ռիթմ-տաղային յեղանակով արտահայտել։ Յեվ յեթե անհատականորեն ստեղծագործած, հորինված այդ յերգն ու խաղը համակում են հասարակության մյուս անդամներին, ապա դրանք մոռացության տալով սկզբնական հեղինակին՝ բերանից բերան են անցնում, հաճախ փոփոխության յենթարկվում հավելման և հապավման գծով և հարատևում դարեր շարունակ։ Հնագույն ժամանակաշրջանների ապրումներն ու յերևույթները պատկերող և արտահայտող լիրիկական ժանրերը քաղաքական-տնտեսական նոր պայմաններում ոչ նույնաչափորեն և աստիճանաբար կը վերանան, սակայն նրանց տեղը կը բռնեն նոր դարաշրջանի հասարակության ոգուն ու գիտակցությանը համապատասխանող յերգերն ու խաղերը։

Այս ժողովածուի մեջ տեղ գտած ֆոլկլորային նյութերը բաժանվում են ըստ «հեղինակության» յերեք հիմնական մասերի. ա) ժողովրդական խաղեր—իսկական ֆոլկլոր, վորոնք կրում են հայ ժողովրդական բանաստեղծության բույրն ու կնիքը, և վորոնց հեղինակներն անհայտ են, բ) հայ ժողովրդական բանաստեղծության վոճով կազմված յերգեր ու խաղեր, վորոնց հեղինակները հայտնի յեն և վորոնք ըստ վոճի և հորինման յեղանակների սերտ նմանություններ են ժողովրդական խաղերին, յեվ գերի և վերջապես, գ) աշուղական յերգեր, գլխավորապես դաստանները։

Այս խմբի յերգերը, ինչպես վերը հիշել ենք, մենք ֆոլկլոր ենք համարում, բայց և այնպես լույս ենք ընծայում ֆոլկլորային նյութերի հետ միայն հետևյալ նկատառումներով՝ 1) աշուղական յերգերը՝ անհատական ստեղծագործություն լինելով հանդերձ՝ արտահայտում են աշխատավոր մասսայի տրամադրությունները

խորհրդային իշխանության, Հոկտեմբերյան հեղափոխության և նրա առաջնորդ՝ Լենինի հանդեպ, 2) աշուղները մեր օրերում բեկում են առաջացրել իրենց ավանդական ռեպերտուարի մեջ անցնելով նոր թեմատիկայի, 3) նրանք, որպես աշխատավոր գյուղացության ներկայացուցիչներ և նրանց սոցիալական պատվերի կատարողներ, յուրովի տարածում են Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարախոսությունն աշխատավոր մասսայի մեջ, գովերգում են սոցշինարարության նվաճումները և պարսավում են ու խարազանում ֆեոդալիզմի ու կապիտալիզմի մնացորդները, ծաղրում և ծանակում հակահեղափոխական գաղափարախոսության կրողներին մեր գյուղում (քյոխվա, տերտեր, պրիստավ, դաշնակ և այլն)։

Ըստ ձևի և տաղաչափության այս հավաքածուն համարյա չի տարբերվում նախախորհրդային ֆոլկլորից։ Դրանք սոսկ նմանություններ են դեռ այսօր աշխատավոր գյուղացության մեջ ապրող, յերգվող ու ասվող յերգ ու խաղերին։ Հաճախ անգամ հին քառյակի առաջին յերկու տողն անփոփոխ կրկնվում են նորի մեջ և միայն վերջին յերկուսն են տարբերվում հնից կամ հին յերկտողի առաջին տողը հին է, իսկ յերկրորդը նոր, կամ հակառակը, օրինակ՝

«Արեվ ծագեց ամպի ծերեն,
Լենին մեզի եկավ տերեն»...

կամ

«Ցամլին կու գեր, ինչ անուշ եր,
Լենին եկավ խաբախուշ եր»։

կամ

«Լենին եկավ ամպի պես.
Մեզի պահեց վարդի պես»...

Հրատարակվող նյութերի մեջ առանձնակի տեղ է գրավում «Լենին փաշա» ընդարձակ պատմական յերգը։ Նրա հեղինակն ու պատմողն անտարակույս բանաստեղծական ձիրք են ունեցել, քաջ ծանոթ են յեղել մեր վիպական բանաստեղծության և ոգտագործել

քեն նրա ստեղծագործական եղանակները, ձևն ու պատկերները և կրում են լորը մի միաձուլ բանաստեղծություն, որը աչքի չի ընկնում թե՛ երգեցողական և թե՛ գեղարվեստական ձևավորման տեսակետներից։ Տեղ-տեղ զգացվում է մեր հոյակապ ժողովրդական վեպի «Սասնա ծռերի» ազդեցությունը։ Եվ այդ բնական է ու սպասելի։ Հեղինակն ու ասացողը ծագում են այն շրջանից (Թիգանից), որոնց բնակիչների մեջ մինչև օրս էլ կենդանի է մեր ժողովրդական վեպը։ Բացի դրանից նրանք արհեստով էլ գըլարներ են, իսկ վերջիններս հայ ժողովրդական վեպի, «Սասնա ծռերի», ինչպես և հայ-իրանական վեպի «Ռուստամ-Զալի» լավագույն պահպանողներն ու ասացողներ են եղել։

«Ղանլին փաշայի» մեջ կան այնպիսի հարուստ գեղարվեստական նկարագրություններ, որ կարող են մեր վիպական ստեղծագործության գոհարներ համարվել և պատիվ կը բերեն անգամ մեր մեծ բանաստեղծներին։ Այդպիսի նկարագրությունների մեջ, մանավանդ աչքի են ընկնում ջրահավաքի և ճակատամարտի տեսարանները, օրինակ՝

«Ղանլին գաշխար, գլսար, գըքար ըլմեն դեխեն.
Ղանլին ծառեր, քար, գըկապան ըլմեն դեխեն.
Ղանլին գետեր, մերի, չըպղը, ըլմեն դեխեն.
Ղանլին տաշտեր, գառտ ը պախեր ըլմեն դեխեն.
Ղանլին ջրուա, չայիր-չիման ըլմեն դեխեն.
Ղանլին գըծով, հախպուր, ոսման ըլմեն դեխեն...

Զարկին, զարկվան, դուման եկավ, հախչար պանից.
Զարկին, զարկվան, լեշը փռվավ տափակ-տափակ.
Ըսպանվողաց արուն եկավ, կալից գըդես.
Նա արնագետ քար կըլտորեր ըլմանաքաշ»...

Ղանլին կրնկակոխ «քաղցածներաց ողդուէ» հաղթապանծ արշավի նկարագրության ոճը հարուստ է և պատկերավոր.

«Հանուց անցավ քաղցածներաց ողդուն մեկեն.
Հոքմաթաց դուրը խառնվավ հերուր, փախավ ցրիվ...
Ղանլին փաշի դուրըը թափավ քանց ըլմուրեխ.

Քանց ըրհարու սել ը սելավ գետ վարարած.
Քանց գէլթանը՝ վարար կարկուտ... գինչ պատուհաս.
Քանց գըժավու ֆըրթունա, պես ծով ը ծաման,
Քանց սամ յելլ... երկինք, կեռինք խուռը խավանս։

«Լենինի փաշանձ» դուրկ չի նաև հումորից։ Այստեղ ծաղրվում ու ծանակվում է «դըռ դասղալոշ ըլպաց ոնբանձ», «պլ՛ան սարսաղ» ցարը։ Կծու հեղնանքով բնութագրվում են «Ջանպալ» դանգիններն ու «Նոքըմալթայ գուրքն ու դույսպայրտը»։

Այսպիսի պատկերավոր համեմատներ քիչ կան ոչ միայն հայկական, այլև Խորհրդային Միության ժողովուրդների՝ Լենինին և Մեծ Հոկտեմբերին նվիրված ֆոլկլորի մեջ։

Սակայն գեղարվեստականությունը չէ խորհրդային, հատկապես խորհրդային հայ ֆոլկլորի արժեքը. այդ չէ նրա նշանակությունը։ Խորհրդային ֆոլկլորը, ինչպես վերը ցույց տվինք, մեծ արժեք է քաղաքական-իդեոլոգիական բովանդակության տեսակետից։ Նա յուրովի և ճշգրիտ ցուցանիշն է Հոկտեմբերյան հեղափոխության անդրադարձին հարած աշխատավոր ժողովրդի տրամադրությունների։ Աշխատավորությունն այդ անպաճույճ հաճախ պրիմիտիվ գեղարվեստական ստեղծագործությունների մեջ լիաթոք յերգում է իր խոր ապրումները՝ կապված Լենինի, հեղափոխության և նոր կենցաղի հետ, անկեղծ և անմիջական պատմում է ու գովաբանում սոցիալիզմի կառուցման ընթացքում կատարած իր հաջողությունների ու նվաճումների մասին, ցասկոտ պախարակում է պրոլետարական հեղափոխության ճակատ ըողներին, վոր և հանում նոր, լուսավոր կյանքը, խարազանում է հետամնացությունն, կենցաղային և բարոյական հին դերապրուկները։ Հայկական խորհրդային ֆոլկլորի մեջ գյուղի նոր տերերը—աշխատավորությունը հակադրված է հին տերերին՝ քեթխուդային, կուլակին ու տերտերին. նոր իշխանությունը—գյուղխորհուրդն ու կոոպերատիվը՝ հին իշխանությանը—քյոխվային ու պրիստավին։ Խարխլած ու մամռապատ յերբեմնի «լուսավորության կենտրոնների»—յեկեղեցու և ծխական, տերտերական դպրոցի փոխարեն խոյանում են գյուղում խորհրդային դպրոցն ու խրճիթ-ընթերցարանը, վորոնք

կոմունիստական դաստիարակության անսպառ աղբյուրներն են հանդիսանում ստեղծվող կառուցող մեր յերկրում։ Հին գյուղի խարխուլ փլատակների վրա բարձրանում է նոր, հեղափոխական գյուղը. հին կենցաղը մեռնում է, չքանում, իսկ նրա փոխարեն զարգանում է նոր կյանքը, նոր տնտեսակարգով—համայնական սեփականությամբ և նոր հասկացողություններով—կոմունիստական գաղափարախոսությամբ։

Ո՞վ է հեղաշրջել, հիմնովին փոխել հին կյանքը և ստեղծել նորը, լուսավորը։—Մեծ Հոկտեմբերն ու նրա հանճարեղ առաջնորդ Լենինը։

Աշխատավորական զանգվածները սրտանց ու վոգևորված գովերգում են Մեծ Հոկտեմբերը և Վ. Ի. Լենինին։

Լենինը աշխատավորության բոլոր կարիքները հոգացող առատաբուխ աղբյուրն է. նա չի բաշխում կարիքավոր գյուղացուն ամեն ինչ («Մեր Յաշոյի խաղը»)։ Լենինն աշխատավորության «հույս ու ճար է», «շափաղ լուս է», «վոսկի պիրան է»։ Նա «շնորքի ծով էր», «մեծ հոքի յեր, խղճով պարէն», «քյառիբաց խեյրին կր խոսեր, աշխարք խավարական կ'ուզեր»։

«Աշխարքը խավարական» դարձնելու համար անհրաժեշտ էր վոր Լենինը «յ'երկրի կարքը» «կլուխն ի վեր» դարձներ։ Եվ նա այդ անում էր «Հոքըմաթի դուռը» ջարդելով և «հոքըմաթբաշի, ենա բասաց ճոչ սուլթանին»—ցարին գլխատելուց հետո՝ Լենինը կենսագործում է իր ազատարար ծրագիրը։

«Են առաջվա զանգիններաց երկից կառու,
Յիկց ամեն ինչ ծեռներաց, թողից անտուն։
Են առաջվա քյարբիներաց երկից փաշա—
Զըմեն մեկ-մեկ տատամուր ին մըչ գլխանին—
Են առաջվա բեգեր, աղեք, չընից յեսիր։
Զըմեն պանից, կոտրից եսկից, քշից ներսիր։
Են առաջվա նոքար, չոբան, զըլըզմաթքար,
Զըմեն տարավ, տվից հուսըմ, արից սարքար»։

Լենինն ազգերի համերաշխության մեծ առաջնորդն է։ Նա իրար թշնամի ազգերին ախպերացնում է՝ «խայրն, թուրքին ախպերացուց» և նրանց բոլորին դասակարգային գիտակցությամբ զինելով առաջնորդում է դասակարգային թշնամու—«ղանդրինբաց» դեմ։ Վերջապես Լենինը հատուկ ուշադրություն է դարձնում արևելքի, մասնավորապես հայ աշխատավորուհու իրավազուրկ դրության վրա և ազատում է նրան դարերի «ավանդների» կապանքներից և հավասարեցնում տղամարդկանց։ Ազատագրված հայ աշխատավորուհին վոգևորությամբ իր յերախտագիտությունն է հայտնում Լենինին.

«Լենու մասսար մե ազատեց,
Կնիկ մարթերաց խավորեց.
Ցես մեռնիմ Լենու զակոնին.
Ամա́ն Լենին, մաղա́թ Լենին»։

Աշխատավոր գյուղացությունը Մեծ Հոկտեմբերի և իմաստուն Լենինի շնորհիվ ազատագրվելով անիծյալ անցյալից և սոցիալիզմի կառուցման յերջանիկ դարաշրջանը թևակոխելով չի մոռանում իր ազատարարին, գեղջկական պարզությամբ և ջերմությամբ գովաբանում է «տաղ կլուխ», «կարճ մուրուք» առաջնորդին, նրա «սըֆաթը», «բուսաթը», «դալամը», «բոյն ու բաժն ու գլուղն» և բուռն վոգևորությամբ, ցնծագին յերգում է՝

«Պանոնիտ մատաղ, Լենին ջա́ն, ջա́ն,
Անուշնիտ մատաղ, Լենին ջան, ջա́ն...
Բուսաթիտ մեռնեմ, Լենին ջան, ջա́ն,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջա́ն»...

Խորհրդային հայ ֆոլկլորը զերծ է առասպելաբանությունից և կրոնական հայեցքից։ Մեր աշխատավոր մասսան ռեալիստական յեղանակով է իր զգացումները դրսևորում Լենինի և Հոկտեմբերյան-Նոյեմբերյան հեղափոխությունների մասին։ Նա սառն զգաստությամբ կշռադատում է իր մռայլ անցյալը, համեմատում է յերջանիկ և անվտանգ խորհրդային ներկան ցարական, դաշնակցական

շրջանների սարսափելի, մահաբեր ու ավերածավեր կոտորածների հետ, հիշում ե ու սարսռում և անվերապահորեն հարում սոցիալիզմին։

Սա յե մեր նոր ֆոլկլորի մեծագույն արժեքը։ Նոր ֆոլկլորը սոցիալիստական շինարարության ընդհանրացված աշխատավորության կենսուրախ զգացումների և ապրումների արտահայտությունն ե։

ԼԵՆԻՆԸ
ՀԱՅ ՖՈԼԿԼՈՐԻ ՄԵՋ

ԼԵՆԸՆՈՒ ԽԱՂ.

Լենի եկավ ինչըխ պաղե,
 Վա՜յ լե, լե, լե, լե.
Մե՜ ազատեց շատ սթամե,
 Վա՜յ լո, լո, լո, լո։

Լենի վոր կա՝ մեկ թավատ եր,
 Վա՜յ լե, լե, լե, լե.
Լենու կոնծեր ոզձլաթ եր,
 Վա՜յ լո, լո, լո, լո։

Լենու արած շատ իրավ եր,
 Վա՜յ լե, լե, լե, լե.
Լենու կոնծեր հախշարք չավ եր,
 Վա՜յ լո, լո, լո, լո։

Լենու զորք եր կարմիր պանակ,
 Վա՜յ լե, լե, լե, լե.
Թոմագ ինն ամմեն ժամանակ,
 Վա՜յ լո, լո, լո, լո։

Լենու շնուխք պիրեց մեզի,
Վա՜յ լե, լե, լե, լե.
Լենու պիրած մե կոլխոզ ի,
Վա՜յ լո, լո, լո, լո։

Արժի հախշրի—դունյի մալին,
Վա՜յ լե, լե, լե, լե.
Լենու պիրած՝ Շիրկանալ ի,
Վա՜յ լո, լո, լո, լո։

Լենու դուշման ի Տրուսկին[1],
Վա՜յ լե, լե, լե, լե.
Վիրուց, փախավ սաղ մե վոսկին,
Վա՜յ լո, լո, լո, լո։

Մեռնիմ լինու վարթ ջամալին,
Վա՜յ լե, լե, լե, լե.
Լենու հաշկեութ ի Ըստալին,
Վա՜յ լո, լո, լո, լո։

Ասել է Ականցի (Տաճկահայաստան) 62 տարեկան անգրագետ պառավ Նուբար Խնկոսյանը

1 Տրոցկի։

ՍԱՎԵՏԻ «ԼԵ-ԼԵ»-Ն

Ղուզլիղաղը եկավ ձունը,
Կեցցե Լենինի անունը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Սարի վրա շինենք շենքը,
Կեցցե Լենինի օրենքը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Ավել արի, եկավ թողը,
Կեցցե Լենինի կոլխոզը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Փոխվել ա աշխարք ալամը,
Կեցցե Լենինի ղալամը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Կարմիր արոշակի գունը,
Կեցցե Լենինի կոմունը·
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Ջուր տարա, լվացի պուրթը,
Կեցցե Լենինի խորհուրդը·
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Ջալից կլտրի, պերի փետը,
Կեցցե Լենինի սավետը·
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Երեվանու պերին աղը,
Ընեմ Լենինի մատաղը·
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ։

Ասել է Համզաչիմանցի Յեղիսաբեթ Գեվորգյանը, անգրագետ· լսել է ուրիշներից։

ԼԵՆՈՒ ԽԱՂ

Լենու մասսար մե ազատեց,
Կնիկ, մարթերաց խավարեց.
Ցես մեռնեմ Լենու զակոնին,
Ամա՜ն Լենին, մազա՜թ Լենին։

Սարք ու կարք տրեց մեջ աշխրին,
Զորնին տվեց ուսում.
Խային, թուրքին ախպերացուց,
Ամա՜ն Լենին, մազա՜թ Լենին։

Քամին կու գեր, ինչ անուշ եր,
Լենին եկավ խարախուշ եր.
Շուն տաշնակաց պանը պոշ եր,
Ամա՜ն Լենին, մազա՜թ Լենին։

Ջուրը կու գեր պարցր սարեն,
Լենին խաբար եր մեր հալեն.
Ենիկ մեղի հույս ու ճար ի,
Ամա՜ն Լենին, մազա՜թ Լենին։

Արեվ ծաթեց ամպի ծերեն,
Լենին մեզի եկավ տերեն.
Ամեն պարի մե կը պիրի,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Լենի վոր կա, շափաղ լոս եր,
Բա՜ցըբաց խեյրին կը խոսեր.
Ախշարք խավասարական կ՚ուզեր,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Սարից կու գեր բալլա-պորան,
Մեր Լենին եր վոսկի պերան.
Դուշմընի տուն տառնա վերան,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Մեր Լենու անուն պարցր ի,
Խոսկ ու գրուցը քաղցր ի.
Թող դուշման նստի, լաց ըլնի,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Լենուն մատաղ ըլնի Սումբոն,
Թաղացուց իմ Ջընգըլը Թումբան.
Ենու ջա՜նվար ջանին ղուրբան,
Ամա՜ն Լենին, մադա՜թ Լենին։

Առել է Արթիկում վերաբնակված բնիկ Ալիանցի (Տաճկահայաստան) Սումբոն (Սմբատ), 38 տարեկան, անգրագետ․ լսել է ուրիշներից։

ՄԸՐ ԽԱԶՈՑԻ ԽԱՂ

— Տղա՛ թաչո, բաթրա՛ք թաչո,
Քո՞ խփին փոստև փափաղի տեղ,
Կլխիտ դրած ես շափախկեն,
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե։

— Կլխիս դրած ես շափախկեն,
Լենի՛ն ի տվե, Լենի՛ն ի տվե։

— Տղա՛ թաչո, նոքա՛՛ր թաչո,
Քո ջընդըռ արխալըղի տեղ,
Վրիտ թա՛զա եսա ֆուրինջ,
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե։

— Վրիս հա՛քած թա՛զա ֆուրինջ,
Լենի՛ն ի տվե, վո՞վ ի տվե։

— Տղա՛ թաչո, ֆաղի՛ր թաչո,
Քո քըրքըրված արայի տեղ,
Վրիտ մահուդ եսա փալթո,
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե։

— Տմ, չե՞մ կլոռ՝ վօվ ի ավե,
Լենլին ի ավե, վօվ ի ավե։

— Տղմ Խաչո, յեթը՛մ Խաչո,
Քո̈ կազիլե մեշկալի տեղ,
Սեւսուփ, խորոտ եսա կոտին,
Վօվ ի ավե, վօվ ի ավե։

— Կապած սեւսուփ կարմիր կոտիս,
Լենլին ի ավե, Լենլին ի ավե։

— Տղմ Խաչո, քӧսը՛փ Խաչո,
Քո̈ քӧմուր շալիկ-թմբընի տեղ,
Ես փաթըսղա չամաշուրներ
Վօվ ի ավե, վօվ ի ավե։

— Իմ փաթըսղա չամաշուրներ
Լենլին ի ավե, վօվ ի ավե։

— Տղմ Խաչո, չըփլմխ Խաչո,
Քո̈ փաթավա տրեխներայ տեղ,
Եսա վզնով սեվ սապոքներ
Վօվ ի ավե, վօվ ի ավե։

— Եսա վզնով սեվ սապոքներ
Լենլին ի ավե, վօվ ի ավե։

— Տղմ Խաչո, յեսը՛ր Խաչո,
Քո̈ ըւկըված չափ լեզվի տեղ,
Եսա թրաշ, ճարտար խոսքեր,
Վօվ ի ավե, վօվ ի ավե։

— Եսա թրաշ, ճարտար խուքեր,
Լենինն ի ավե, վո՜վ ի ավե։

— Տղա՛ Մաչո, խո՛րած Մաչո,
Բո՜ անտաշ, ղըռ շարժումի տեղ,
Եսա ասըմ, կլտնակըթոն
Վո՜վ ի ավե, վո՜վ ի ավե։

— Եսա ասըմ, կլտնակըթոն
Լենինն ի ավե, վո՜վ ի ավե։

Ասել է Ակյանցի (Տաճկահայաստան) Զանո Գրիգորյանը, 28 տարեկան, անգրագետ։ Երգն ունի հատուկ յեղանակ. շատ տարածված է Գառնիի յենթաշրջանի գյուղերում։

*
* *

Պա՛, պա՛, պա՛, Լենի՛ն բաբա,
Մենշևիկ փախավ, գնաց,
Տաշնակը յետ չմնաց.
Դու հասցուր մեզ շոր ու հաց։

Պա՛, պա՛, պա՛, Լենի՛ն բաբա,
Հարստներ մռան ծակը,
Տերտերներն էլ քամակը,
Դու մացիր մեր քոմագը։

Պա՛, պա՛, պա՛, Լենի՛ն բաբա,
Նիկոլի կլոխն ադիր,
Աղա-բեգերը թաղիր,
Լավ ը վառ ջոկիր, մաղիր։

Պա՛, պա՛, պա՛, Լենի՛ն բաբա,
Խլին աշխարհը խարաբա
Շենացուցիր, շինիր աբադ,
Զուղողի տունը բարբադ։

Ասել է Գյուլեցի անվարժ բանվոր Հայրո Պետրոսյանը, 38 տարեկան, անգրագետ. լսել է ուրիշներից։

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Թել եմ մանում, կան ունի,
Մեռնեմ Լենու կանոնին.
Կանոնիտ մատաղ, Լենին ջան, ջա՜ն,
Անունիտ մատաղ, Լենին ջան, ջա՜ն։

Պարակ անձրեվ կը կաթի,
Մեռնեմ Լենու սըֆաթին.
Սֆաթիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն։

Յես կանչեմ ծե երկուսին,
Մեռնեմ Լենու մորուսին.
Մորուսիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն։

Աշկըս ընկավ սհաթին,
Մեռնեմ Լենու բուսաթին.
Բուսաթիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն։

Ծենը տամ աշխար ալամին,
Մեռնեմ Լենու ղալամին.
Ղալամիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն։

Թելս կծկեր եմ կաժին,
Մեռնեմ բոյին ու բաժին.
Քո բաժին մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն։

Արի եթանք մեր եքին,
Մեռնեմ Լենու դիլաքին.
Դիլաքիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջա՜ն։

Ասել է Ալջավազցի (Տաճկահայաստան) տեղահանված բանվոր Խերան Մկրտչյանը, 30 տարեկան, անգրագետ։ Լսել է ուրիշներից։

* * *

Պճիճ կեղին տրեց ղակուն,
Լենինո, Լենինո.
Մեռնեմ մեր Լենինու խոքուն,
Լենինո, ջանինո։

Նոքյոր, խզմաթ տեր ին՝ տառե,
Լենինո, Լենինո.
Մեկ-մեկու ընկեր ին տառե,
Լենինո, ջանինո։

Սաղ ճժուկներ ըշկո լ մտան,
Լենինո, Լենինո.
Լիխկայաններ հուսում կ՚խտան,
Լենինո, ջանինո։

Լենի հաշխար շինեց տրախտ,
Լենինո, Լենինո.
Կտրեց քօխի-քօսուրաց բախտ,
Լենինո, ջանինո։

Լենի քշեց քօխվա, գդիր,
Լենինո, Լենինո.
Թօռնը ապրի, քեզի խղին,
Լենինո, Ջանինո։

Լենի հաշխար շինեց խավար,
Լենինո, Լենինո.
Լենի ուժի քօր ը քօար,
Լենինո, Ջանինո։

Ասել է Ղշլաղ գյուղացի (Նոր-Բայազեդի շրջան) Զաքո Ասաքելյանը, 30 տարեկան, անգրագետ այրին. բանվորուհի յե. լսել է ուրիշներից։

ԼԵՆԻՆԻ ՋԱՆԻՄԱՆ

Ըստոլի վըրի գինին,
Բոյիդ մեռնիմ.
Կեցցե մեր ընկեր Լենին,
Յարն անուշ։

Ըստոլի վըրի մանած,
Ջանիդ մեռնիմ.
Խմենք Լենինի կենաց,
Յարն անուշ։

Թիֆլիսա բերին դանակ,
Հոգուդ մեռնիմ.
Կեցցե մեր կարմիր բանակ,
Յարն անուշ։

Կոր[illegible]արտը գարի յա,
Բոյիդ մեռնիմ.
Կոմսոմոլի տարի յա,
Յարն անուշ։

Ջերիցս հանի նաղան,
Բոյիդ մեռնիմ․
Փչաներ ղաշնակցական,
Յարն անուշ։

Կըոր արտը կորել ա,
Ջանիդ մեռնիմ․
Կոմունիստի որենք ա,
Յարն անուշ։

Ասել է Ապարանի շրջանի Կուչակ գյուղացուհի Ջեռեդ Դավթյանը, 18 տարեկան, անգրագետ։ Գրի է առել Արամ Ղանալանյանը։

ԼԵՆԻՆԻ ԽԱՂԸ

Լենինի սալըղն եկավ,
Թա՜ըր-քա՜սուրն ուրախացավ,
Համփա-հարուստ նստավ լացավ,
Վա՜յ, Լենինի ջանին մատաղ,
Ըր դա՜րա՜-դիվանին մատաղ։

Բատրակները վերցրին կեղը,
Հարուստ կըլխեն Թափավ խողը,
Կա՜ցիր խասար խորըտ կողը.
Վա՜յ, Լենինի՝ հոքուն մատաղ,
Իրա ինգերքերին մատաղ։

Մավզերխաներ եկան Թաղի,
Կեղից ձըղին, դե հա՛ վաղի.
Ջաթի վաղել ձեզ կը սաղի.
Վա՜յ, Լենինի ջանին մատաղ,
Իր դեվլիԹ-ղալամին մատաղ։

Ասել է Ն.-Բայազետցի Ջիլչի Առաքելյանը, 27 տարեկան անգրագետ աղջիկը։

ԼԵՆԻՆԻ ՋԱՆԻՄԱՆԸ

(Ժող. պարերգ)

Դերբենդի ձորի տակը,
Ալիշի արի մեր բակը։
Մեզի փրկեց, մեզ ազատեց,—
Լենինը, Լենինը,
Դուռ, ջավահիր, յաղութ, մառջան ա գինը, ուր գինը։

Յարս ծամ՛րին ա մացել,
Աչքս համփին ա մացել.
Բուրժուայից մեզ ազատեց,—
Լենինը, Լենինը,
Բերեց նորը, քշեց խավարը, հինն ու հինը։

Յար ջան, արեվլիս մատաղ,
Կանաչ տերեվլիս մատաղ.
Նիկոլիցը մեզ ազատեց,—
Լենինը, Լենինը,
Դուռ, ջավահիր, յաղութ, զմրութ ա գինը, ուր գինը

Սարերի սինձն ի՞նչ ա,
Կաթնովի պրինձն ի՞նչ ա․
Դարդ ու ցավից մեզ ազատեց,—
Լենինը, Լենինը,
Մեզ ազատեց, մենք էլ գիտենք ուր գինը, ուր գինը։

Յես սիրել եմ, յես կ՚առնեմ,
Խոսք ու զրիցն ի՞նչ ա․
Դարդ ու ցավից մեզ ազատեց,—
Լենինը, Լենինը,
Բանվոր, գեղացին լավ գիտե ուր գինը, ուր գինը։

Ալիշի ջան, հուր ես, մուր ես,
Յես ծարավ եմ, տու ճուր ես․
Մեզ ազատեց, մեզի փրկեց,—
Լենինը, Լենինը,
Մեզ ազատեց, մենք էլ գիտենք ուր գինը, ուր գինը։

Համփարցման իրիկունը,
Յես եկել եմ, տու ճուր ես․
Ցավից, դարդից մեզ ազատեց,
Լենինը, Լենինը,
Ցավից փրկեց, կեցցե՜ իրա անունը, անունը։

Մանեսից լավ եմ պերել,
Խաս դերյա, շալ եմ պերել․
Մեզի փրկեց, մեզ ազատեց,
Լենինը, Լենինը․
Մեզի փրկեց, կեցցե՜ իրա անունը, անունը։

Ասել է Լոռեցի Սարգիս Ծլոյանը, մոտ 45 տարեկան անգրագետ գյուղացին․ լսել է ուրիշներից։

ԼԵՆԻՆՈՒ ԽԱՂ

Խեղճ ու նաչար շատ լաց արին,
Նիկոլ[1] ընգավ, աշկ պաց արին.
Էտ վո՞ն արեց, էտ վո՞ն արեց,—
Էտիկ ըրմմեն Լենին արեց։

Պետրպոլա[2] էկավ լուրը,
Կարթին դիվանխանի տուրը.
Էտ վո՞ն արեց, էտ վո՞ն արեց,—
Էտիկ ըրմմեն Լենին արեց։

Ցաղիրներաց ծաթի արեվ,
Ջանդինքերաց օրըն ի սեվ.
Էտ վո՞ն արեց, էտ վո՞ն արեց,—
Էտիկ ըրմմեն Լենին արեց։

---

1 Նիկոլայ II ցարը։

2 Պետրպոլ=Պետերբուրգ—Պետրոգրադ=Լենինգրադ։

Գո՛ննեյ սարը պռնեց ղոշուն,
Խմբապետքեր տառցեր ին շուն․
Եա վո՛ն արեց, եա վո՛ն արեց,—
Ետիկ զըմմեն Լենին արեց։

Ոսգուն թալեց իրեք գեխից,
Խմբապետքեր փախան կեղից․
Եա վո՛ն արեց, եա վո՛ն արեց,—
Ետիկ զըմմեն Լենին արեց։

Բեղարթա սարը դուման էր,
Բալշևիկք ազրայիլ նման էր․
Եա վո՛ն արեց, եա վո՛ն արեց,—
Ետիկ պուլոր Լենին արեց։

Բալշևիկք եկավ կղակ-պոպող,
Գա՛նեցըքոնց պըռներ ի մող․
Եա վո՛ն արեց, եա վո՛ն արեց,—
Ետիկ զըմմեն Լենին արեց։

Խընգոն[1] ասեց․—Մեր պա՛ն է զուր,
Թողեք փախենք գըլխ Զանգա՛զուր․․
Եա վո՛ն արեց, եա վո՛ն արեց,—
Ետիկ թամըղ Լենին արեց։

Առաուշ[2] ասեց․—Զիմ թալլած մալ,
Ի՞մալ թողկեմ, փախնիմ ի՛մալ…

---

1 Մաուզերիստ դաշնակ խմբապետ։

2 Գառնեցի մաուզերիստ խմբապետ։

Ետ վո՜ն արեց, ետ վո՜ն արեց,—
Ետիկ պուլոր Լենին արեց։

Ասել է 65 տարեկան անգրագետ գյուղացի Պետրոս Շիրոյանը (բնիկ Բաշ-Գալայի շրջանից)։ Շատ է յերգվում Կոտայքի շրջանում. հորինողն անհայտ է։

* * *

Լենին տաավ.—Կըտամ ծե խաց,
Ընցած ուեր անտարց գնաց.
Տաշնակ մնաց բերանը բաց.
Ցես Լենինու բախտին մեռնիմ:

Լենին ղրկեց էրա զորքը,
Կորեցին տաշնակի քöքը.
Ցավից ազատվեց աշխարքը.
Ցես Լենինու բախտին մեռնիմ:

Լենին եկավ մե թագավոր,
Քասիբ տառցավ բախտավոր.
Ամբապետներ կանչին հավար.
Ցես Լենինու բախտին մեռնիմ:

Լենին բերավ բոլշևիկը,
Մեկ ել տեսանք տաշնակ չկա.
Յարաբ տաշնակ ուր ես մկա.
Ցես Լենինու բախտին մեռնիմ:

Լենինը մեզ տվավ կոլխոզ,
Տաշնակները քյանց շահմար օց.
Քշեց, տարավ ուր պապու ծոց.
Յաս Լենինու բախտին մեռնիմ։

Ասել է Նոր-Բայազետցի, 18 տարեկան անգրագետ Նոյեմ Սիմոնյանը. գրի առնելու ժամանակ բանվորուհի Ղևերուժ։

* * *

Ունինք, չ'ունինք մէկ Լենին,
Մեռնիմ Լենինու դինին.
Դին ը դիրագ անխախտ է,
Մեռնիմ Լենինու բախտին։

Բախտ ու իղբալը շատ է,
Մեր Լենինը մէկ խատ է.
Մէկ խատ պայծառ ճրաք է,
Թո դուշմանը տրաքի։

Տրաքի, վով չի ուզի,
Մեր Լենինը մէկ լուս է.
Լուսավորեց աշխարքը,
Կեցցէ Լենինի փառքը։

Փառք ը պատիվ շատ ըլնի,
Մեր Լենին մէկ խատ ըլնի.
Մէկ խատ խազարի մէչին,
Կուլակն ազարի մէչին։

Ազար-բեզար կուլակին,
Մեռնիմ Լենինու կտակին։

Ասել է նույն Նոյեմ Սիմոնյանը։

* * *

Երեկ բատրակ էյի,
Էսոր—պատավոր,
Լենինի խոսքերով,
Դարձա բախտավոր.
Խոսքերիտ մատաղ, Լենին ջան, խոսքերիտ.
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ։

Հարուստը կապել էր
Մեր ճար ու ճամփեն,
Հող ու դավլաթ խլել՝
Զաֆթել էր ամեն.
Զորքերիտ մատաղ, Լենին ջան, զորքերիտ.
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ։

Աշխարհը մի ծով էր,
Մենք մեջը ծարավ.
Լենինի գործերով,
Տեսաք՝ ինչ տուավ։
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ.
Փորցերիտ մատաղ, Լենին ջան, փորցերիտ։

Այգում, չքավորը
Որ-արեվ տեսավ,
Հարուստը խեղճացավ,
Որը սեվ տեսավ։
Պատվերիտ մատաղ, Լենին ջան, պատվերիտ.
Պատկերիտ մատաղ, Լենին ջան, պատկերիտ։

Ջավահիր անունտ
Ապրի հավիտյան,
Գործ, աշխատանքտ
Միշտ անխափան։
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ,
Խոսքերիտ մատաղ, Լենին ջան, խոսքերիտ.

Ասել է Ղուլալեցի բատրակ Սերոբ Նաղշքարյանը, 24 տարեկան, կիսագրագետ. լսել է համագյուղացի աղջիկներից։

* *

Լենի շափաղ քա՛նց արեվ,
Մեր Լենուն շա՛տ, շա՛տ պա՛րեվ.
Հեյ-ջան, Լենուն շատ պա՛րեվ,
Կարմիր Լենուն որ-արեվ։

Լենու սալըղ վոր առանք,
Յոխսուլի սիրտ պայծառավ.
Գա՛նակ մե երկիրն առավ,
Կանչին՝ մեր Լենի հուամ։

Լենի յոխսուլի տերն ի,
Անուշ Լենի մե խերն ի.
Մե իղբալ ենու ծեռն ի,
Վոն քեշ իրիշկա, մեռնի։

Լենի հոքմեց զկարմիր որդու,
Եսաց.—Ձա՛րկ, ետ հաշխար շուռ տու.
Բո՛լ ի, եսաց, մե տանջեցին,
Որ, ապրուստից զրկեցին։

Լենի խեծավ ուրան ղուաթ,
Սաղ հաշխար ենու ձեռաց մաթ.
Նիկոլի, բուրջըվի մեչը,
Եցկեց զուլում ը ղիամաթ։

Լենի մեկ քաջ իգիթ ի,
Գյանակ ենու ոքնական պիտի.
Բուրջըվի ոըդուն ջարթեց,
Մե ենորից ազատեց։

Լենի խին հաշխար շուռ իպե,
Մեզի պյորի լուռ իպե.
Մեր Լենու բաժին ղուրբան,
Բուրջըվին մըրմուռ իպե։

Ու Ռուստամի-Զալ[1] Լենի,
Ըսկյանդար-զուլղար[2] Լենի.
Հաշխարի փըրկիչ Լենի,
Մեզի ազատիչ Լենի։

Ասել է բնիկ Ղամիշլու գյուղի (Բաղեշի շրջան) բնակչուհի Նազո Բաղեշցյանը, 35 տարեկան, անգրագետ։ Ներկայումս ապրում է Վաղարշապատում։

---

1 *«Շահ-Նամե»-ի կենտրոնական հերոս, Իրանի մեծագույն փահլեվան Զալի որդի Ռոստամ։*

2 *Աղեքսանդր Մակեդոնացի, որպես աշխարհակալ դարձել է արևելյան ժողովուրդների հերոսական վեպերի կենտրոնական հզոր դեմքը։*

Գնանք սարի քամակը,
Կեցցե կարմիր պանակը.
Մեր Լենինը, մեր Լենինը մի հատ ա, մի հատ ա,
Մեր դարդերը, մեր ցավերը փարատա, փարատա։

Ծուռն առա յելա դուզը,
Կեցցե կարմիր կոլխոզը.
Ըստալինը, Ըստալինը պողպատ ա, պողպատ ա, -
Խեկավար ա, միշտ հախտող ա, անպարտ ա,
անպարտ ա։

Հախպըրից պերի խիճը,
Կեցցե մեր քաջ պճիճը.
Կալինինը, Կալինինը հառաչ ա, հառաչ ա,
Մեր թշնամին, մեր թշնամին թող հաչա, թող հաչա։

Էլ ինչ կանենք հավատը,
Կեցցե կարմիր սավետը.
Վարաշիլով, Վարաշիլով շատ քաջ ա, շատ քաջ ա,
Չար թշնամուն չիտա ճամփա ու մաջալ, ու մաջալ։

Ըստալի վերի վոսկին,
Կորչի պարոն Տրոսկին.
Ըստալինը, Ըստալինը պողպատ ա, պողպատ ա,
Միշտ հախտող ա, խնկավառ ա, անպարտ ա։

Կլոխս կապի շալը,
Կորչի Թող կապիտալը.
Մեր Լենինը, մեր Լենինը մի հատ ա, մի հատ ա,
Մեր ցավերը, մեր դարդերը փարատա, փարատա։

Ասել և Դիլիջանցի Սրբուհի Վարդերեսյանը, անգրագետ. լսել և 1931 թ. Շամշադինցի Գեվորգից(?). յերգի հորինողն անհայտ է։

ԼԵՆԻՆԻ ՑԵՐԳԸ

Հաճք պատմեմ իրականից,
    Թե խելը ծով էր Լենինը․
Հասկացող էր ամմեն բանից,
    Շնորքի ծով էր Լենինը։

Ծով խելքովը աշխարհ չափեց,
    Ինչքա՜ն ճիկ ու ջանքեր թափեց,
Թշնամին տեսավ սարսափեց,
    Ընգերներով էր Լենինը։

Ընգերներով շատ-շատ տարի,
    Աշխատեցին ժիր ու արի․
Մեծ հոքի յեր, խղճով բարի,
    Շատ անունով էր Լենինը։

Անունը պայծառ ու մեծ էր,
    Լուս տվող կրակ ու բոց էր․
Բարի, մարթասեր, անկեղծ էր,
    Ենտիրարով էր Լենինը։

Ընտրելով քաջ ղեկավար,
Գտավ բանվորին դեղ ու ճար.
Շատ հոգսեր քաշեց անհամար,
Ինթիզարով էր Լենինը։

Ինթիզարը առավ գործով,
Իմաստուն, խելացի, փորցով.
Սաղ թշնամիքը թափեց ծով,
Ջառը ը զոռով էր Լենինը։

—Ջառըլա զոռ, բանվո՛ր, գեղացի՛,
Ասավ, թեզ արա միացի.
Բոլոր աշխարհը տիրացի.—
Այսպես խոսող էր Լենինը։

Խոսող էր, խոսքերը անգին,
Շուռ տվեց աշխարհը իր հանգին.
Շինելով նորը, քանդեց հին,
Հին կործանող էր Լենինը։

Կործանեց ուժեղը, չարը,
Վեր քարին չթողեց քարը.
Կտրվեց բուրժույի ճարը,
Խիստ հետեվող էր Լենինը։

Հետեվեց, յերկիրը շինեց,
Անապատները ջուր անցուց.
Ծովը ծովի հետ միացուց,
Քաջ աշխատող էր Լենինը։

Աշխատողին պարծանք լինի,
Հետեվողներին կյանք լինի,
Ն ա զ ո ւ ք, խոսքերը թանգ լինի,
Արժանավոր եր Լենինը։

Ասել է կույր աշուղ Ջյամալ Բեկլարյանը, 33 տարեկան Լենինականի շրջանից. աշուղական անունը Նազուք է։

ԼԵՆԻՆԻ ՑԵՐԳԸ

Լենինը մի լուս էր, եկավ ու անցավ,
Իրա խոսք ու կուծը աշխարքը լցվավ․
Քո՛նց լուսավոր աստղ փայլեց ու անցավ,
Ափսո՜ս քեզի, ափսո՜ս, աննման Լենին։

Արևելք, արևմուտք, հարավ ու հուսիս,
Ամեն տեղ տարածվեց քո վառ փառքի լիս․
Տո՛ւ յիս մեծ մարքարե, փրկող ամենքիս,
Ափսո՜ս, հազա՛ր ափսոս, աննման Լենին։

Տու ամբողջ յերկրի փոխեցիր կարքը,
Շուռ տվիր կլխիվեր, սահմանիր վարքը․
Աշխարե աշխար հասավ քո անվան փառքը,
Ափսո՜ս, վոր մահացար, մեր ընկեր Լենին։

Թշնամի ազգերը ընկեր շինեցիր,
Զրկված պանվորներին առաջ քաշեցիր․
Խեղճ, ֆաղիր գեղացու հոքին փրկեցիր,
Հազա՛ր ափսոս մեռար, դու մեր լավ Լենին։

Ասել է Խոյեցի Լևոն Լևոնյանը, 35 տարեկան, անգրագետ․ գրի առնելու ժամանակ բանվոր էր Արթիկում․ Լսել է ուրիշներից։

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Մի հատ եյիր աշխար ՚նկար,
    Յոխտուր ավաղն Լենին.
Նմանդ շատ քիչ կը ճարվի,
    Հարքմաս լազըմ Լենին։

Ուժեղն աշխարհը տիրել ա,
    Զրկել, քանդել, ավիրել ա.
Զոռը անզորին կերել ա,
    Վո՛ր մեկը ասեմ, Լենին։

Շուրա դըր սանըն քո՛նըն,
    Դուզ դըր դա՛րա-դիվանն.
Ինշալլահ գո՛րդըխ սանըն,
    Մե մին Թարազըն, Լենին։

Քանի կա աղքատ, հարուստ,
    Չենք գտնի հաց ու հաքուստ.
Գեղացին չունի ապրուստ,
    Չեռը շատ պակաս ա, Լենին։

Վöրղարարաըն հար նովրաղա,
Ղալխաըր խանըլար, բէյ վա աղա.
Իթ գանգինի ղուլլամաղա,
Ղուլի գարին գաղըն Լենին։

Յավեր ենք քաշել անհամար,
Հաշիվ արա, թիլի, ջամ ար.
Արթարության կոծի համար,
Ո՞վ ինչ պետք ա տաի, Լենին։

Բեչտի գոլա, յաղմուր յաղա,
Շաք դուշանմիշ գöլլի բաղա.
Ցութունաղան ղուրթուլմաղա,
Շուրա ֆարման յաղըն, Լենին։

Գալդ բարի, հազար բարի,
Մնա, ապրիր, շատ-շատ տարի,
Մենք քեզ հետ ենք, ուժդ լարի,
Նպատակիդ հասիր, Լենին։

Գöրմիշան ղուսայի-ղամ,
Սանա մայիլ ջումլի ալամ.
Ո՛ գöն ոլսա ղալըն թամամ,
Բիթաըն հար մուրադըն, Լենին։

Ասել է բնիկ Հին-Նախիջևանցի, ներկայումս Արթիկի բան-վոր, կիսագրագետ Զումշուդ Գևորգյանը, 35 տարեկան

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Լենինի արարքը աշխարը պատեց,
Շատին խասկացուց, հոքի ջան, շատին խրատեց։

Ճշմարիտ խոսքով, հարազատ մոքով,
Իրա ծով խելքով, հոքի ջան, մեզի ազատեց։

Նիկոլին քցեց, ուր հերն անիծեց,
Բուրժույին լծեց, հոքի ջան, սեղմեց, խրատեց։

Աշխարե աշխար, ծովե ծով անցավ,
Վո՜րքան տանջվեցավ, հոքի ջան, մինչ մեզ ազատեց։

Սուտ կրոնը թույն, ակլի խաբութուն,
Ույժ ու պռնութուն, հոքի ջան, բոլոր վերացրեց։

Մեր փրկիչ Լենին, ազատիչ Լենին,
Ամեն ինչ Լենին, հոքի ջան, մեզ համար պերեց։

Աղքատի հերը, բանվորի տերը,
Գեղացու սերը, հոքի ջան, առավ վաստակեց։

Մեր անկեղծ Լենին, դու մեր մեծ Լենին,
Ինչ ասեց Լենին, հոգի ջան, պոլոր կատարվեց։

Ընկեր Լենինը, ընտիր Լենինը,
Մեր տեր Լենինը, հոգի ջան, ինչի՞ պակասեց։

Բանվո՛ր կանք սաղ, անըմի՛տ մատաղ,
Բատրակ ու հոտաղ, հոգի ջան, ցավերս փարատեց։

Առել է նույն Զումրուդ Գևորգյանը։

ԼԵՆԻՆԻ ԴԱՍՏԱՆԸ

Լսե՛ք ձեզի պատմեմ, ընգերներ,
Թե ինչե՛ր արեց Լենինը.
Հենց վոր Նիկոլն ընկավ թախտեն,
Սահմանն ընցավ Լենինը։

Հենց վոր տեհն եկավ Կերընսկին [1],
Իրեսին եկավ պըռըսկին.
Փախան ալլալ, պոչերը կըկին,
Ու առաջացավ Լենինը։

Բաջ Լենինը քա̈շեց թուրը,
Ընցավ Թոնա [2] կետի ճուրը.
Կերընսկիյին եկավ լուրը,
Ասին.—Փախի՛, եկավ Լենինը։

Լենինն էր քա̈ռրի թաքավոր,
Քա̈շեց մը զորքը սաղ-պոլոր.
Հարուստ, ղանդին մա̈ցին մոլոր,
Թա̈մըրդին քշեց Լենինը։

---

1 Կերենսկին

2 Դոնը։

Պանվորեն Լենինի քո̈մագը,
Ըըշպո̈րն եվ ընցավ քամակը·
Խո̈նգավ բուրջույի ճրաքը,
Խողին խավսար արեց Լենինը։

Լենինը խաքավ զենքը, զրախը,
Հարուսաների սերան ինգավ ախը·
Նոր ըսկսեց փախը-փախը՝
Ցեփ ճաութը քցեց Լենինը։

Զորքը քաշեց մաավ Պետրպոլ[1]
Սըրփեց, չխարցուց սաղը-սալը·
Տաղ եվ բուրջույին կոտորեց բոլ,
Սավետը արեց Լենինը։

Մոսկովը վերցրեց, վլատը տրին,
Ըմմեն տեղ հեղկոմ ընդրին.
Բոլշեվիկներն աշխար ափրին,
Թաքավորի թո̈խտը նստավ Լենինը։

Ցեփ Լենինը նստավ թո̈խտը,
Կուեց քո̈սիր-քո̈սուրի բո̈խտը·
Ամմա պայս Ֆռանգ, Ինգլիզներ եռ վախտը,
Ղոշում քո̈շին եկան թեխ Լենինը։

Տո̈նց պերաններն եվ ավեց թեխ չոլ
Ճաութեց ու կոտորեց բոլ-բոլ·
Բշեց թամըղ թեխ Ըստամբոլ,
Ցերկիրը մաքրեց Լենինը։

---
1 Պետրպոլ—Պետրոգրադ—Լենինգրադ։

Լենինի յարանալն էր Տրոսկին [1],
Ամմա պայս չկայնավ ուր խոսկին.
Մուխաննաթ տուս եկավ, պոչը կպկին,
Գունեց, կոռծե քցեց Լենինը։

Աթարբադոձը[2] էր կարմիր կրող,
Միյասնիկովը[3]—համակրող.
Ըստալինը՝ քաջ էր, կռվող,—
Ինգերներ ուներ Լենինը։

Շահումյան ու Նարիմանով,
Ջափարիձով [4], Ցուլխիտով [5].
Սաղ քամվեց ինգերներով,—
Կուրսեց ու շատ ցավեց Լենինը։

Փախըլթոն ծըեց դուշմանը,
Տակամանս տավ ուր պանը,
Եկավ են քոֆըր Կաֆլանը [6],
Գոնլոնեց, ինգավ Լենինը։

---

1 Տրոցկի։
2 Աթարբեկյան։
3 Մյասնիկյան։
4 Ջափարիձե։
5 Ցխակայա։
6 Կապլան։

Լենինը մեռավ, կեցցե կործը,
Ըստալինը շարունակեց գո՛ր փորցը·
Եանց աստալյըմի խարցը
Տանես են, ինչ թար ասեց Լենինը։

Գերեց մեզի ազադըթուն,
Կոլխոզ, սովխոզ, ըմմեն բո՛ւթուն.
Խախանդըթուն, ազատըթուն,
Տո՛նք թամմըղ պերեց Լենինը։

Ա ր շ ա կ ն ասեց էս խոսկերը,
Կեցցե Լենինի կործերը·
Ապրի Ըստալինն ու իրա ընգերները,
Իմացի վոր չի մեռե Լենինը։

Ասել է Սալմաստի շրջանի գյուղացի 65 տարեկան անգրագետ Արշակ Ստեփանյանը. Ներկայումս նա ապրում է Էջմիածնի շրջանում։

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Կեցցե Լենինի ջանքը,
Իզուր չանցավ աշխատանքը,
Փրկեց բանվորի կյանքը.
Հիշենք Լենինը, Լենինը։

Բոլոր աշխարհ ծրագրեց,
Բանվորներին միացրեց,
Տեքստիլ գործարան հիմնեց.
Հիշենք Լենինը, Լենինը։

Շիրկանալի նվաճումը,
Քանդեց բուրժվայի տունը;
Կտրեց աչքերից քունը.
Հիշենք Լենինը, Լենինը։

Չոր տեղերը կանանչեցրեց,
Յեվրոպային ամանչեցրեց,
Տուն ու տեղները լցրեց.
Հիշենք Լենինը, Լենինը։

Ամենայն տեսակ գործարան,
Հիմնեց վողջ յերկրում համայն,
Բանվորին չթողեց անբան.
Հիշենք Լենինը, Լենինը։

Շիրկանալը խըլըն փըկեց,
Ամենայն գեղեր ջուր խըկեց,
Զարկամ բուրժիվային մըկեց.
Հիշենք Լենինը, Լենինը։

Բոլոր գեղեր դպրոցներ հիմնեց,
Մատաղ սերունդ մեջը լցրեց,
Տնատխարակեց, տուրս ավեց.
Հիշենք Լենինը, Լենինը։

Կուսակցութուն մեզ պահապան,
Ժողովուրթը կուշտ ու սաղջան,
Կեցցեն մեծեր, քանի վոր կան.
Հիշենք Լենինը, Լենինը։

Կոլխոզն եր մեզ պահողը,
Համանինական ջուրը, հողը,
Եւ չկա մեզ կողոպտողը.
Հիշենք Լենինը, Լենինը։

Մատաղ սերունդներ, միացեք,
Լենինի լոզունգը վերցրեք,
Գ ո ղ ո ս ի խոսքերն իմացեք.
Հիշենք Լենինը, Լենինը։

Ասել է Շիշթափեցի (Ամասիայի շրջան) մոտ 50 տարեկան անգրագետ Գողոս Սահակյանը (մականունը Գուլիկ)։ Նա գիտե բազմաթիվ հեքաթներ, հորինում է յերգեր. հայտնի յե շրջանում վորպես սրամիտ և առակախոս մարդ։

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Լսեցինք Լենինի անունը,—
Շինեց քöսխր-քöմսուրի տունը.
Կարվեց բուրժըվանի քունը.
Անունիտ մատաղ, Լենի՛ն ջան։

Մոսկովից ծագեց մեկ արև,
Սաղ աշխարին ավեց պարև,
Կուլակի օրը դառավ սև.
Քո գալըտ պարի, Լենի՛ն ջան։

Յեփ Կավկաս խասավ քո լուրը,
Տաշնակը Թափավ սև ջուրը,
Փախե՛ց, ել ձեռ պանը զուր ի.
Գալըտ պարի, ջա՛ն, Լենի՛ն ջան։

Փեդրվարին կայնավ դուման,
Թալանչի տաշնակն եկավ յաման, յաման.
Ել պածնելու չունենք դöման,
Խասիր, փրկիր մեզի, Լենի՛ն ջան։

Որդուն եկավ Դիլիջանից,
Մավզերխաներ ճղին Հայաստանից.
Գածանք տաշնակի նման գել-գազանից,
Մնացինք եղման, Լենին ջան։

Տաշնակը փախավ Զանգեզուր,
Կ'ասեն Նժդեն շատ է ոխուր,
Ժողվեց ուր զորք, փախավ դըխ Արազի ջուր,
Յեփ կարմիրքեր խասան, Լենին ջան։

Վա՜յ ձև գնալ ըլնի, գա՜լ չըլնի,
Թո ձև մե խոշ խըլալ չըլնի.
Տաշնակ փախավ էլ լալ չըլնի,
Հայաստան փրկիր, Լենին ջան։

Տաշնակքեր փախան դըխ Թավրիզ,
Խմբապետաց կոտռվավ վիզ.
Յերկրից կորվավ ենոնց թաղն ու՛ իզ,
Զումփթ մնաց քե, Լենին ջան։

Ասել է բնիկ Ականցի Անդալաթ Գևորգյանը, անգրագետ 33 տարեկան այրի կին և ներկայումս ապրում է Եջմիածնում. լսել է ուրիշներից։

* * *

Արեվելք, արեվմուտք, հյուսիս և հարավ
Դառեցին, բանեցին, հարուստը տարավ.
Վա՜յ լըմըն տարավ,
Ա՜խ յաման տարավ։

Հող ը ջուր, մալ ը մուլք, հարուստը տիրեց,
Վոսկին ու արծաթն իր տակը տրեց.
Վա՜յ լըմըն տրեց,
Ա՜խ յաման տրեց։

Հարուստը կաշառում՝ ուժեղ, դատավոր,
Ուր ինքն է գող, աղքատն է մեղավոր.
Վա՜յ լըմըն մեղավոր,
Ա՜խ յաման մեղավոր։

Սելլի պես կը հոսեր, արուն ու թանաք,
Աշխարհն էր մի դմակ, հարուստը՝ դանակ.
Վա՜յ լըմըն դանակ,
Ա՜խ յաման դանակ։

Անցան շատ տարիներ, անցավ ժամանակ,
Լենինի ձայնն եկավ աղքատի քöմագ.
        Վա՜յ լըմըն քöմագ,
        Ա՜խ յաման քöմագ։

Ձենն եկավ Լենինի, ուր ձենին ղուրբան,
Ուրախացավ աղքատ, տխրեց զոռբան.
        Վա՜յ լըմըն զոռբան,
        Ա՜խ յաման զոռբան։

Լենինի անունով որդու կապեցին,
Բուրժուվայի գլխին կրակ թափեցին.
        Վա՜յ լըմըն փեցին,
        Ա՜խ յաման փեցին։

Դենիկին, Վրանգել, Ֆրանգ, Ինգլիզը,
Բալշևիկն ամենի կտրեց վիզը.
        Վա՜յ լըմըն վիզը,
        Ա՜խ յաման վիզը։

Լենինը յերկիրը ամբողջ առավ,
Ով վոր մեզ չեր ուզում, արանքից թռավ.
        Վա՜յ լըմըն թռավ,
        Ա՜խ յաման թռավ։

Մենշևիկ-կադետը հալա չեր մեռել,
Թունավոր օձի պես, պաղել եր սառել.
        Վա՜յ լըմըն սառել,
        Ա՜խ յաման սառել։

Խրկեցին մի քածի[1] Լենինին խփեց,
Էտ բանից արար-աշխար սարսափեց.
Վա՜յ լըմըն սափեց,
Ա՜խ յաման սափեց։

Վերջը էս ցավով էլ Լենինը գնաց,
Պատճառեց աշխարին մեծ շիվան ու լաց.
Վա՜յ լըմըն դի լաց,
Ա՜խ յաման դի լաց։

Ստալին Լենինի լավ աշակերտը,
Կանգնած ա մեզ համար ինչպես բերդը.
Վա՜յ լըմըն բերդը,
Ա՜խ յաման բերդը։

Ասել է Արթիկցի 22 տարեկան կիսագրագետ Վաղարշակ Նուշյանը։

1 Էսեռների Կապլանը։

* * *

Բուրժուական ազգերի հետ կռվեցիր,
Աշխարհի մեջ կարգ ու կանոն արեցիր․
Մութ, խավար աշխարհը լուսավորեցիր,
Լուսավորվի գերեզմանդ քաջ Լենին։

Լենինի խոսքերը մեկ-մեկ անգին քար,
Մեր թիկունքին կանգնած եր, ինչպես բարձր սար․
Աշխարհի մեջ նրան նման ել չկար,
Շնորքով լցված եյիր, քաջ ընկեր Լենին։

Քո տեղը կանգնած ե ընկեր Ըստալին,
Ժողովուրդն է ընտրել ամենալավին․
Այսուհետև ապահով է ժողովուրդ,
Կեցցե գործ տարողդ, քաջ ընկեր Լենին։

Մի քանի բաներ ասավ Հ ա կ ո բ Գ ե վ ո ր գ յ ա ն,
Ամբողջ ժողովուրդը թող լավ իմանան․

Լենինի պատմությունը յերբեք չմոռանան,
Այս է իմ կովեստս, քաջ ընկեր Լենին։

Ասել է Շիրվանջուղ (Արթիկի շրջան) գյուղացի Հակոբ Գեվորգյանը, 32 տարեկան, անգրագետ կոլտնտեսականը։

ԼԵՆԻՆԻ ՏԱՂԸ

Բոլշևիկի խիճատիր, չքավորին ազատիր,
Հազար տարվա վերքերով մեր ցավերը փարատիր,—
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,
Լենին, Լենին, մեր տեր Լենին, ջան Լենին ջան։

Կուպեռնատոլ ու հարուստ, խաքել են ջընդու հաքուստ,
Ավըլում են քո̈չեքը, քոս ա ընկել փաչեքը,—
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,
Լենին, Լենին, մեր հայր Լենին, ջան Լենին ջան։

Բատրակ, գո̈ղա ու չոբան, արիր մարդու բարեմրար,
Զրկըվողին փրկեցիր, զրկողներին զրկեցիր,—
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,
Լենին, Լենին, մեր մեծ Լենին, ջան Լենին ջան։

Քո̈նց արեվ կալեր կամար, կուլխող պերիր մե համար․
Վով կ՚աշխատի են կ՚ուտի, ուրիշ ինչ ասեն՝ սուտ ի,—
Լենին ջան, Լենին ջան, ջան Լենին ջան,
Լենին, Լենին, մեր լավ Լենին, ջան Լենին ջան։

Հազարը մեկին զուլ էր, փողը ջեբումը քուլ էր.
Մըկա հարուստը շվար, հող կը տա գլխին, կու լա.—
Լենին ջան, Լենին ջան, ջա՛ն Լենին ջա՛ն,
Լենին, Լենին, մեր լավ Լենին, ջա՛ն Լենին ջա՛ն։

Ախքատին ալիր դարվան, թող հարուստներ մխկտան,
Բուրժուները թող հաչեն, տաշնակները չխչխկան,—
Լենին ջան, Լենին ջան, ջա՛ն Լենին ջա՛ն,
Լենին, Լենին, մեր լավ Լենին, ջա՛ն Լենին ջա՛ն։

Ասել է Արթիկցի 32 տարեկան անգրագետ բանվոր Բագրատ Անոյանը։

ԼԵՆԻՆԻ ԵՐԳԸ

Խավար ախշըրքին մե լուս դուռ պա՛ցիր,
    Խեղճին, նաչարին, հոքի ջան, տեր դառցար,
        Լենին.

Զքավորներին խացի տեր շինիր,
    Ունեվորները, հոքի ջան, փչացան, Լենին։

Զուրբա-զուռուլթոնը վերչացավ, գնաց,
    Ախշըրքի տերը, հոքի ջան, քյասիբը մնաց.
Աղա, խաղեյին, ուես ու տերտեր
    Ջնջիր մեր յերկրեն, հոքի ջան, սիրելի Լենին։

Անըմիտ մեռնեմ, ջահա արա բոլքի
    Ուրիշ տեղերի, հոքի ջան, նաչարն էլ փրկես.
Ումուդ կա, վոր մենք են որն էլ տանանք,
    Քո խրատներով, հոքի ջան, մեր փրկիչ Լենին։

Ասել է Մակուեցի Վազիր Ղազոյանը, 35 տարեկան անգրա-գետ գյուղացի. Ներկայումս ապրում է Աշտարակում։

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Մեզ խիթարեց քու անունը,
Ջքավորի պաշտպան, Լենին.
Անջախ դուսից աչքը պացինք,
Տու խեղճի պախապան, Լենին։

Համփի ծեռից քասըրը խեղճ
Մազար որ, արեվ ունե՞ր հեչ.
Քըցիր մեզի լեն ուրվա մեջ,
Խեղճի պաշտպան, դու ջան Լենին։

Աղալաթ ա քու ամեն դասը,
Աշխարհս չկա քու հասը,
Քոռանա՛, ով ուղի վասը,
Նաչարի պաշտպան, Լենին ջան։

Անունըտ լսել ենք վաղուց,
Ըսպասում ենք եսոր, եքուց.
Դորեսի խետ մեր աչքը լուս,
Խեղճի, նաչարի տեր, Լենին։

Զորքը եկավ Արա լեռը,
Մեր Թևերից ընգա̈վ բեռը,
Լացեց շուն տաշնակի մերը,
Անումիտ ղուրբան, Լենին ջան։

Խաբարը եկավ Ալագա̈զ,
Մուրադը փախավ վազը-վազ,
Լեզուն Թալեց տուս երկու գա̈զ,
Դուշմանըտ փախավ, ջան Լենին։

Փետրվարին ճամփեն բուք էր,
Հեխկոմի տուն սեվ ը սուք էր,
Խաբար պերին, բալշևիկ կու գեր,
Ե՛լի հախտիր տու, ջան Լենին։

Մեր կործը շտկեց ապրելին,
Խաբար տարեք շուն Կապրելին,
Սուքը պըռնեց Մուքոյի ելին,
Զորքըտ հախտեց, մեր քաջ Լենին։

Մաղլում ու խեղճ, խոսքըս արթար,
Ափսոս չիտեմ կրել-կարթալ.
Մինչ ի մահըս, ումըր ու աջալ,
Կավեմ քեզի, մեր մեծ Լենին։

Ասել է Աշտարակի շրջանի անգրագետ, մոտ 60 տարեկան գյուղացի Գևորգ Ավագյանը։ Նա այս երգը լսել ու սովորել է Թոզգողանցի (Լենինականի շրջան) աշուղ Բալա Գևորգից։

ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

Խեղճ չքավորներ սեվ ը սուգ արին,
Լենինի մեռնել շատեր վոխպացին.
Յամա՜ն, ավաղ ջան, ինչ զուլում արիր,
Խեղճի, նաչարի սիրտը վառեցիր։

Անջախ մեր սիրտը կպավ արևի շողը,
Ջաններես պրծեր եր Նիկոլի[1] դողը,
Նորից գլխըներիս Թափավ սեվ խողը,
Լենինը մեռավ, մեր տերը ծիվ ա։

Ունեվոր, հալա, սաղ ուրախացան,
Գինան հենց եա ա, ազատվան, պըրծան.
Աղքատների սիրտը արունով լցվավ,
Եա զարա-խաբարը յեփ վոր լսեցին։

Քո հիշատակը անթառամ ըլնի,
Խեղճի, նաչարի դու պաշպան, Լենին.
Առանց քեզ ինչ կ՚ըլնի խեղճերի հալը,
Քա̈սիբ-քա̈սուրի դու խամխար, Լենին։

Ասել է Սուրմալուեցի 60 տարեկան, անգրագետ պառավ՝ Ղումրի Սիմոնյանը։

[1] Նիկոլայ II ցարը։

ՅԵՆԳԻ ԶԱՄԱՆ

Զաման էր էն զամանը,
Ընցած քյոննա զամանը,
Յծուր էր զարա-զիվանը,
Ջուն ինան վոսկին էր պանը,
Ալչու էր վարի ճանը,
Թո տուն կյոր խելճի ջանը։

Զաման էր էն զամանը,
Ընցած քյոննա զամանը,
Կար մե կյոզան թաքավոր,
Երուն խմող ըմըլն որ,
Ե՛լ յերանալ, նաչաւլիկ,
Սաղ շուն ը կել ախշարք լինք·
Ե՛լ գըլավա, պըրատավ,
Կլխըներխս դառդ ը ցավ·
Փոխլա, գզիր, ըսպոռչի,
Լեանիկ, ագենտ, քյոմագչի,
Ե՛լ իրխափոխ, էլ ժամխեր,
Ե՛լ քանդխուդա, էլ տերտեր,

Ցալչի, դաւուլուշ, դուքանչի,
Ե՛ւ թիզ պայող, եւ չաուշի,
Ե՛ս ժամ, ես վանք, վարթըպետ,
Սաղ թալանչի, ծեթ ը պետ։

Քըշեր-ցերեկ տու, հա՛ տու,
Տղատ ծնավ—տու, հա՛ տու,
Կնունք արիր—տու, հա՛ տու,
Լաճ փսակիր—տու, հա՛ տու,
Ախչիկ ճամխիր—տու, հա՛ տու,
Մեռել մեռավ—տու, հա՛ տու…
Սըրուգի պես երընխում,
Աչկ են տնգե չուս յանեն,
Վավեյլայի վոր տանան,
Մե տեղ մե քիչ շիրա կա՝
Կալը ծեծիր, բը մեզի,
Բաղը քաղիր, բը մեզի,
Կինի քցիր, բը մեզի,
Արաղ քաշիր, բը մեզի,
Կովը կթիր, բը մեզի,
Ցան ը փթիր, բը մեզի…

Ա՜խ-վա՜յ աման, աման եր.
Ես ինչ ջուրա զաման եր.

Բաշքըլշան եր չոռս յանեն,
Մարթ բեզար եր ուր ջանեն։

Ասել է Իգդիրցի Պետրոս Վարդանյանը, 32 տարեկան, գրաճանաչ, չքավոր գյուղացի։ Ներկայումս ապրում է Էջմիածնի շրջանում։

ԼԵՆԻՆ ՓԱՇԱ

Ն Ո Վ Ե Լ

Ա ս ա ց՝
ԳԱՐՈ ՔԱՐՅՈՒՄՅԱՆ

Գրի առավ 1934 թվին
ԳԵՂԱՄ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

«Լճնու նաղըլ»-ն առաջին անգամ (18 օգոստոս 34 թ.) գրի առա Աղբաբայի յայլաներում, գղըար Գաբոյից։

Գաբո Բարցումյանը մոտ 65 տարեկան, անգրագետ, վառա-ռողջ մի մարդ է, Տաճկաստանի Խիզանի շրջանի Խակեվ գյուղա-ցի։ Գիտե բազմաթիվ «խեքյաթներ», «խաղեր», «մասալներ» և այլն։

Գաբոն ջահել ժամանակ հովիվ է եղել, այնուհետեւ երկար ժամանակ «խզմաթքար» զանազան «աղեքանց» մոտ։ Վերջը, «ան-կախություն» ձեռք բերելու համար, գղըար է դարձել։ Այժմ նա գոհ է յուր «փեշակ»-ից։ «Մկա, չեա սահնաթքար եմ, գիմ ողլու-շաղ կը պախիմ»,—ասում է նա գոհունակությամբ։ Տղա, աղջ «բոլ-բոլ» ունեցել է, բայց «թմմըրզ» էլ մեռել են, ու աղջիկ «մի մացեր ի», որն ամուսնացել է և ամուսնու հետ ապրում է Գյանջայի Շամխոր ավանում։ «Վըր հաշլերքին մըկա պառավ մի ունեմ»,—ասում է նա։

Գաբո բիձան ապրում է Լենինականում։ Նա հաստ, կարճահա-սակ, դեղնավուն, հիվանդոտ, մինչև հոնքերն սպիտակած մարդ է։ Բնավորությամբ կեսուբախ և շատախոս։ Միաժամանակ չափա-զանց ծածկամիտ է, մի քիչ էլ պարծենկոտ, բայց և շատ սրամիտ, լսելու-սովորելու ձգտում ունեցող։

Գաբոն «Լճնու նաղըլ»-ը սովորել է գղըար Ուստա Սեփոյից, յերբ վերջինիս հետ 1922—24 թ. թ. «ղմառած» յն եղել, ու միա-սին շրջել, գղըարություն են արել։ Գաբոյի ասելով՝ նաղըլը Սե-փոն ինքն է հորինել։

Ուստա Սեփո կամ Ծաղկի Սեփո, կամ Շալըր Սեփո, (ըստ ժամանց նաև՝ Ծուռ Սեփո, Գըլյան Սեփո, Վըրոշկի Սեփո և այլն) յեղել է Տաճկաստանի Խիզանի շրջանից։ Նա հայրենիքից իմպե-րիալիստական պատերազմի ժամանակ գաղթել է Այսրկովկաս, մի-առ ժամանակ ապրել է Սուրմալուի շրջանում (Խալֆալու գյուղ), հետո յեկել է Վաղարշապատ։ Նա այստեղ էլ պարապել է գինեգործությամբ։ Սեփոն մեռել է Վաղարշապատում 1926 թվին, մոտ 50—55 տարեկան հասակում։ Նրա հայրենակիցների և «թայդաշների» ասելով՝ Սեփոն յեղել է միջահասակ, առողջ, «կարմիր լալա», չեկ մազերով ու կապույտ աչքերով մի մարդ։ «Շատ կը խմեր. ճնու ճյլը եա էր»։ Պատմում են՝ չխմած ժամանակ «ղենու կլոխ բամփեր, ծեն չեր հանէր, ամմա վուր խմեր իշկի կղներ ճնու ալերան, էլ թող.. ճալան-կաֆլան կը տաներ».. Ու-րեմն լուրջ ժամանակ նա յեղել է խեղճ, մեղմ ու լուռ մի մարդ, իսկ խմելիս—ընդհակառակը, նա սկսել է յերգել, կանչել ու փո-ղոցները շրջել... «Մեկ դա մ՝ պատահեր, ճլլեր Սեփոն խաղ կը կապեր. ամմա չուրի ճրխոշ չեղեր, վուչ կարար խաղ կապել, վուչ էլ կանչել»... Շատ շնորհալի, սրամիտ մարդ է յեղած։ Իմա-ցել է բազմաթիվ «խեքճաթներ», «տաղեր», «խաղեր», «մանիներ», «մճաճըներ» և այլն։ Մեկի դեմ վոխ ունենալիս, խմելու ժամա-նակ նրա հասցեին ուղղել է վոտանավոր-հայհոյանքներ ու բարձրաձայն յերգել փողոցներում... Վորևե դեպք պատահելիս՝ նա անմիջապես խաղ է «կապել» ու ասել։

Մեկը գողանում է Սեփոյի մի քանի խուրձ խոտը։ Նա խաղ է «կապում» (հիշում են մի «բանդը»), այն է.

…«Թըռ եծերաց մեկ տեղ կեր խոտը,
Ըծերտ ի ուտեն քո կոտը,
Հաշերից կոտրի քո խոտը,
Կող, հռվաղակ, խոռամ Դըրմոս։»

Մեկը դրան փող է պարտ լինում, բայց չի տալիս, ու Սե-փոն «կապում» է այս խաղը.

...«Ամալաղ կորա քո՛ աչից կյանք,
Չիմ փորեն տան, աննեն պատանք.
Քե արժան չի որ աննեն վանք,
Լաշըդ ընկերաց փայ եղի»։

Մեկն էր աղջիկը չի տալիս սրա ուզած տղային, աղջիկը փախչում է տղայի հետ... Սեփոյի խաղը պատրաստ է.

...«Վո՜վ ի տեսի՝ ախչիկ տղին փախցընի,
Տանի, ուրանց տեղի մեչը թաքցընի.
Ցեփ որ քեֆը ուզի, խանի, խաղցընի,
Հաչքերդ ի քոռանա, Նարգիզ ախչիկ»։

Մեկը գողանում է Սեփոյի աքլորը. Նա ասում է.

...«Մառմառ խաթուն, գրսեն խաթուն,
Աքլոր բռնիր, կերար թաքուն»...

Մեկ անգամ, մեր աննելու ժամանակ մի վարդապետ վերավորում է Սեփոյին։ «Շալրի» յերգը պատրաստ է.

...«Պալլոզդ ի նման սատանի պոզ,
Զաղացեր ես քանց շամբու խոզ»...

Դաշնակցական «ակումբները» մի անգամ Սեփոյին սառսափելի ծեծում են, կասկածելով նրան ինչ որ բանի համար... Ու նա վոխ է պահում դրանց դեմ և խմելիս ամեն մեկին յերգով դաղում... Խորհրդայնացման ժամանակ, պատմում են, Սեփոյի «քեֆին քեֆ չէր խասնի», «ուրախությունից ծոսր էր»... Խմել, ընկել էր փողոցներն ու «մալլու-իկնեբուն» գովելով՝ ման էր գալիս... Ճեմարանի բակում, կոմունարների թաղման ժամանակ, պատմում են, որ խմած, աղեղն ու չալը առած, վորպես սազ, «կը չալեր» ու «Լանու դաստան», «մեկ լե պարտիզպաններու (պարտիզան) խաղ կը կանչեր»...

Ն ա յերկրացիները, ինկույն հիշեցին «Լանու նաղըլ»-ը, յերբ կարդացին—

Վա՜յ, եսա նաղըլ (մի յերկուսը—դաստան) մինք քանի-

քանի անգամ լսեր ենք Սեֆոյից»,— ասում էյին նրանք։ «Նաա նազըլ գինք ի տան. ջանըմ, ննու պան տանլ չիզլի, ննու ջնուրը թաշխայ ի»... «Տաշնակներայ ջըլու խամար (անու ափլյին ախը) ննիկ թալշուըթիկներուն չատ կը սիրէր»... «Զէանին կը պաշտէր անիր»... «Քանի մ'-քանի մ' խաղեր եր խանե Լանու խամար»...

Գ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

1

Էն վէմ է, վուր ժողովուրթին կը պախէ.
Էն վէմ է, վուր ըռըշպա̈րաց քա̈մա̈դ է.
Էն վէմ է, վուր փա̈նհաքառերաց խա̈մխար է.—
Էնիկ մէկ փաշէ մ' է, անուն ուր Լա̈նինէ։

2

Մա̈սսա̈ր ըմ կեր, անուն ուր մա̈լշուրիկ.
Լա̈նին ա̈նունոց գինըաշին է։
Վով ա̈նունոց խեռ է, զուր մալ կես կ'ենի խըռ
ուրիշաց։

Մա̈լշուրիկ, գա̈վա՝ ըզմալ ենա խըռ ուրիշաց շէրէգ։

3

Հա̈խշըրէ մալ, գոլլա̈թ, գա̈ զըմմեն մոռ զա̈նգինաց.
Կա̈յք, զըկարողութեն, գա̈ զըմմեն մոռ զա̈նգինաց.
Վուսկէ, զըմուլք, գա̈ զըմմեն մոռ զա̈նգինաց.
Ֆա̈ղիրն է, ըզուր երկու տա̈րա̈կ ծեռնիր...

Ջա̈նգլին կ՚ուտի յեղ ը մեղր, նստի ըղուր ողեն.
Հա̈խկատ չունի ուրան զըգա̈րեխաց, չութան.
Ջա̈նգլին ըլի նոքըրու կլխուն, անել տա ըղուր պա̈ն,
Հա̈խկատ չա̈րչըրվի, չալըշի, չո̈ր տո̈ս կա̈ ուր ջան։

Ջա̈նգլինաց ը սուլթանաց խոսկ մեկ ի.
Ամմա դ՚արի վուր, ա̈նունք քիչ ին, հա̈խկատ շա̈տ ի.
Քիչ գըշատ կը տանջա, ղանու նա̈ֆ կ՚ուտի.
Սիլահ ը կուվաթ ա̈նու ձեռին ի

4

Տա̈նակ վոսկոռաց խասեր ի չխո...
Լա̈նին փաշեն հա̈խկտի մ՚ տղե մ՚ եր.
Ենիկ թռավ ըղուր սուլթան ը հա̈քմաթի հիրես.
—Ցես տը կռվիմ, ասից, տ՚ազատիմ զհա̈խկատ...

5

Հուքմա̈թ եր, քա̈շից ուր ղուրք ը զուրա̈պխո.
Ջա̈նգլյքտիր տըլին ուրանց խա̈ր ը խա̈գնեն.
Բա̈գեր, ա̈ղանիր չխո խասին քա̈մա̈գ։
Առունք ա̈մեն քշին, յերիշ երին գըլխ Լա̈նին փաշեն։

6

Լա̈նին փաշեն եր, կանչից ըղուր հա̈խկատ-
փուղա̈րաքտիր.
Կանչից քա̈սըր, պա̈նվա̈ր, խեխճ խղմա̈թքա̈րքիր.
Հինչքան կին ա̈տպխին, թա̈փին Լա̈նին փաշին
քա̈մա̈գ,
Փա̈տ ը փա̈տա̈տ, չա̈ք ը դա̈գնա̈գ տռած գա̈րանց -
ախլա̈ն։

7

Ըախտին Լենին փաշեն խմեծավ ուր ձին, քշեց·
Մյասնիկ[1] փաշեն խմեծավ ուր ձին, քշեց·
Այթարբեկ[2] փաշեն խմեծավ ուր ձին, քշեց·
Կալլին[3] փաշեն խմեծավ ուր ձին, քշեց·
Ղուկասըվ[4] փաշեն խմեծավ ուր ձին, քշեց,
Թամկից և զոռ երին ֆաղիրաց որդուն։

8

Հուքմաթ եր, խըտ զանգինաց առան, եկան ուրանց զուրք·
Խամխարքիր առան, եկան ուրանց զուրք·
Զըռ Ինգլիզ առավ, եկավ ուրան զուրք·
Ցանդուրղ առավ, եկավ ուրան զուրք·
Ամրքյան առավ, եկավ ուրան զուրք·
Ճայփուն առավ, եկավ ուրան զուրք·
Զին-Մաչին առավ, եկավ ուրան զուրք·
Մարր-Հիսար առան, եկան ուրանց զուրք·
Ոսման-Տաճիկ առավ, եկավ ուրան զուրք·
Աջամ-Պարսիկ առավ, եկավ ուրան զուրք·
Հարաշ-Ալման առան, եկան ուրանց զուրք·
Առունք զըմմեն տը ծեծկվին խըտ Լենին փաշին։

---

1 Ա. Մյասնիկյան։
2 Գ. Աթարբեկյան։
3 Մ. Ի. Կալինին։
4 Ղուկաս Ղուկասյան։

9

Զա̈նգինաց զուրքի մե գլամ էր՝ փարով վա̈րցկան.
Զա̈նգինաց զուրքի մե գլամ էր՝ շուխ պա̈խված.
Զա̈նգինաց զուրքի մե գլամ էր՝ վա̈խկուտ-ջա̈նպախ.
Մե գլամ էլ ուտար, ա̈նծանութ մարթեր։

Էն վուր փարով էր էկի, ըղուր կլա̈խ կը պա̈խեր.
Էն վուր շուխ պախված էր, ըղուր կլա̈խ կը ծա̈ծկեր.
Էն վուր վա̈խկուտ-ջա̈նպախ էր, կը վախեր, կը
փախեր,
Մացեր ին ուտար մարթեր, վուր ուրանց վեջ չէր։

10

Էն վուր Լա̈նին փաշի մարթեր ին, մեկ սիրտ, մեկ
խա̈քի.
Զըմմէն էլ դրկված պա̈նվորքներ ին հա̈խկառ.
Զըմմէն էլ դրկված ըռշպա̈րքիր ին հա̈խկառ.
Զըմմէն էլ դրկված ա̈նկուռծ, խեղճ, հա̈խկառ,
Հախշըրրի զուրկ, սիրտը վա̈ռված մարթեր...

11

Զուրք ը ըռհա̈ռ զա̈րկլին-զա̈րկվան խըռ իրար.
Ծեծին-ծեծկվան խըռ իրար.
— Ե՛յ, վըեժի կա̈խ ի, կանչից Լա̈նին փաշեն.
Զա̈րկե՛ք, ծե դուշման փուչ երեք.
Կուվեք, ծե ազատութեն ծեռք պերեք...

— Ե՛յ, կանչից Թաքա̈վուր-սուլթան ուր զորաց.
Զա̈րկե՛ք, եաա չփլախ-չփլուխ նախրաց.

Վոն շատ կատարի, ա̈նու կը տամ դըխաչ ը մինդալ·
Ճա̈ղցածնիրաց հատ խա̈ժան կ'ուղա խիլ՝
Զիմ թուր ը թա̈ջ, զիմ թա̈քա̈վորութեն…

Զա̈րկլին, ծեծկվան լուսուն չա̈ր ի եվար·
Զորաց մեջ ինչքա̈ն կին ըռըշպա̈րքեր,
Զորաց մեջ ինչքա̈ն կին պա̈նվուրքեր,
Ասին.—Մենք վրե պա̈նինք մեր ֆա̈ղիր ա̈խպրտանց·
Գուլուր փա̈խին, ա̈նցին դըխ Լա̈նին փաշեն:

12

Զա̈րկլին, ծեծկվան լուսուն չուր ի եվար·
Զա̈նունք ունին գըթոփ ը գա̈մբա̈լա,
Ատունք՝ քա̈նի մ՝ փշտավ ը գա̈րաբինա·
Զա̈նունք ունին մոսին, մա̈տաին հրացան,
Ատունք՝ պա̈խ ը յեղան, գա̈գա̈նադ·
Զա̈նունք՝ գըպուլըմետ, չա̈րխ ի ֆա̈լա̈ք,
Ատունք՝ վա̈րուց, չա̈քըջ, փոցխ ը կերանթի…

Ե՜յ,—կանչից Լա̈նին փաշեն,
Խեծավ ուր ձին, քըշից հա̈ռեչ·
Մինչեվ յե՞փ, ա̈սավ, ըղմե ա̈րուն ծըծիք·
Մինչեվ յե՞փ, ա̈սավ, հաս հա̈խշար զավթիք·
Մինչեվ յե՞փ, ա̈սավ, մե իրա̈վունք խլիք,
Մինչեվ յե՞փ, ա̈սավ, հա̈խշար տիրապետիք…

Ասավ, քըշեց հա̈ռեչ՝ ըղուր կա̈րմիր բա̈յրաղ պռնած·
Անու եավեն պա̈նվուր կնա̈ց խա̈զա̈ր-խա̈զա̈ր·
Անու եավեն ըշպա̈ր կնա̈ց խա̈զա̈ր-խա̈զա̈ր·

Անու հավեն սա̈նդյաթքյա̈ր կնա̈ց խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր.
Անու հավեն ա̈նտուն, քա̈ղցած խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր.
Անու հավեն ա̈նկուած, յեսիր խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր.
Անու հավեն ա̈նխուղ-ա̈նճուր խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր...

Գունին զա̈շխար, ղըսար, ղըքա̈ր ղըմմեն դեխեն.
Գունին ծա̈րեր, քա̈ր, ղըկապան ղըմմեն դեխեն.
Գունին գետեր, մերի, չընդըլ ղըմմեն դեխեն.
Գունին տա̈շտեր ղա̈ռա ը պա̈խից ղըմմեն դեխեն.
Գունին ա̈րուտ, չա̈յիր-չիմա̈ն ղըմմեն դեխեն.
Գունին ղըծով, հա̈խպուր, որման ղըմմեն դեխեն...

Զա̈րկլին, զա̈րկվան, զա̈ման եկավ, հա̈խշար պունից.
Զա̈րկլին, զա̈րկվան, լեշը փուվավ տա̈պակ-տա̈պակ.
Ըսպանվողաց ա̈րուն եկավ, կապից ղըդետ,
Ես ա̈րնագետ քա̈ր կլտորեր ղըմանաքա̈շ...
Զա̈րկլին, զա̈րկվան՝ մե կողմ հա̈քմա̈թ, մե կողմ
բույա̈թ.
Զա̈նունք ունեին ղըթափ ը զա̈լլա, ղըղումբա̈րա̈.
Ատունք՝ քանի մ՚ փշտով թվա̈նք, զա̈րա̈բինա̈.
Զա̈նունք ունեին մոսին, մա̈ուզեն, խըշտ—հրացան,
Ատունք՝ պա̈խ ը, փոցխ ը յեղան, շիշ, կերա̈նթի.
Զա̈նունք ունեին ղըպուլըմետ, չա̈րխ ի փա̈լա̈ք,
Ատունք՝ ճպուտ, քա̈ր ը կուիթ, կացին, ուրաք...

Զա̈րկլին, զա̈րկվան չուրի կեսոր, արեվ թեքվից,
Են հա̈քմա̈թի զորաց մեչեն հինչքան կին,
Են վուր փա̈րով եր եկի, ըղուր կլա̈խ կը պախեր.
Են վուր շուխ պա̈խված եր, ըղուր կլա̈խ կը ծածկեր-

Էն վուր վա̈խկուտ-ջա̈նպախ էր, վախեր, կը փախեր։
Մացեր ին ոտար մարթեր, վուր ուրանց վեջ չեր։

13

Կեսոր թեքվից, Լա̈նին փաշի ղուրքը նեղվից…
Ի՞նչ տը ա̈ներ փետ ղըփա̈տատ ղըթոփու տեմ․
Ի՞նչ տը ա̈ներ կացին, մանգաղ, թվանքի տեմ…
Լա̈նին փաշեն խա̈րա̈ր երեց քա̈մադ ուղեց․
Լա̈նին փաշեն հա̈վար եցկից, խա̈մխա̈ր ուղեց․
Խա̈մխա̈ր, քա̈մադ թա̈փան, եկան չորս դեխերաց․
Եկան, խա̈սան սեվ պա̈նվորքիր խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր․
Անունց եավեն ըուըշպա̈րքիր խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր․
Անունց եավեն ա̈նիյաթքա̈րնիր խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր․
Անունց եավեն լութ-քա̈ղցածնիր խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր․
Անունց եավեն ա̈նխուղ-ա̈նճուր խա̈ղա̈ր-խա̈ղա̈ր․․․․

Քա̈մադ եկավ, Լա̈նին փաշի կուղմ ղորացավ․
Հա̈քմաթաց կուղմ թուլցավ, խոքնավ…

14

Զա̈րկին, ղա̈րկվան ղուման եկավ հա̈խշար պունից․
Զա̈րկին, ղա̈րկվան լեշը փուվավ տա̈պակ-տա̈պակ․
Ըսպանվողաց արուն եկավ, կապեց ղըզետ,
Ես ա̈րնազետ քա̈ր կլոռեր ղըմանաքա̈շ…

Զա̈րկին, ղա̈րկվան, Լա̈նին փաշի ղուրքը ղոուց․
Զո̈ւ քա̈շիցին, աչքը ՚խփուկ հաուջ վա̈զին․
Եվ չիրիշկին թափ ը թվանք ղըպուլըմիտ․

Դաշով պայցին ուրանց ճամփան մեջ են զարաց.
Վուտքի տակ լաշ տապակ-տապակ կոխին, անցան.
Յոթ խաս զարնվեր, ընկներ, մեկը անցներ հառեջ.
Ջամդաք թափեր քանց փայլդու խալխ-խաղալ...

Լանլին փաշեն կ՚երթեր հառեջ՝ պանած բայրաղ.
—Հայ-հայ, տղաք, հա՛ռեջ անցեք, որը մերն է...
Հառեջ անցավ քաղցածնիրաց տղուն մեկեն.
Հաքմաթաց զուրք խառվավ հիրուր, փախավ ցրիվ...
Լանլին փաշի զուրքը թափավ քանց գլմուրիխ.
Քանց բհարու սել ը սելավ գետ վարարած.
Քանց գալանի վարար կարկուտ... զի՞նչ պատուխաս.
Քանց զըծալու ֆաթունի պես առդ ը ամման,
Քանց սամ յելի... երկինք, կետինք իրուր խառնվան...

Մեկ գլյամաթ փաթավ գախշար գալավ իրուր.
Լանլին փաշեն յերից երաց, առավ զըմմեն.
Առավ անուց թափ ը թվանք, ջարախանեն.
Առավ անուց մուխն-մառուխն զըղումբարեն.
Առավ անուց զըպուլըմխա, չարխ ի Փալաք.
Տվից, ցրվից, քանդից, փուխց մեկ հախշըրքով...

15

Հաքմաթաց զուրք վուր մեկն ընգավ, վուր մեկ
փախավ.
Մըչ հախշըրին կուրան, կացին, թողեր կորավ։
Հաքմաթբաշի, ենա բառաց ճոչ սուլթանին,
Ձըռ դանդալուշ ը պաց պերան ենա ծարին,
Սալ-սալամաթ պանին քաշին մոտ Լանլինուն։

Լօնին ասաւ.—Գիյան-սօրապ, ես ի՞նչ ըրիր.
Քօ ի՞նչ պօն է կառավարել մըջ հօխշըրին։
Ենա ծօր, թե.—Յես քօ վոտաց մեռնիմ, Լօնին.
Մի՛ սպանիր, հեյրան իմ քե, ձի խնայիր.
Կառր ըմ խող տու ցանիմ պավռուն, ընեմ բոստանչի,
Քօ սօղաղին, խեա իմ խիղնանց, ապրինք մինչի…
—Յես չըմ խափվի, եսա շողոմ խոսքերտ իթօրդ.
Ասեց Լօնին, քաշեց զըռուր կլօխն իղօրկ…
Կլոխն իղօրկ, ջօմղօք թալից ենա քօլխան.
Փողաննիրաց շներն եկան ինչղօղօր կին,
Քօշին, ենու լօշը երին ծվեն-ծվեն…
Ենու կլօխ գօրկլին երկեն մեկ ըստոիմ ծեր,
Առան ուրանց ծեռ, քօնց բօյրաղ պարզիցին վեր,
Հօխշար-օլօմ պտըտուցին, չօրի նեխավ,
Եռավ ցցին. մըջ քօլլուղին…

16

Սօտկավ ըլմշել, վոր նստեր եր հօխշըրի վզին.
Քօնի՛-քօնի՛ օրունքսեր եր երի ենի,
Քօնի՛-քօնի՛ ոջախներ եր մարե ենի,
Քօնի՛-քօնի՛ ճժուկներ եր թողե խեխծ-վուրփ,
Քօնի՛-քօնի՛ մերեր-քօրեր սևվիր խօքած,
Քօնի՛ ջօհել-ջիվան կնքաեր վորփեվօրի,
Քօնի՛-քօնի՛ կը մխկըտին մըջ գնդօնաց,
Քօնի՛ կռիվ ղըշօմաթա սարքեց ենի,
Կ՚ուզեր գախշար-օլօմ գօվթի, իրմով ենի…

17

Լո̈ռին փաշեն մո̈լշուրիկլի տրից զո̈կուն.
Երկրի կարք վերուց, երից կլոխն ի վեր։
Ե՛ն ո̈ւո̈չվա զո̈նգիններաց երից կատու,
Ծլից ամեն ինչ ծեռներաց, Թողից ո̈նատուն։
Են ո̈ւո̈չվա քո̈արըններաց երից փաշա.—
Զըմմեն մեկ-մեկ աո̈աո̈վուր ին մըջ գիվանին։—
Են ո̈ւո̈չվա ըեգիր, ո̈ղեք, շինից յեսիր.
Զըմմեն պռնից, կռածից, եսկից, քշից ներսիր։
Են ո̈ւո̈չվա նոքո̈ր, չորան, գըխզմո̈թքո̈ր,
Զըմմեն տարավ, ավլից հուըր՛մ, տրից սո̈րքո̈ր։
Երկեր զըմմեն կլո̈խ եառու պո̈նվուրքերաց.
Երկեր զըմմեն կլո̈խ եառու ըուշպո̈րաց,
Երկեր զըմմեն կլո̈խ եառու խեխճ նոքո̈րաց։
Ով վուր խեխճ եր, նո̈չար, քո̈ղցած, սարավ հո̈ռեչ,
Ով զո̈նգլին եր, ո̈ղա ու ըո̈գ, ախեց կլխին,
Փշեց, կնաց մամու խուլթուխ, անո̈րց մառավ,
Յան թե քո̈ղցած, ծո̈րավ, գվուեց, վեռչը խո̈ռավ։

Երկեր հետակեց Լո̈ռին փաշեն,
Թողից զըմմեն ուրո̈ն մարթեր.
Հո̈շխատավուր աուից ուր թեվի տակ…

18

Տեր, պարերար վողորմած.
Տու քո̈մո̈ղ ըլնես Լո̈ռին փաշին
Ը ուր զուրք ը զուրապետաց։
Ամեն։

ԼԵՆՈՒ ԽԱՔԱ̈Թ

Ասաց՝

ՍԱՀԱԿ ԱՊՐՈՅԱՆ

Գրի առավ 1935 թվին

ԳԵՂԱՄ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Ասել է Մշու շրջանի Նամ գյուղացի Սահակ Ասրոյանը 52 տարեկան, անգրագետ՝ Հայրենիքում նա հովիվ է յեղել։ Պատերազմի ժամանակ գաղթել է Ալորկովկա, ապրել է Լենինականի Դուզ-քյանդ գյուղում, Դիլիջանում, Ախտայում, ապա փոխադրվել է Բասար-Գեչար․ իսկ ներկայումս ընտանիքով հաստատվել է Ն. Բայազետ։ Ինքը Ղաերի մագիստրալի 5-րդ դիստանցիայում աշխատում է, վորպես բանվոր։ Իր ասելով՝ «Լենու խաքմթ»-ը ինքն է հորինել։

Գ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ․

1

Ուռուսի Թաքավոր յաի Լենու խորն ու ախպորը[1] դարադաչ էրեց, էն ժուկ Լենի հալա ճժուկ մ' էր։ Յեփ Լենին գո̈նջըցավ ուրան ճանչցավ, բաշլայեց ուռուսի Թաքավորի տեմ Թալաք զարկել, վարաալամ, աշխատիլ, որ էնիկ կլխի վրա կա̈, որ ուրան խոր ու ախպոր հարիֆ խանա։

Լենին էր, էնչանդար դալդա-պուճախներաց զարկեց, զարկվավ, տեսավ՝ Չէ, պան տո̈ւս չի կա̈։ Բախըտին ուրան կերպ ը վըրաատ փոխեց, տարցավ խուս, տեսավ ուրան ուրաք, սղոց ու ըմմեն ջուսա հաջաթքէր, հաշխատեց, կերպ էրեց, մտավ Թաքվորի պալատ, բաշլայեց խուսուէթեն անել։

Լենին դաստի էնքմն հավաստար ցուց կու տեր իրան, որ տառցեր էր տան տղա։ Նա ֆանդ ը ֆելով

---

[1] Իլյա Ուլյանով (հայր) և Ալեքսանդր Ուլյանով (եղբայր)։ Ասացողը շփոթել է պատմական իրողությունը՝ կարծելով, որ հայրն էլ է կախաղան բարձրացվել։ Վրդական չափազանցություն և վրեժի զգացմունքն ուժեղացնելու համար։

վերջ էնիկ էրես առավ, ուրան խամար մուննաթ էրեց, վոր տուն ըմ տան, սթար էղի մըջ պալատին:

Գալատի տակի պատվալքերաց մեկը տվին էնու, վոր քըշերներ սթար էղի:

Էնու միտք էն էր, վոր ուռուսի խաֆած, քաֆթառ Թաքվորին մեկ ծեվով մ՚ ըսպանի, ուրան խոր ու ախպոր հարիֆ խանի:

Ըսխոտին վոր Լենի պատվալի մեջ տեղ · քթավ ուրան, քըշերներ բաշլայեց պալատի տակ ծակել, լաղըմ տալ:

Մե ժուկ մ՚ ընցավ, Լենի սաղ պալատի տակ լաղմեց, քանքան էառ, սրա բաշլայեց տրսեն, ուրան ընկերներաց մոտեն բոմբ ը դինամիտ պերել, լցնել լղամներին մեջ:

Յեփ լղամներ լիփը-լիք բոմբ, դինամիտ, բարութ, գյուլլա էլեց, մեկ քըշեր մ՚,—հա՛ բաբամ, վոր տուկաս,—մեկ էրկեն մ՚ ֆիթիլ տրեց բոմբերաց մեջ, տուս էկավ, կըրակ էառ, փախավ... Բոմբեր պացվան, նա՛ քի պալատ, պալատի խեա սաղ մեկ Թաղ մ՚ էլ դար ը դարար էլավ, կոռծանվավ: Թաքվոր ուրան քյոլ ը քյոլֆաթով, ուր պալատականներով մեկտեղ, առճվան, ջաններըը ջհաննամի վառըլ էլավ, գնաց[1]...

Դ՚արի տես, որ Թաքվորի ճոջ աղեն էառ քըշեր, ուրան քեռու մոտ խուր էր էղի, էնիկ պըծեր էր:

Մեկել որ յեփ հիմցան էառ սիթամ պան էրող ձԼենի յա, սաղ ջամդար, պոլստով, գարաղավլը, նա-

---

1 Վիպական արձագանք Ստեփան Խալտուրինի տեռորիստական ակտի:

չալնիկ, սազնիկ, յասավուլ, հինչքան կին, թափան, բաշլայեցին ժուռ գալ, վո՛ր ծեռ եցկին զլենի։

Ամա, ինչ Լենի յիր, ուրան հարիֆ խանելին սո-րա, եստեղաց փախավ, մերաշ ընցավ Չին-Մաչինու Թաքվորի խող։

Բաջ, շնորքով, ղոչաղ մարթ եր, կնաց Չին-Մաչին Թաքվորի պալատ, ուրան ղուլլուղ մ՚ քնթավ, մտավ խզմաթքյար։

Մե ժուկ ը ժամանակ մ՚ ընցավ. օրերեն մեկ որ Չին-Մաչին Թաքվորի հախչիկ սեյր երթըլու վախտ, ուրան աչկ առավ Լենուն։ Կայնավ, վարավուրդ երեց, հախչիկ խավանեց զլենի, ուրան սիրտ կպավ ենու։ Ամա գ՚արի տես, որ Լենի ել ենու սիրեց. երկու ջա-հելներաց սիրտ կպավ հիրուր։ Թաքվորի հախչիկն եր, զարնված պես յետ եկավ ուր տեղ, վերուց գիվիթ-ղալամ, մեկ նամակ ըմ կրեց Լենուն, թե.

«Լենի՛, բա՛ չասես, իմալ մեղ կը փաթթի ուռի ծառուն, իմալ պաղլեխ կը փաթթի զվարթի քոլուն, իմալ օց կը փաթթի լազլազու վիզ, եմա՛լ ել իմ սիրտ փաթթվեր ի քո սրտին. իմս կաս, տուն յես, չկաս՝ տուն յես։ Աղօ՛ր իմ խեր խակառ ընգնի, մը վախիր, իմ ջան քե հեյրան ի. են վախտ կ՚առնենք հիրուր, կը փախինք ազգ՚ն Թաքվորի խող, ուրիշ մամլաքյաթ. ենտեղ կ՚ապրենք խըր հիրուր»։

Լենի եր, նամակ առնելու պես՝ կարթաց, ամեն ինչ հիմցավ, սորա բաշլայեց ջըվաբ կրել հախչըկան, թե.

«Չին-Մաչինու թագվորի հախչիկ, աղո̈ր քո սիրտ մեկ ղանդի ղաղար ի ձի կալե, իմ սիրտ մեկ սարի ղաղար ի կալե քեզի։ Ամմա պայց մեկ վախտ ը մաղաթ սաքը ենենք, ասենք՝ գո̈լաշաղ մեզի ի՞նչ կ'եղի։ Զունքի քո̈ թաքավոր խեր ձի պես քո̈սը քո̈թիլի մ' հախչիկ չի տար»։

Հախչիկ կ'առնի կիր, կ'ասա.

—Աղեկ, թո եղի…

2

Թող եսոնք ուրանց սեր եսպես կաղտնի վելեն, մենք խաբար խտանք Ուռուսի ըսպանված թագվորի տղի մոտեն։

Թագվորաց մոտ ղայտա-կանուն կա, որ թագվորի տղեն չուրի չփսակվի, իրավունք չունի ուրան խոր թախտը նստի։ Ըսպանված թագվորի տղին խամար վաքիլ-ապեկոն ըմ ուրին, չուրի ենիկ փսակվի։ Կանուն էլ կա, որ թագվորի տղան պետք ա անպատճառ թագվորի հախչիկ առնի ուրան թաքուհի։

Ենիկ էլ խաբար, խլավուղներ խրկեց հաշխրի չորս պուլըր, որ ուրան խամար մեկ արժանավոր հախչիկ ըմ քթնին։

Ժուկ ը մուղաթ ընցավ, թագվորի տղուն ջըվաբ էկավ, քի.—Բա՛, չասես՝ Չին-Մաչինի թագվոր մեկ հախչիկ մ' ունի, որ չուտես, չխմես, ուրան խաղ ը խալին, գո̈լ-ջամալին թամաշա ենես։

Ուռուսի թագվորի տղեն եսա սալըղ առնելու պես, կ'առնի ուրան պատվելի մարթեր, էրան կը քըցա Չին-Մաչինու թագվորի խող։

Չին-Մաչինու Թագվորն է, կ'ուրխընա, առք-փառք կ'ընդունա, կը պատվա, կը հարկա։ Յեփ Ռուռուսի Թագվորի տղան ուրան կալու պաճառ մանչուր կ'ենա, Չին-Մաչինու Թագվոր մեկ հաշխրքով ուրախ կ'եղի, կը խընդա.

Թե.—Մեկ հախչիկ է, քեզի ղուրբան։

Կ'ողորկա, հախչիկ կը կանչին։

Յեփ հախչիկ կը կանչին, Թագվորի տղեն մաթ ը մայիլ կը մնա, կ'ասա.

—Իմս կա, նա է. չկա՝ նա է...

Ամմա հախչիկ բեխաբար է Յեփ հախչիկ եառ պան կ'իմնա, կը սքվորի, խաբար կը տանի Լենուն,

Թե.—Բա, չասես՝ եսենց, եսենց...

Լենի կ'ասա.

—Դու գառդ մի արա, ենու խոր կլոխ ուտող, ենու կլոխ լե կ'ուտա։ Յես ենորից կոխ ուտողը չեմ. քելի, խանգիստ մնա։

3

Լուսուն Ռուռուսի Թագվորի տղեն Չին-Մաչինու Թագվորին կ'ասա.

—Խանչա քո հախչիկ, վոր զիմ նիշան տանա, վոր յես արխային զիմ Թաղաբեքի խետ եղիմ։

Կը խանչին հախչիկ։ Խեր կ'ասա ուրան,

Թե.—Ռուռուսի Թագվորի տղեն քեզի կ'ուզի իրան Թագուհի։

Հախչիկ Թե.—Յես ենու չըմ տանի։ Յես իմ գյոզալթի սովգյուն ունիմ։

Թաքավոր կը հաստատ, պայց ամմա հախչկան շատ սիրելու սաքաբին պան չի տա. մինակ կ'ասա, թե.—Յես խոսք իմ տվեր իմ, քեզի իրիք որ ժուկ կ'իտամ, վոր քո ախր խոսք տախ։

Հախչիկ ուր խոր կսեն կը պատմա ըլենու։ Լենի յա, համա հենց են քշեր կը թամքա երկու ձի, կ'առնի ուր սիրած, կը փախին Զին-Մաչինի խողից, կ'երթան, կ'անցին Ցաանգստանի խող։ Երթլուց հառաչ Լենի մեկ կիր ըմ կը թորկա Ուռուսի թաքվորի տղի անունով, թե.

«Ուռուսի թաքվորի տղա, լավ հիմցիր, հա. գող ղանըմինի թանիյուր[1]. յես են Լենի յիմ, վոր քո խաբըտ, ուրան ակը միլլաթով բամբ տրի քըցի։ Մըկա ըը քո նշանված կ'առնիմ, կը փախիմ. տղա յես քըթիր։ Պայց ամմա հուսըմով չես պրծնի. յես նորեն կը կամ Ջանիդ»։

Ուռուսի թաքվորի տղեն ի, հաա տեղից կը թողնի քեռ ը փոշման, մաղրուն կ'երթա յետ։

Ըսխտին թաքավորի տղեն ա կ'երթա, Լամսու թաքվորի հախչիկ կ'առնա ուրան թաքուհի, սորա կ'ոծլի թաքվոր, կը նստի ուրան թախտ։ Պայց ամմա են որվանք նա Զին-Մաչինու թաքվորի հախչկա սուրաթ ուր սրտեն կ'ելլի, նա Լենու քաշած դաղ։

Ինչ վոր Լենի յա, են ըն ուրան հարիֆ ունի հալա. կ'ասա.

«Ջուրի Ուռուսի թաքվորի միլլաթի քոքը բինան չկտրիմ, յետիկ խանդիստ չիմ եղի»։

[1] Աչքը թշնամուն ճանաչում ե։

4

Ժուկ մը ժամանակ կ'անցնի, չուրի կը գա ձոչ կովը։ Ձոչ կովի վախտ Լենի ուրան գուրուֆ կը փոխա, կ'ընցնի Ուռուսի խող ու կը սկսի ուր ընկերներաց, ուր Թայֆայի խետ հաշխաթել, վոր Ուռուսի Թաքվորին կլխի վրա պիրի։ Վեռչ Լենու հաշխաթանք կը խասնի. չուրի կովու սալդաթներաց մեչ եր։

Լենի կրիր եր, թե.

«Սալդաթներ հորին կը կռվիք, կը սպանիք, կը սպանվիք խաստավիզ Թաքվորների, խաստափոր խարըստանների, խաստակլոխ խմբապետքերի խեյրի խամար։ Թողեք ծե գիրքեր, ցրվեք ծե տներ»։

Մալխաս վերչ, Նամուսթի մըռձիմներաց պես Լենու մարթեր Ուռուսեթի ու Թաքվորի խիմաց տակ գ'իչնին, եներան կը քանդին, չուրի վոր մեկ որ եղ ուռա կը քաշին, յերկիր կը գաֆթին, ուրան՝ Թաքվորին եղ կը պոնին, քյըլլի քյըլֆաթով-միլլաթով։ Լենի եռոնց Թամմըղին սրի կը քաշա, ուրան հարիֆ կը խանա, նոր կ'ասա․

—Ալոն, գըմ ջան գինջցավ. յես իմ խոր, ախպոր, քյըլլի հախկաս ըռհաթի հարիֆ խանի...

Ըռահաթ մը Լենու ու ընկերներաց անուն կը տընին «բալ չարըք», գոնվա մեղրի պես քաղցր, արեվի պես պայծառ։

—

ԼԵՆԻՆԻ ԽԵՔԱԹԸ

Ասաց՝
ՆՈՒՇՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրի առավ 1935 թվին
ԳԵՂԱՄ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Պատմել է Աշտարակում բնիկ Նորաշեն գյուղի (Նոր-Բայազետ) բնակիչ, 65 տարեկան, անգրագետ Նուշո Գրիգորյանը։ Տարիներ շարունակ սևագործ բանվոր է յեղել Բագվում, վորտեղ և սովորել է սույն հեքաթը «կլիտնակ տղերքից»։

Գ. ԹԱՐՎԵԴՅԱՆ

Ասեմ ախպորըս, հենց վոր Նիկոլ Թաքավորի մեր կը պըտղա ու կը պերի Նիկոլ, ուր խեր շատ կ'ուրախնա, վոր ասված ուրուն ժառանգ-նասլենի ավեց ու չթորկեց մահրում:

Դե արի տես, վոր Նիկոլի մեր, վոր Գերմանու Թաքավորի ախչիկն եր, են քըշեր մըջ ուր քընին երազ կը տեսնի՝ քանց Սիպերից մե նորելուկ մանուկ, անուն Լենին, ուր կըլոխ մարթու, ամմա մեկ կրակ-կարմիր ածղանա վիշապու պես, կը պարզրանա վեր ամպերաց ու խըախուն կ'իջնա համա դմուռզ Պետրեպուրկ[1], Թաքավորի ամարաթ, ու կ'իջնա մանուկ Նիկոլի որոցքին վրա, կը փաթըթվի զորոցք ու կը սկըսա նորամանուկ խեխտել:

Թաքուհին ա, ինչքան ուրուն կը թալա, տեղից ժաժ կալ, չի կըռնա: Ինչքան կը բոռա, հավար կը խանչա, ուր ձեն ուր բողազից դուս չի կա... Էնա կարմիր վիշապ կը խեխտա, կը սպանա նասլենուն ու կը թորկա կը քաշվա...

---

1 Պետերբուրգ—Պետրոգրադ—Լենինգրադ:

Թաքուհին ա, խափ ուրուն կոխած կը դառմնա, կը խանչա ուր իրիկ Թաքվոր, թե.

—Թաքավոր ապրած կենաս, մեր նաւլենի ժառանգուն թե մե խաթա ու փորցանք կա, եորիկ Լենինից կ'ըլնի:

Ու կը պատմա ուրուն արած երազ... Ղամ-ղուսան կը պատա:

Թաքավոր, Թաքուհին չըն գինա՝ ինչ էնեն...

Յետով Թաքավոր կը խանչա ուրուն վաղիր-վաքիլ, սինոթապետներ ու էնոնց կը պատմա Թաքուհու կըսեն...

Սինոթապետներ կ'ընգին վըվըլա. ջաշ կ'եցկեն հըմմեն տեղ, թե.

«Էսա Սիպիրի քախկի մեջ Լենին վըն ա, վըն չի»:

Տու մի ասա՝ Թաքավորի ըսպանող մարթերաց, վոր սիպիրական էն երև, էնոնց մեկի ողանիրիցն ա: Ու կը քշնան, խաբար կը տան, թե՝ եսենց, եսենց, եսենց...

Դե արի տես վոր, յաղըլան փողըմաղ[1]:

Ինչանք Թաքավոր խրաման կը խանա, կը խրկա, վոր Լենին ուր խոր-մոր խետ պռնեն, զանեն, ըսպանեն...

Աստու կարող զորութընով, էնտեղ էլ Լենինի մեր երազ կը տենա, վոր ուր նորամանկան կըլխին որորաց փորցանք ա կալու:

Էս խըտևին, ասեմ ախպորըս, Լենինի խելըն ա, ալըխալ կը ժովզա ուր խիղան, ուր տան ըռըթըրի,

1 Դըվածը չի ջնջվի

ծանդըր կը թափա, թեվալը կը վերցա, կ՛առնա ուր քուլֆաթ, գրանից կ՛անցա.

—Հա՛յդե Գերման, ու՞ր ես, եկամ...

Թաքավորի միլդադարքիր կը խասին Սիպիրի քաղաք.—Ու նո՜ւ, լալա քո՛ւնըր, յուրդի գյոլըփ վերանա, նա թաս վար, նա՝ համամ[1]... Լենինի խեր առև ուր քուլֆաթ ու փախե...

Ըստըուն, խաբար, աթար, թել կը թալին ա՛շխարքի չորս դեխ. «Բա՛ եսենց, եսե՛նց, եսա նիշաններով մարթ ու՞ր ա փախե»։

Ալըխալ վասակներայ կողմե խաբար կը կա։

Թե.—Ետ նիշանդաններով մարթ Ըռուսեթի Սիպիրի քախկեն փախե, մըկա Գերմանու խող կ՛ապրա։

Ըստըուն Ըռուսի Թաքավորն ա, կը կըրա ուր աներոչ.

Գերմանու թաքավորին, թե.

«Հա՛լը, ղաղյա, ետպես, ետպես...»

Ու կը խընթըրա վոր, թուխտ առնելու պես՝ ենոնց թամըրգին մըլ-ղաղափ տա։

Ըսխըտուն Գերմանու Թաքավորն ա՛յ թուխտը առնելու պես, խըտ-խըտուն ամմա հենց ենա քըշեր քընի մեչ երազ կը տեսնա։ Մըչ երազաց խըրեշտակ կ՛ասա, թե.

—Ե՜յ Գերմանու Թաքավոր, կ՛ասա, քո ախչիկ Ըռուսու Թաքավորեն մեկ են տեսակ կազան մի ծը-

---

1 Հալան հեռացել է՝ յուրդը մնացել է ավերակ. վոչ թասը կա, վոչ բաղանիքը:

նե վոր, էնիկ էլուն վոր նստավ ուր խոր թախտ, կ՚ասա, էլ յերկիր արուն-արցունք կը պըռնա... Մեր մանուկ կ՚ուրանա, էնպես մեկ զուլումքար թաքավոր կ՚եղի, վոր չուրի մկա, նա՛ խող ծըներ ա, նա՛ կը ծընի, կ՚ասա։ Էնի սատանի, Բեղզեբուլի, Դըմշկի ու Սադայելի զարմ ա, կ՚ասա։ Էնի վոր ավալ էկավ, ալամ-աշխարք կը զաֆտա, էրունք կը անա, աշխարք կը վառա, կը թորկա, կ՚ասա... Ամմա ասված, կ՚ասա, էսա պանիր լավ գինա։ Ըսպրուն էնու խամար զազար ա ըստեղծել Լենինուն. խմալ ուլի խամար լաղլաղուն, վոր ավալ կա՛ թե չէ՝ էնու կըլոխ ճխճախի... Զունքի Լենուն, կ՚ասա, ասված ըստեղծում ա խեղճերաց, անճարներաց, նա զուզուրներաց քամադ, տեր, ոքնական... Վեռչը-վեռչը, կ՚ասա, Լենին կը ճառթա ուց Նիկոլին ու ուրուն սինոթապետներաց կըլուխ, ու Ըռուսեթ կը տիրա, թաքավորի թախտ կ՚առնա, ու ինք՝ Լենին կը նստա, կ՚ըլնա ֆաղիրներաց թաքավոր, աշխարք կ՚անա խաֆարական, կ՚ասա, ամմա պայց թամմուզ զանգլիններաց, համփաներաց, սինոթապետներաց սուր կը քաշա, ուր երկրեն կը խուկա... Մկա, թա տու էնա տղին կըտնես, ասված քու թախտ թառըմառ կ՚անա, քեզի կը սպանա, կը ճընջա, չունքի յազըլան փոզուլմաղ։ Աստու մատ էսա պանի մեջ կա...

Գերմանու թաքավորն ա, կը զարզանդա, քընեն կ՚էլնի, ուր ջան կ՚առնի տողալ...

«Յաման, յես զալաթ եմ էրե»,—կ՚ասա, ուրուն ուրուն։

Ու տնանցի մարթու պան տալու մեկ թուխտ ըմ կը կրա ուր փեսին, ախչըկան, կը խափա, թե. «Տեր տատծ կատարի, Լենուն ուր ծնողներաց խետ մորթել տըվի, պոծամ, կնաց»...

Ըսխըտին կողտիկ ել մարթ կը տըննա, թե.

—Մուղաթ մացեք՝ Լենու մեկ մազ չպակսա. թե չե, կ՚առա, ծե իղ ը թող ախչըքեն կը վերում...

Ժուկ-ժամանակ կ՚անցընի, Նիկոլ կը մեծնա, ուր խորից յետ կը նստի թախտ, կ՚ըլնի թաքավոր։

Աղորթ վոր, կրակ կը տնա, ախշարք կ՚ավիրա, երուն վոտ կ՚առնա, կ՚երթա՝ Նիկոլի արած զուլումքեր լեզվով չի տալա...

Լենին ել կը մեծնա, նուսում կ՚առնա, կ՚ավարտա, յեքքա մարթ կը տառնա, ու կողտնիկ ենի կ՚անցընի Ըռուսաստան, ու կը սկըսա պանվորներաց մեջ ու քծաիր-քուսուրաց մեջ կողտընիկ աշխատիլ, վոր ըռունթ-անա, թաքավորին թախտից քըցա...

Եսխըտին Նիկոլի մարթեր ետա պան կ՚իմնան ու խազար-խազարավոր մարթեր կը պռնին, կը սպանին, կը կոտորին, կ՚աքսորին, ամմա Լենին կը փախնա թաղաղան Գերմանու երկիր։

Եատաեղ ուրիշ փախնողներու խետ իրան զուվաթ կը խավքա, չուրի կը տեսնա, վոր տանակ վոսկուն խասավ, ել խամփերել չեղի, զուլում ծեր կը տա, նոր Լենին կ՚առնա ուր մարթեր ու գրանից կ՚անցընա, կը մտնա Ըռուսաստան։

Աստուծմե յեր, Լենու անուն լսելու պես թամմուզ զորք-զորապետ կ՚անցան Լենու քամակ։ Զունքի ենա վախտ զորք կը վերուն քաղքի, պանվորի մենեն։

Հենց որ Լենու քոմագ կը շատնա, մեշկ կը պըն-դանա, կ'առնա ուրուն զորք-զորապետ, համմա դո՛ւռզ կը քըշա դէպ Մոսկոֆ[1]: Ծաննելու պես Մոսկոֆ լէ, Պետրապոլ լէ, Կիվ[2] լէ, Թամմուզ, Թամմուզ քա-ղաքներ կ'առնա, Նիկոլի մարթեր կը ճարթա, կը կո-տորա, կը խըրկա, իրան Նիկոլին էլ սաղ կը պռնա:

Նիկոլ բարուն կ'ասա.

—Բա՛լի, յաղըլան փոզուլմաղ: Իմ ճակատիս ես էր կըրված, ընդուր ճակատին էլ՝ էն:

Նոր, Լենինն ա, Նիկոլի կըլոխ կը զանա, ինք կը նստա Թախտ ու ախշարք խավարական կը կա-ռավարա...

Էտա ժամանակ քյոխ-քուսուր կը խասին ուրանց մուրազին, տուք էլ խասեք ձեր մուրազին:

Ամմէն, ինշալլահ:

---

1 Մոսկվա:

2 Կիև

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ա

Աբա—տղամարդու հագուստ, բրդե վերարկու
Աբադ—շեն
Աբութ—ճգնավոր, մենակյաց
Ագա՛ր—եթե, թե որ
Ադալաթ—հավասարություն. արդարություն
Աղար-բեղար—ցավ ու չոռ
Ազիզ—հարազատ. թանկագին
Ազրայիլ—Խարայել. հոգեառ հրեշտակ
Ալամ—ամբողջ, ողջ
Ալբըհալ—իսկույն, անմիջապես
Ալման—գերմանացի, Գերմանիա
Ա՛խ յաման—հեյ-վախ, ավա՜ղ
Ամարաթ—ապարանք, պալատ
Ամմա—բայց
Ամրիքյան—ամերիկացի
Անըմ—անուն
Անխուղ—անհող
Անոր—նրա
Անունք—նրանք
Անունց—նրանց
Աջալ—որհաս
Աջամ—պարսիկ
Առդ—արհավիրք
Ասման—տես առդ
Ավազըն—փոխարենը, փոխանակ
Ավաչ գալ—աճել, զորանալ, առաջ գալ
Ատունք—գլանք
Արան—հարթավայր, դաշտ
Արխալըղ—տղամարդու հագուստ
Արխային - հանգիստ, վստահ

Բ

Բազար—շուկա
Բամ—հասակ
Բալլա-բորան—բուք-բորան
Բոլշերեք—բոլշևիկ
Բելքի—գուցե, թերևս
Բաղ—այգի
Բայրաղ—դրոշակ
Բանդիվան—ընթակա, հլու, հնազանդ
Բաշի-բալա—գլխացավանք
Բաշլայել—սկսել
Բաշևիկ—բոլշևիկ

Բար—պտուղ, բերք
Բարբաղ—ավերակ, բըլիշ ւկ
Բարեմբար—հավասար, հավասարակշիռ
Բարութ—վառոդ
Բեր—վոչխարները կթելու գործողությունը. մակաղատեղ, վոչխարների հանգըստանալու և կթվելու վայրը. վոչխարների կաթը կթելու ժամանակը
Բեխաբար—անտեղյակ
Բհար—գարուն
Բոյ—հասակ
Բոշ—դուր, դատարկ
Բոշա—բոշա, գնչու
Բուսաթ—կերպարանք. դեմք
Բո̈թուն—վողջ, բոլոր

Գ.

Գա̈դա̈—մյ տղա. ծառա
Գա̈լաջաղ—սպասելիք, գալիք, ապագա
Գա̈նջ—յերիտասարդ
Գա̈նջընալ—յերիտասարդանալ
Գարադավո—ցարական վոստիկանության ամենաստորին աստիճանավորը, городовой
Գինան—գիտեն
Գո̈—ահա, ահավասիկ. հրեն
Գո̈դալթի—աչքի տակ գտնվող, նկատի առած
Գո̈ռբագո̈ռ ըլնիս—գերեզմանդ տեղահան լինի
Գո̈լ-ջամալ—վարդ կերպարանք
Գո̈լլա—գնդակ
Գո̈լլայել—գնդակահարել
Գյուլան (ամիս)—մայիս ամիս
Գո̈ման—հույս
Գո̈վա—իբր թե, այսինքն

Դ.

Դադնակ—մահակ
Դալդա-պուջախ—ծածուկ անկյուն
Դանդալոշ—ապուշ
Դավուշ—գեվրիշ
Դա̈ստա̈—փունջ, կույտ, խումբ
Դա̈րա̈-դիվան—դատ ու դատաստան
Դարադաչ—կախաղան
Դարման—դեղ, սպեղանի
Դարվան—ժամանակ, ժամանակամիջոց. ասպարեզ
Դեխ—կողմ
Դեվլեթ-գալամ—գրիչ և թանաքաման (պարսկական)
Դըխ—դեպի. մինչեվ. կողմ
Դիլաղ—նպատակ. իղձ. խնդիրք
Դինբաշի—կրոնապետ
Դիվանխանա—դըսանյակ. դատարան
Դիրա̈կ—հենակ. սյուն
Դմշել—սատանա. ապուշ
Դովլաթ—ունեցվածք, կարողություն

Դորեսի խետ—այսուհետեվ
Դուզ—հարթություն, տափարակ, տափաստան. ուղիղ, շիտակ
Դուզ սիրտ—պարզասիրտ. անկեղծ
Դուման—մեգ, մառախուղ
Դունիա—աշխարհ, յերկիր
Դուշման—թշնամի, հակառակորդ
Դուռ—թանկագին քարի տեսակ
Դուքան—խանութ, կրպակ
Դուքանչի—խանութպան
Դրուֆ—կերպարանք, դեմք

Ե

Եթանք—գնանք
Եյման—վերստին, դարձյալ, նորից. այնպես
Եհտիմար—վտանգություն. հավատ, համոզմունք
Ենիկ—նա
Ենկանդար—այնքան
Ենոնց—նրանց
Նու—նրա
Եսկեց—գցեց
Եվար—յերեկո
Եստա—այդ
Եստոնք—դրանք
Ետվեն—հետեվից
Եքի—այգի

Զ

Զաթի—արդեն, դե, ապաքեն
Զակոն—օրենք, закон
Զաման—ժամանակ
Զանգին—ունեվոր, հարուստ
Զառբ ը զոռ—թափ և ուժ
Զարաֆաթ—կատակ
Զար-զաբար անել—փչացնել, քար ու քանդ անել
Զավթել—գրավել, բռնագրավել, խլել
Զըռ—բռի, անտաշ
Զըմմեն—ամեն, բոլոր, վողջ
Զմրութ—զմրուխտ
Զոռբա—ունեվոր, հարուստ, кулак. բռնավոր.
Զո՛ւ—ո՛ն, անդր
Զուլում—դժբախտություն, աղետ
Զո՛ր—լը, լրա
Զվռել—շրջել, պտտել, ման գալ

Ը

Ըռչպար—ռանչպար, հողագործ, յերկրագործ
Ըռհաթ—տես՝ ռահաթ
Ըսխտին—այս անգամ
Ըպոռչի—հարկահան, сборщик
Ըստոլ—սեղան, стол

Թ

Թա՛զա—նոր
Թա՛զա՛դան—նորից, վերստին
Թազացնել—նորոգել
Թազի—վորսկան շուն. բարակ

Թալաք—թակարդ
Թալանչի—ավարառու
Թալլած—թալանած, ձգած
Թալել—ձգել, նետել
Թախտ—գահ
Թամաշ անել—նայել, դիտել
Թամբեհ—պատիժ, հանձնարա-
րություն
Թամմըղ կամ թամիղ—վողջ, բո-
լոր. մաքուր
Թայֆա—խմբակ, խմբակցություն
Թավատ—ազնվական, կալվածա-
տեր (վերացի)
Թաջ—թագ
Թարաֆ—կողմ
Թեյլու (յար)—նրբին, նազիկ
Թըրաշ—կոկ, ընտիր, սափրած
Թիֆան—փոթորիկ
Թող—փոշի
Թորկել—թողնել
Թոփ—թնդանոթ
Թումբան—վարտիք

Ժ

Ժամխեր—ժամհար
Ժուկ—ժամանակ
Ժուռ գալ—փնտրել, վորոնել

Ի

Իզ ու թող—հետք
Իզին—թույլտվություն. իրա-
վունք
Իղբալ—բախտ. ճակատագիր

Ի՞մալ—ինչպես
Ինգա՛վ—ընկավ
Ինգլիզ—անգլիացի
Ինթիզար—կարոտ
Ինչ թար—ինչ կերպ, ինչ տեսակ
Ինչփիս—ինչպես

Լ

Լազլագ—արագիլ
Լաղըմ—ական
Լամս—գերմանացի, немец
Լաշ—լեշ, դիակ
Լիբաս—տարազ, արտաքին կեր-
պարանք, լիբաս
Լղամ—ականի փոս
Լոս—լույս
Լյութ—տկլոր, մերկ. խիստ չքա-
վոր

Խ

Խաբար—լուր, տեղեկություն
Խազալ—տերև
Խազեյին—տեր, хозяин
Խազնա—գանձարան. գանձ
Խալի—կարպետ, գորգ
Խախանդըրթոն—առատություն
լիություն. խաղաղություն
Խակառ—հակառակ
Խամխար—ոգնող, ոգնական
Խան—իջևան, հյուրանոց
Խանչել—կանչել
Խաս—ընտիր. բեհեզ
Խասյաթ—բնավորություն

Խավար — հավար, անհաղանդ
Խավսարական — հավասարական
Խատել — հատնել, մեռնել, սատա-կել
Խարախուշ — սև թռչուն, արծիվ
Խեյր — ոգուտ, շահ
Խետ — հետ
Խըզմաթ — ծառայություն
Խըզմաթքյար — ծառայող, սպասար-կող
Խիզան — ընտանիք, գերդաստան. ընտանիքի խղական անոք անդամները. կին, ամուսին. զավակ
Խլավուղ — սուրհանդակ
Խըլղ — ժողովուրդ
Խըշտ — նիզակ, ալին
Խոլթուխ — անթ, թևատակ
Խոյքի — հոգի
Խոշ — լավ. բարի
Խոբոտ — գեղեցիկ
Խոքնել — հոգնել
Խուս — հյուսն
Խուսութին — հյուսնություն
Խուր — հյուր
Խաֆած — ծերացած, թուլացած
Խըտ — հետ
Խըտ-խուռն — հենց. անմիջապես

Ծ

Ծար — ցար, царь
Ծե — ձեր
Ծեթ ը պետ — մանր-մունր

Կ

Կազիլե (մեչկապ) — մազե գոտիկ
Կյախ — ժամանակ
Կան (արմատ՝ կանել բայի) — պա-րանի կամ թելի՝ ձվաձև կամ բոլորակ փաթույթ, վոլորք
Կատտա — քարտ (կուս. տոմս), карта
Կամամոլներ — կոմսոմոլներ, կոմյերիտականներ
Կարմիրքեր — կարմիրներ. հեղա-փոխականներ
կեր — կար
Կըկել — կծկել
Կին — կային
Կիտնակըթոն — գիտնականու-թյուն
Կնքտեր — կանայք
Կողնիկ — գողունի, գաղտնի
Կոռծ (կյոռծ) — գործ
Կու գեր — կը գար, գալիս էր
Կուն — գույն
Կուպեռնատոլ — նահանգապետ, губернатор
Կուռ — թև. կողմ
Կուսակըթոն — կուսակցություն
Կուրսել — կորուսել, կորցնել
Կուց — կոծ, լաց
Կսեթ — հողակոշտ
Կըսա — պատմություն, զրույց, հեքաթ

Հ

Հա̈րաչ—հարկ
Հա̈լ—վիճակ, դրություն
Հալ ը զադյա—քեֆ ու հալ
Հա̈լա̈—դեռ
Համփա—ունեվոր, հարուստ, кулак
Հաշկեռթ—աշակերտ
Հաջաթքեր—գործիքներ
Հավար—ահազանգ
Հարիֆ—մարդ եյակ· համբակ
Հեյրան—մատաղ
Հիտկել—մաքրել
Հիրես—դեմք, յերես
Հո̈քմաթ—իշխանություն, կառավարություն

Ղ

Ղադար—չափ, մեծություն, քանակ
Ղադաբ—պատիժ
Ղալամ—գրիչ
Ղա̈մ—հոգս
Ղամխար—տ. խամխար· պաշտպան, թե ու թիկունք· հավատարիմ
Ղայդա—յեղանակ, կերպ
Ղաստի—դիտմամբ, դիտավորյալ, ի հեճուկս
Ղավուն—սեխ
Ղարաբինա—հնաձեվ ատրճանակ, հրացան
Ղարա խաբար—սև լուր, բոթ
Ղիամաթ—դատաստան (վերջին)
Ղըսմ—տեսակ, ցեղ
Ղոշուն—զորք
Ղոչաղ—արի, քաջ
Ղուլ—ծառա, ստրուկ, հլու
Ղուլլուղ—ծառայություն
Ղումբարա—ռումբ
Ղուս—հոգս
Ղուվաթ—ույժ
Ղուրբան—մատաղ

Ճ

Ճամխել—ուղարկել, ճանապարհել
Ճայփուն—ճապոնացի
Ճա̈ռթ—ջարդ, կոտորած
Ճժուկ—մանուկ, փոքրիկ յերեխա
Ճղել—փախչել, խույս տալ, պատռել
Ճմճրմա—ճահիճ
Ճո̈ղ—ճյուղ
Ճոչ—մեծ, ավագ
Ճով—խրձկապ

Մ

Մադա̈ր—միթե
Մադաթ—օգնություն
Մազլում—տկար, խեղճ, նվաստ
Մալ—ունեցվածք, հարստություն, կայք, գույք
Մալշուրիկ—բոլշեվիկ
Մահրում—զուրկ
Մամլաքա̈թ—յերկիր, իշխանություն, պետություն
Մայա—դրամագլուխ

Ման—կշռաքար 12 ֆ.
Մաշուր—հայտնի, հռչակված, ակնբախ
Մաջալ—միջոց, ժամանակ. հնարավորություն
Մառտին—հրացանի տեսակ
Մասսաբ—հավատ. կրոն. դավանանք
Մացել—մնացել
Մեկել—մյուս
Մեյիդ—դի, դիակ
Մե բաշ—միանգամից
Մերի—անտառ
Մըկա—այժմ, հիմա
Մըջ—մեջ
Մըռջան—մարջան
Մըրկել—այրել, խանձել
Միլլաթ—ժողովուրդ. ցեղ
Միլղազափ—դահիճ
Մող—ճանճի տեսակ
Մոշա—անտառ
Մով—խաղողի վազ
Մուլք—անշարժ կայք
Մուխաննաթ—դավաճան
Մուննաթ—խնդիրք
Մուրեխ—մորեխ
Մսըր—Եգիպտոս

Յ

Յաթուր - հնազանդ, ենթարկվող
Յաղութ—հակինթ
Յաման, յաման—հեյ-վախ, ավաղ
Յան—կողմ
Յարանալ—յեններալ, գեններալ, генерал
Յեթըմ, յեթիմ—որբ
Յեղան—երկրագործական գործիք, որով վերցնում են խուրձերը, խոտը
Յեսավուլ—գյուղական ստորին պաշտոնյան. ոստիկան
Յեսըր, յեսիր—գերի
Յերիշ—քելք, քայլվածք
Յըլխի—ձիերի երամակ

Ն

Նազընգար—անճար. խեղճ. ընչազուրկ
Նամուսթ-մըռճըմ—Նեմրութի աշտարակը քանդող մըրջյուններ
Նաչար—խեղճ. տկար
Նասլենի—ժառանգ, наследник
Նաֆ—շահ
Նով—նավ (ջրաղացի)
Նոքար- ծառա

Շ

Շամաթա—աղմուկ. կռիվ
Շայի—հինգ կոպեկանոց
Շափաղ տալ—ճառագայթել
Շափախկա—գլխարկ, шапка
Շերիկ—կիսու, կիսարար. հալալ բաժին
Շիշ—շամփուր
Շիրա—քաղցու

Շնուխք—շնորհք
Շողում—շողոքորթ
Շուխ—փափկասուն

Ո

Ոգա—գյուղական սենյակ
Ոզգա—այլ. օտար
Ոզու—զորք. բանակ
Ոսըմ—ուսում
Ումբր—կյանք
Ումուդ—հույս
Ուրանց—իրենց

Չ

Չալիշ գալ—տանջվել
Չամաշուր—սպիտակեղեն, փոտաշոր
Չավ անել—տարածել, ի լուր մարդկանց հայտարարել
Չարխի փայաք—ոզանավ
Չափ (լեզու)—լեզվանի, լեզվագար
Չաք—գզրարի գործիքը
Չաքըջ—մուրճ
Չին-Մաչին—Չինաստան
Չխո—արդեն. հո, ապաքեն
Չնգըլ—քարքարոտ վայր
Չորան—հովիվ
Չունքի—վորովհետեվ, դե
Չռը—մինչեվ, ց
Չփլախ—տկլոր. աղքատ

Պ

Պախ—բան
Պախիզ—պարտեզ
Պազրեխ—բազեղ
Պայս—բայց
Պառտիա—կուսակցություն, партия
Պոշ—դատարկ. զուր
Պոպոզ—սրածայր գլխարկ
Պուլոր—բոլոր
Պրիստավ—պրիստավ, пристав
Պըռնկի—բռունցք

Ջ

Ջարախանա—զինանոց. անպետք զենք
Ջանվար—թանկագին քար. գոհար
Ջահտ անել—ջանք թափել
Ջամաթ—ժողովուրդ, հասարակություն
Ջամալ—կերպարանք, տեսք, դեմք
Ջամդակ—դի, դիակ
Ջամդար—ժանդարմ, жандарм
Ջան—մարմին. հոգի
Ջանպախ—իր ջանը պահող, խընայող. լոդր, դատարկապորտ
Ջառ—կոչ, ազդ, հայտարարություն. մունետիկ
Ջընդը—պատառոտված, հնամաշ. ցնցոտի
Ջըվաբ—լուր. պատասխան
Ջուն—ջին, չար վոգին

Ռ

Ռահաթ—ժողովուրդ. հպատակ

Ռես—գյուղապետ. քյոխվա
Ռոտ—ձող (шест)

Ս

Սաբաբ—պատճառ
Սաբր—համբերություն
Սաչնիկ—ձիավոր, всадник
Սալըղ—լուր, տեղեկանք, տեղեկություն
Սա՛նհաթ—արհեստ
Սաղ ը սոլ—աջ ու ձախ
Սամյելի—սամում (քամի)
Սավետ—խորհուրդ, совет
Սապո՛գ—փոտնաման, կոշիկ, сапог
Սաջ—կասկարա
Սարքա՛ր—պետ, հսկիչ, վերահսկիչ
Սարֆա անել—լայեղ չանել
Սել—հեղեղ
Սելավ—հեղեղ
Սեռսուփ—անարատ, մաքուր
Սեյր—զբոսանք
Սըթամ—դժբախտություն, ցասում
Սըհաթ—ժամ. ժամացույց
Սըֆաթ—յերես, դեմք
Սթար—դադար, հանգստություն. ապաստան
Սիթամ—տես սըթամ
Սիլահ—զենք
Սլուգ—տղրուկ
Սովգա՛ն—սիրական
Սորա—այնուհետև, հետո
Սուրաթ—պատկեր, նկար

Վ

Վազ—ваза (աման)
Վազիր-վաքիլ—պալատական պաշտոնյաներ
Վախլուկ—վախկոտ, յերկչոտ
Վախտ ը սաղաթ—ժամանակ
Վա՛յ լըմըն—ա՛խ յաման
Վավեյլայի—բան և թե, յեթե վոր...
Վարավուրդ անել—նայել, զննադել, կշռադատել
Վարուց կամ վարոց—ճիպոտ
Վարսալամ—վերջապես
Վաքիլ-ապեկոն—խնամակալ, опекун
Վեյել—վայելել
Վերան—ավեր
Վըլվըլա—անհանգստություն, իրարանցում
Վըրե՛—ինչու
Վլաստ—իշխանություն, власть
Վոյ—ով
Վուր—վոր

Տ

Տաղ—ճաղատ (գլուխ)
Տակամանս—տակամանց, տակից գործող, գաղտնի մի բան անող
Տանես են—տանում են
Տա՛նց—դրանց

Տանք—ղրանք
Տա՛տ—դատ
Տը—պետք է, պիտի
Տո՛րան—տես դուրան

Ց

Ցան—փթիր, աթար, աթարի մանրունք

Փ

Փաթավա—հնամաշ, քրքրված, տձև վոտնաման
Փա՛թըսդա—բատիստ, батист
Փալթո—վերարկու, пальто
Փախ ը փախ—փախն փախ, խուճապ, գաղթ
Փախըլթոն անել—նախանձել
Փահլեվան—կտրիճ, զորեղ, հզոր, ըմբիշ
Փայիզ—աշուն
Փաչա-փաչեք—ազդր
Փա՛տ—փայտ
Փա՛տաա—քլունգ
Փափաղ—մորթե գլխարկ
Փեշ - քղանցք
Փթիր—գոմաղբ, աթար
Փշտով—ատրճանակ
Փչաներ—փչանար
Փողան—փողոց
Փոստ—մորթ

Ք

Քած—եզ (արհամարհական տոնով)
Քամակ—զավակ, կռնակ, թիկունք
Քա՛նց—ինչպես, վոնց վոր
Քանքան—ականավոր
Քաշբըշան—քաշքշուկ, կողոպուտ
Քար ը քյասար—կտրիճ
Քա՛ռը-քո՛սուր—ազքատներ, խեղճ ու կրակ մարդիկ
Քա՛փըր—անխիղճ, անհոգի
Քերեկան—քերականության գիրք
Քըդակ-պոպող—սրածայր գըլխարկ
Քոլ—թուփ
Քո՛մուր—ածուխ. սև
Քո՛մակ—ոգնություն. ոգնական
Քո՛մաչի—ոգնական
Քոս—մաշկային հիվանդություն
Քո՛ք-բինա—արմատ-բուն, տուն-տեղ
Քո՛լ—մոխիր
Քո՛լլի-քո՛լֆաթ—վողջ ընտանիքը
Քո՛լլուգ—մոխրանոց, աղբանոց
Քո՛լխան -մոխիր. մոխրանոց. փոշի, փոշեկույտ
Քուլֆաթ—ընտանիք
Քուր ը քուլֆաթ—տուն ու տեղ. ընտանիք
Քուչա—փողոց, նրբանցք

Ֆ

Ֆահլա—մշակ, բանվոր, աշխատավոր
Ֆաղիր—չքավոր

Ֆանդ ը ֆիլ—հնարք, հնարամտություն, խարդախություն

Ֆուղարա—խեղճ, աղքատ մարդիկ

Ֆրանգսըզ—ֆրանսացի

Ֆռանգստան—Ֆրանսիա

Ֆոթուն—փոթորիկ

Ֆրենչ—զգեստ. френч

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Երկու խոսք—խմբագրության	5
Լենինը ֆոլկլորի մեջ—Կ. Մելիք-Օհանջանյան	7

ԼԵՆԻՆԸ ՀԱՅ ՖՈԼԿԼՈՐԻ ՄԵՋ

Լենընու խաղ	61
Սավետի «լե-լե»-ն	63
Լենու խաղ	65
Մըր Իլյիչի խաղ	67
Գա՜, պա՜, պա՜, Լենի՜ն բալա...	70
Լենինի յարը	71
Գէրմ կեղին արեց պակուն...	73
Լենինի ջանիման	75
Լենինի խաղը	77
Լենինի ջանիմանը (ժող. պարերգ)	78
Լենինու խաղ	80
Լենին ասավ.—Կը տամ ծե խաց...	83
Ունինք, չունինք մեկ Լենին...	85
Երեկ բատրակ էյի...	86
Լենի չափաղ քինց արևվ...	88
Գնանք սարի քամակը...	90

Եջ

Լենինի յերգը 92
Լենինի յերգը 95
Լենինի յերգը 96
Լենինի յերգը 98
Լենինի դաստանը 100
Լենինի յերգը 104
Լենինի յերգը 106
Արևելք, արևմուտք, հյուսիս ու հարավ... . . 108
Բուրժուական ազգերի հետ կռվեցիր... . . . 111
Լենինի տաղը 113
Լենինի յերգը 115
Լենինի յերգը , ... 116
Լենինի մահը 119
Յենգի զաման 120
Լենին փաշա (նաղըլ). ասաց՝ Գարո Բարցումյան, գրի առավ Գեղամ Թարվերդյան . . . 123
Լենու խաբա̈թ. ասաց՝ Սահակ Ապրոյան, գրի առավ Գեղամ Թարվերդյան 139
Լենինի խեբա̈թը. ասաց՝ Նուշո Գրիգորյան, գրի առավ Գեղամ Թարվերդյան 151
Բառարան 161

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0041051

[1n]

A F
6218